



60. 600
60. 60
40. 300. 400
40. 900. 500

ԳԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ

ՀԱՅՈՑ

ԲԱՐԵԿԱՄ ԵՐԻՏԱՍԱՐԴԻԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ե | 8
5 | 4

Ա. Ա. ԶԻՒՆ ՆՈՒՔՐ

Ա. ՀԱՅԿԱՋՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ

ԳՐԵԱՑ

Ա. ՍՄԲԱՏ ԳԱԲՐԻԵԼԵԱՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊԵՏԱԺԵԱՆ

1879

Ա. Զ. Դ

Բարեկամ Երիտասարդաց Ընկերութիւնս այս տետրակի նիւթն յանձնեց իւր Արժանայարգ անդամակցին՝ Սմբատ Էֆ. Գալրիէլեանի = Տետրակին պարունակութիւնն իւր գաղափարաց համաձայն, եւ Հայ Երիտասարդաց Ներկայ Վիճակին օգտակար գտնելով, ուրախութեամբ ի լրյա կ'ընծայէ զայն :

Փետր. 28. 1879 յԱկն:

Գ Բ Ա Գ Ի Բ

Ա. Ներշան Գաղթիւնան

Ա. Տ Ե Ն Ա Պ Ե Տ

Մ. Մահմէտ Ջամակունան

معارف عمومیه نظارت جلیلستان رخصیله
Համայնքա հասարակաց կը նույնական պաշտօնարանին

5. Տա Տա Տա

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ

ՀԱՅՈՑ

ԿԱՆԳՆԵՆՔ ԶՀԱՅ

Եղբայրներ,

Մեր հայր Հայկ է . աղասութեան առաջին ախոյեանը աշխարհի վերայ և Հայութեան սերմը աղասութեան սէլն է , ով որ աղատ չխօսիր , նու չի Հայ , և ո՞վ որ յաղատախօս բանից կը խորշի , կ'ուրանայ իւր հայութիւնը : Ես հայկաբար պիտի խօսիմ . պատրաստ եղքը և գուք ի լուր ճառիս հայկաբար :

Ուրախ եմ որ պատմական ջահիւ լուսաւորեալ է Հայուն ծագումը . այս լոյսն ալեոր Հայուն այնպիսի փառք է , որով հասակակից ազգերն կը գերազանցէ : Դարուց անդունդին մէջ տեանել իւր արմատը , և այնպիսի ազնիւ ու փառաւոր արմատ , այս արդարեւ գերապանձ առաւելութիւն է :

Եւ ի՞նչ երանաւէտ է Հայուն նախկին վիճակ : Եղեմաշունչ քաղցրասղոսի հովիկներ կը չնշեն : Հայուն մանկութիւն ի գիրկս երանութեան կ'որորի : Հայուն երիտասարդութիւն ի գահոյս փառաց կը բազմի : Սակայն , ո՞հ , կու գան դառնութեան օրեր : Հայութեան բարձրաբերձ ճիւղեր , ամբարտաւանութեան և նախանձու մըրիկներէ վարեալ , զիրար կը ջախջախին . կը բեկաի հայութիւն : Ոչ ևս Հայուն ձեռք գաւաղան իշխանութեան կը բռնեն , այլ շղթայք գերութեան կը կապեն զձեռս նորա : Ո՛չես կրնայ կալ Հայն ի հաստատուն կայի . յարձակմանց բուռն հողմունք կը տատանեն զնա . մանաւանդ թէ և ինքն աշխ զձախն կը վիրաւորէ : կը քալէ ելսէջուտ ճանապարհէ , կը յառաջէ խիտ առ խիտ հարուածոց տակէն , գետահոս արեամբը կը ներկանէ շաւիղն , շատ անդամներ կը կորուսանէ , տեղ տեղ կը խլեն զլեզու նորա ձեռք բռնութեան և , բարէ , ձեռք հրապուրից . սակայն ոչ հարուածք ի թագամերկ գլուխն և ոչ որոգայթք յուսան



չկարեն ի սպառ ջնջել զնա երկրի երեսէն ։ Հայը կը հասանէ յիննեւ տասներորդ գար ։ Դեռ թշնամոյ անդութ ուսք հեք Հայուն լանջաց վլայ են , դեռ համարձակ հաւաշելու թոյլ չկայ ։ Սակայն չանկանիր Հայն ի յուսոյ , որ է կարեոր տարր ուժոյ . սակայն նորա կըծոց տակ հեւացող շունչն հայկեան է . նորա կըծոց մէջ Հայկայ ոգւցոյն երկնավառ բացերէն կայծեր կան հրդեհելի . աստուածաշունչ հովեր կընան վառել հոն ոէր աղատութեան և ճշմարտութեան ։ Եւ յայնժամ այն կուրծք հայկաբար կը ճեղքեն հակընթաց հոսանս , որ զնա կը փարեն ի կորուստ , և կը դիմեն յայն կայան , զոր ցարդ զՀայն ի կեանս պահող նախախնամութիւնը առհմանած է նման :

Եղբայրներ , գործենք ի փրկութիւն Հայուն , ընենք զկարելին մեր ի վերականգնումն Հայուն :

Հայը խը նախնի փարախէն ցրուեալ է իրրե հօտ մատնեալ ի ձեռս գայլոց և առխւծուց . կարելի՝ է մեղ վերստին հաւաքել զայն ի փարախն , յայն արօտ պարարտ , ուր երեւմն գերերջանիի կենցաղ վարեցին հայ գառինք հայկազն հովուաց առաջնորդութեամբ , և որոյ քաղցր արդասիք մնուցին զգեղափթիթ մանկութիւն Հայուն . յայն երկիր քաջարեղուն որ մեր քաջաց և շահատակաց արեամբ ուողեալ է , ուր են բարձրարերձ լերինք , ահեղասահ գետք , զեղածածն լիճք , արդասաւէտ հոլիտք , մարդաղարդ բլուրք և կանաչագեղ դաշտորայք , յորոց ոչ ինչ կրնայ ջնջել ժամանակին ձեռք համայնաւեր . յայն երկիր որ անդին թանդարան է , ուր պահուած են ուկրուտին մեր Հայկ հօր և առաքինի զաւակաց նորա . յայն երկիր որ թատր է քաջագործութեանց , ուր փայլեցան մեր իշխանք , գոռացին թագաւորք , խիզախեցին շահատակիք , յաղթեցին քաջք , շողացին սուսերք , շառաչեցին զէնք , հնչեցին երդք :

Հայրենիք կը նշանակէ աղդին տունը . զանձն նախ գարսանել պէտք է , և ապա զտուն կանգնել կամ որոշել : Եղբայրներ , պարտ է նախ Հայուն կեանըն ապահովել գարսանելով զիիրաւոր սիրտն , զուղեղն և զիեղուն : Հարստահարութիւն և գերութիւն , այո՛ , գժպէի և սոսկալի են , սակայն շղթայք մնաց ահեղագոյն են , շղթայք խաւարի մահացու են :

Որդիք Հայկայ , զգնութեամբ խորհինք , ո՞ւր է Հայուն վերք , ո՞ւստի կ'աղբերանան նորա աղէտք , ի՞նչ միջոցներ կամ նեցուկներ կարեոր են զՀայն կանգնելու համար :

Քանի՛ ըղձալի է ինձ այս մասին նպաստել աղդիս , արդեօք չե՞մ կինար գաղափարաց վերայ քանի մի նշոյլ սփուել :

Ո՛վ լոյս , ցոլացո՛ գրչէս ինչ ինչ ճառագայթներ , որպէս զի և ես

' ի վերականգնումն Հայուն կարեոր գործ մի գործած լինիմ :

Որդիք Հայկայ , Հայը պէտք է որ զօրանայ որպէս զի կանգնի ։ Աշխարհի վերայ անհատի և ազգի գոյութիւնը երեք տեսակ զօրուաթեանց վերայ կը յենու . մարմնական , իմացական և բարյական : Այս զօրութիւնը որչափ մշակուին , ազգի գոյութիւնն ու կեանքն այնչափ կ'ապահովին և կը բարւոքին :

Մտածենք անհատի վերայ . ի՞նչ է նա , ի՞նչ կը լինի և ի՞նչ եղանակաւ :

Մարդ իւր կենաց սկզբնական հասակին մէջ կարողութեամբ ստորնագոյն է քան զանբան կենդանիներ , սակայն չյապաղիր քան զնոսա յոյժ վեր բարձրանալու : Է՞ր անբանը կայ կը մնայ այն աստիճանին վերայ ուր ի ծնունդ կու գայ , մինչ մարդ օր քան զօր կը բարձրանայ : Այնու զի միայն մարմնական այլ և մոտական զօրութիւն կ'ընդունի տակաւ . այն երախայական խեղճ և անզօր երկութիւն տակ պատկեր Աստուծոց կը թաքչի . կաղմութիւն , որ ընդունակ է անչափ զարդարման :

Խեղճուկ երախային աչք որ այսօր զսենեակ ունին սահման , քանի մի տարի յետոյ կընան անդը քան զակն արեւու տարածել զհայեցուած : Ապիկար մանկիին որոյ տկար ճիչ այսօր անբելի է , և որ անբաւական է ի բարբառ , յետ ոչ բաղում ամաց կը լինի ճարտասան , որոյ հոգեյոյլ ձայն փոթորկի նման զբաղմութիւն ունինդրաց կը տատանէ իրը ալիք : Այսօր կը մնայ ուր կը դնեն զնա և անկարող է փոխել զոտն յոտանէ , վաղիւ կը նկրափ ի բարձրութիւն արքայական գահոյից , ուր և կը բաղմի :

Եւ ի՞նչ եղանակաւ այսպիսի զօրութեանց կը հասանէ խեղճ մարդը :

Այն անկար և ճղճիմ երախայն ոնի բերան , ստամնքս և այլ գործարաններ . իւր մօր ստիճնքէն և մեծ մօր կամ երկրի ծոցէն պատրաստուած մնունդ կ'ընդունի , կ'ածի և կը զօրանայ մարմ նով օր ըստ օրէ : Ունի նա բանականութիւն , ներքին ընդունարան հոգւոյն մէջ : Մարտիչ գործարան , աչք , ականջ և այլ զգայարանք իրը երակներ գաղափարական մնունդն անդուլ կը տանին յընդունարան մնայն , ծծելով ի շրջակայ երկութից , ի գործողութեանց և ի խօսուածոց : Ահա այս եղանակաւ մարդն ապիկար կը մեծնայ , կը զարգանայ և կը զօրանայ իմացական և բարյական զօրութիւն ստամնալով օր ըստ օրէ :

Մարդկային աղդն ունեցաւ բիրա զգայականութեան կամ մարմ նական զօրութեան գար . ունեցաւ անհեթեթ առասպելաց կամ ե-

րեւակայական զօրութեան դար . ունեցաւ վիլխառվայութեան կամ ճշմարտութիւնը զգօն մտածութեամբ վինտուելու դար : Բազում անգամ անկառ և կանգնեցաւ . այս կամ այն զօրութիւնը տկարացաւ և վերատին զօրացաւ . այս կամ այն զօրանալու եղանակն ընդունեց և մերժեց : Դիտողաթեամբ զօրացաւ միտքը , և որչափ զօրացաւ , այնչափ ուժգին քաշեց և ծծեց իմացական զօրութեան այն սնունդը զոր Արարիչը իւր արարածոց մէջ պահած է իբր դանձ լինդրուցաց համար :

Այսօր աշխարհի վերայ մարմնական դարմանոյ համար բժշկական վարժարաններ կան , բժշկական բազմաթիւ դրեան , հիւանդանոցներ , գեղարաններ , այլովքն հանդերձ . ասոնք երբեմն չկային : Մարմնական , իմացական և բարոյական զօրութիւններն մշակելու համար կան տպագրութիւն կամ մասնուլ , վարժարաններ , լրագիրներ , անհամար գիրք , թանդարաններ , եկեղեցիներ , թարոններ , այլովքն հանդերձ :

Որդի՛ք Հայկայ , Հայուն զօրութիւնն ու կենդանութիւնը ահաւասիկ այսպիսի միջոցներով կրնայ յառաջ դալ : Սակայն ազգ դարմանել ի՞նչ ծանր և մեծ դործ է . դեղը պատրաստելու համար ո՞շափ ուշիւ և զգօնութեամբ պարտ է խորհիլ : Ի՞նչ դեղ պէտք է , ի՞նչ կարեւոր նիւթ այն բաղադրութեան համար անհրաժեշտ է , ո՞ր դեղին որչափ խառնել պէտք է , ի՞նչ կարգաւ զանազան դեղեր մատուցանել պարտ է , և մանաւանդ ի՞նչ է հիւանդութեան բուն պատճառը , ուր կը դանուի ախտին արմատը , ո՞ր անդամն է տկարութեան կեդրոնը :

Ահա իմ յանդուգն նպատակն է այսպիսի՝ ինդրոց վերայ խորհրդածութիւններ յառաջ բերել , աղնիւ եղբարք իմ :

ԳԼՈՒԽ Ա.

ՄԱՐՄՆԱԿԱՆ ԶՈՐՈՒԹԻՒՆ

Մարմնական զօրութիւնը պահելու և զարգացնելու միջոցներն , արտաքոյ բժշկականին , մարմնական դաստիարակութիւն կ'անուանին միահաղոյն :

Մարմնական դաստիարակութեան կարևորութիւնը քան զիմացականն և բարոյական վաղադոյն զդալի եղած է աշխարհի վերայ .

այնու զի հայրենիքը , որոյ համար կ'ապրէին աղինք , պաշտպանել կամ ընդարձակել ուղեր են , և առ այս ակներեւ պէտք են մարմնական զօրութիւն ու կրթութիւն :

Եղիսպտոս , ինչպէս ուրիշ ճարտարութեամբք , նոյնպէս զինուուրական օրինոք և հրահանգոք նշանաւոր էր : Մարմինը կրթելու արուեստին համար թօլէն Գաղղիացի հնախօսը կ'ըսէ . «Քաջածանօթէր նախնեացն , և գիւտ Եղիպտացւոյ ։ Հետի ընթացք , ձինթացք և կառարշաւոք սքանչելի ճարտարութեամբ լինեին յԵղիպտոս , և չէր ուրեք ընդ տիեզերս ընակր այրուձի քան զԵղիպտացւոյն ։»

Սպարտացի մանկակին գրեթէ պատերազմի մէջ կը ծնանէին , մարմնական խստ դաստիարակութիւն կ'ընդունէին , կը վարժուէին ի ծարաւ և ի քաղց , ի աօթ և ի ցուրտ , ի ծանր աշխատութիւն և ի ծեծ տաժանելի : Սպարտացիք չունէին այլ ինչ զբաղում , բայց մրայն մարմնոյ կրթութիւն ի պատերազմ :

Աթենացիք , և գրեթէ Ելլադայի ամենայն ազգերն , լաւ հոգ կը տանէին մարմնական կրթութեան : Նոյա կրթութիւնք էին պար , երաժշտութիւն , որս , զինավարժութիւն և հեծելութիւն :

Նոյա խաղերն ևս նշանաւոր էին , մեծ չքեզութեամբ կը կատարուէին քանի մի տարին միանգամ , և ողիմպիականն ամենէն հռչակաւորն էր . ամէն չորս տարին մի անգամ կը կատարուէր մեծ հանդիսիւ . և ոչ միայն Յունաստանի ամէն կողմէն հանդիսատեսք կու գային հոն , այլ և հեռաւոր երկիրներէ : Այսպիսի բազմամբոխ հանդիսի մէջ մրցանակ առնուլ ի հարկէ մեծ գրդիռ էր Յոյն երիտասարդաց , որ հանապազորդեան կրթութեամբ պատրաստուէին ի մրցումն , այն է՝ ցաթկել , վազել , արդնընկէց լինել , գիրկ ընդ խառն մրցել , ձիավարել , կառարշաւ , և այլն :

Ազգաց այսօրինակ մարմնական կրթութիւնները զարմանալի արդիւնք ունեցան : Պատերազմի մէջ անվեհեր և յաղթող եղան : Մարմնոյ զօրութիւն , քաջողջութիւն և բարեձեռութիւն ունեցան , և այն կրթութիւնք անտարակոյս նոյա մտաւորական զօրութեան վերայ ալ մեծապէս ազգեցին :

Եթէ ի վաղ ժամանակս ազգեր մեծ , և ոմանք չափազանց կարևորութիւն տուած են մարմնական կրթութեան , և անփոյթ եղած են մտաւորականին , պատճառն այն է որ , գիտութիւնք դեռավիթիթ և աղքատ ըլլալով մոտաց զարդարանք և զբօսնք կը համարուէին մանաւանդ քան թէ պիտոյք , և որ , ի պատճառս առաւել կամ նուազ բարբարոսութեան , մարմնոյ կրթութիւնը կը տեսնէին և զայն կը յարգէին իբրեւ կարեւոր պայման յաղթու-

թեանց և փառաւոր աշխարհակալութեանց ։ Զարդիս , մոռաւոր կրթութեան պէտքն զգացած են աղդք՝ իրենց քաղաքակրթութեան աստիճանաւ . սակայն վասնդ կայ , մանաւանդ մեղ նման աղդի , որ այն ինչ կը բանայ զաշս իւր ի թմբութենէ , վասնդ կայ , կ'ը սեմ , որ հակառակ ծայրն անցնելով՝ մարմնականին անփոյթ լինի կամ ըստ արժանայն հոգ չտանի ։

Ի վաղ ժամանակս մարդիկ առողջ լինելու համար յատուկ մարմնամարդութեան անկարօս էին կրնանք ըսել . քանդի զբաղմունք մարմնաւոր էին : Սակայն յորմէ հետէ չոդեշարժ մեքենայք բաղմացան , և մարմնոյն մոռաւրական ոյժն քան զիւր մարմին զօրաւուրագոյնն սկսաւ ընել դործի , յորմէ հետէ քաղաքականութիւն ծաղկեցաւ և նստողական կենաց պաշտօնք բաղմացան , յորմէ հետէ դպրոցական կենաց և գրական պարապմանց պէտք առաւելան , մարմնական դաստիարակութեան աւելի կարերութիւն տրուեցաւ :

“ կրթել պարտ է զմարմին , ” կ'ըսէ կիկերոն , “ զի հութեամբ արբանեկեսցէ խորհրդոյ և բանին ի դործել և ի կրել զաշխատութիւն : ” Մարմինը հոգւոյն արբանեակն է , այս արբանեկին միջոցաւ կ'առնու իւր զօրութիւնն , և կ'արտայայտէ ու կը դործագրէ զայն , ուստի մարմնոյ կրթութիւնը հոգւոյն համար մեծապէս կարերո է :

Մարդկային միաքը ի զօրութենէ զուրկ կը մնայ առանց մարմնոյն օդնութեան : Մարմնոյ զգայարանք են աղբիւրք գաղափարաց և ծանօթութեան , և թէպէտ միտքը ներքսածին գաղափարներ կ'ունենայ առանց մարմնոյն միջնորդութեան , սակայն ասիկայ չլինիր մինչեւ որ արտաքսածին գաղափարօք չհարստանայ միտքն ու չարթըննայ : Յայտնի է ուրեմն , թէ գաղափարաց ճշդութիւնը զգայարանաց առողջ վիճակէն կախումն ունի , և հարստութիւնն ալ անանց ոյժէն և տոկուն դործունէութենէն : Աչաց կուրութիւնը գրեթէ մոռաց կուրութիւն ըսել է , աչաց տկարութիւն՝ մոռաց տկարութիւն : Աչքը փակել մոռաց զօրութեան մէկ աղբիւրը փակել կը նշանակէ :

Հաստատապէս կրնանք ըսել թէ մոռաւոր դաստիարակութիւնը մարմնոյն առողջութեան աստիճանակից պիտի լինի , կամ մոռաւրական վիճակը մարմնաւորէն մեծամեծ ներդործութիւններ կը կրէ : Վերջապէս առանց մարմնոյ առողջութեան չիք մոռաց առողջութիւն : Եթէ մէկուն ջիղերը տկար են , ուղեղը տկար է , ուստի անբաւական է մոռաւրական զօրաւոր աշխատութեան , հետեւապէս անընդունակ քաջ դաստիարակութեան : Ուրեմն զմարմին քաջ խնամել և կրթել պարտ է :

Մարմնոյն առողջութիւնը կարեռ է որչափ ի զօրութիւն և ի կըրթութիւն մտաց , նոյնչափ հարկաւոր է զմիտս գործածելու համար ի շինութիւն անձին և աշխարհի : Մեր գաղափարներն կամ մտաց խորհուրդներն առանց մարմնոյ միջնորդութեան անկարելի է մեղ բացատրել կամ արտայայտել , և ի բարւոք արտայայտութիւն բարւացատրել կամ արտայայտել , մի ամենայն ուսումնական և բարոյական պատրաստութիւն ունենայ , սակայն եթէ մինչեւ զանոնք ստանալը կորուսանէնէ զառողջութիւն , անկարող է լաւ քարոզիչ , վարժապետ կամ վաստարան լինել : Խօսքի մը զօրութիւնն , այո՛ , փաստէն է , սակայն ոչինչ նոււազ նաև ի զօրութենէ մարմնոյն , որով թէ յատենարանելն և թէ ի խօսեն ազդու և զօրուոր արտասանութեամբ պիտի արտայայտէ զիմաստս : Մարմնոյն այլ անդամոց , ձեռաց , աչաց , գլխոյ , և այն շարժմունք , ձայն և շունչ , մարմնական դաստիարակութեան են անկ , և ասոնք խօսքին զօրութիւն են :

Մենք այնպիսի պաշտօնի կամ գործոյ վերայ խօսեցանք օրինակի համար , որ մտաւորական կրնան համարուիլ : Եւ եթէ այսպիսի պաշտամանց մէջ մարմնոյն կրթութիւն և զօրութիւն կարեռ է , ո՞չչափ յայտնապէս այն արուեստից մէջ , որ մարմնոյ ոյժն բացարձակ կը պահանջէն :

Որդիք չայկայ , ոչ միայն ճշմարտասէր և աղտատասէր եղէք իրրւ զհայր ձեր , այլ և զօրաւոր և ճարտար մարմնով իրրւ զնա : Մանաւանդ դուք , որ զուտումնական ասպարէղ ընտրած էք ձեզ , քաջու զիք մարմնական կրթութեան , մի համարէք թէ կը վասնեք ձեր ժամանակ , եթէ օրը երկու երեք ժամ զոհէք մարմնական կրթութեան և զօրաւոր աշխատութեան :

Երբ բաւական աշխատութեամբ ուղեղը կը խոնջի , դադարել պարտ է : Կամքի մորակն եթէ զխոնջ խմացականութիւն ի գործ վարէ , և խմացական և մարմնական կարողութեանց կը վնասէ : Ծնդհական պարապ տալ աշխատութեան ի հանդիսաւ ուղղոյ օդտամատց է թէ՛ մոռաց և թէ մարմնոյ ։ Հանդուցեալ և կազդուր եալ ուղեղն կրնայ առաւել ժրութեամբ և օգտակարութեամբ գործել :

Այն որ մտաւոր աշխատութեամբ կ'անցունէ օրերն առանց մարմնոյ մարդից , ի հարկէ տկարանալով նշաւակ լինի այլ և այլ հիւան գործեանց , յաճախ հարբխոյ և դժուարանալութեան , և այն . ասոնք օրեր պիտի կողովատեն ի նմանէ , որ կը դժկամակէր ժամեր զոհէլ : Անհանձար է այսպիսի խնայութիւն ժամանակի :

յամանակի այսպիսի խնայողութեամբ մարդ իւր կեանքէն ոչ թէ միայն ժամեր այլ և թերեւ տարիներ պիտի զոհէ՝ կեանքը կարծեցնելով վաղահաս մահուամբ :

Ուսումնականը պարտի այնպիսի խմաստութեամբ խնամել և դօրացունել զմարմին, որ քան զայլ ուժեղ և երկարակեաց լինի ։ Գիտական ասպարիզին մէջ նշանաւոր յառաջդիմութիւն ընելոյ և օգտակար արդիւնք թողլոյ համար առողդ երկարակեցութիւն պէտք է :

Եթէ մեծամեծ գիտնոց ցանկը նայինք, պիտի աեսնենք որ նորա մեծագոյն մասամբ երկարակեաց եղած են ։ Եթէ նոցա կենա ապրութեան հայինք, պիտի գանենք որ մարմնական մարզից և աշխատութեանց հոգ տանող եղած են ։

Ո՛ երիտասարդք, պարտինք ազգին մէջ կրթութեան այս ճիւղոյն նկատմամբ լուսաւոր գաղափարներ տարածել ։ Այս մասին ճնողք և դասաստուք մեծ գործ ունին ։ Անցարմար չէ աստէն յուշ առնել երիտասարդ վարժապետաց, որ պարտ անձանց վարկանին խնամ տանել աշակերտաց մարմնական դաստիարակութեան ։ Առ այս երկու կարևոր միջոցներու, որոց ոչ սակաւք անփոյթ են, ու շաղրութիւն կը հրաւիրեմ, 1. մարմնամարզութեան, և 2. մարդակազմութեան ։

1.

ՄԱՐԴԱՐԱԴՈՒԹԻՒՆ

Աղդային վարժարանաց մէջ առ հասարակ կարեորութիւն տրուած չէ մարմնական մարզից, ասիկա մեր արդի դաստիարակութեան դրութեան մէջ մեծ թերութիւն է ։ Շատ դասաստուք կը համարին թէ վարժարանին ուսմանց հետ մարզից կարեորութիւն տալով դմանկալին ի խաղամութիւն զառածանելու վտանգին մէջ կ'անկանին ։ Արդէն նորա կը խաղան, այն մարզ է նոցա, և որպէս զի չափը չանցին, վարժապետք հարկ կը համարին պատուիրել որ արդայք չխաղան, որպէս զի գէթ չափ պահեն :

Ոչ, վարժապետք ճշմարտասէր և անաշառ պարտին լինել, և գիտնալ թէ զոր ինչ բնութիւն կ'աղդէ առ հասարակ՝ այն օգտակար է ։ Թող ըսեն աշակերտաց թէ խաղն տղոց կարեոր է իրեւ երկրորդ հաց, և ոչ միայն չարդելուն, այլ և հրամայեն որ խաղան, չափազանցին վնասուցն ևս խելամուտ ընելով զնոսա :

Ի՞նչ պէտք է տղէտ ձևանալ բնութեան օրինաց ։ Այս վտանգաւոր է վարժապետաց աղղեցութեան ։ Ոչ միայն տղիտութեան կասկած կու տայ, այլ և անիրաւութեան ։ բնութիւնը կ'ըսէ տղուն, «խաղա» ։ վարժապետն իրաւոնք չունի ըսելու, «Մի խաղար է» ։ վարժապետը բնութեան օգնականն է ոչ թէ հակառակորդը ։ ուստի ոչ թէ բնութեան մղումներն կասեցնել ջանալու է, այլ կարգաւ կանոնաւ վարել ։ վարժապետ մը որ կ'երինչի թէ խաղալու թոյլառութեամբ տղայք կը զեղծանին, իւր տկարութիւնը կը ցուցին այնպէս կառավարէ զնոսա, այնպիսի կարգադրութեամբ գործել տայ նոցա, և մանաւանդ զուսումն քաղցրացունէ ի ճաշակ նոցա, որ վարժարանէն դուրս ալ աշխատին ուսման :

Թէ և տղայք արտաքոյ վարժարանի խաղան, ասիկա մարզից կարեռութիւնը չբառնար ։ Մանկուոյն միտքը չզօրեր քանի մի ժամ անդուլ աշխատիլ ։ յետ խոնջելոյ պարապ և մարզք պէտք են, եթէ ոչ կը ստիպուին տղայք հանգչել, շուրջ նայել, խօսակցել և այն, և այնուհետև ով որ կը հրամայէ նոցա զաշխատութիւն շարունակել՝ մտաց օրինաց անդիտութիւնը կը յայտնէ, և ով որ զնոսա կը պատժէ՝ կ'անիրաւի :

Մարզից օդուտներէն զոմանա կընանք համառօտիւ ի համար արկանել :

1. Տղայք մարմով կը զօրանան :

2. Միւս ժամանակներն միլ և արագ աշխատութեամբ գործերու կը ստիպին, վարժապետն առանց խղճալու կրնայ ստիպել, և այս պէս տղայք գործունէութեան կը վարժին, մինչդեռ շարունակ աշխատելու գրութեան մէջ բնական է որ հեղդութիւն և յուլութիւն տիրեն :

3. Կան այնպիսի տղայք որ բնութեամբ մեռեալ ջրոյ նման են, ոչ կը խաղան, ոչ կը շարժին և ոչ իսկ իտան ։ այսպիսիք անդործ և մեռելատիպ մարդիկ կը լինին յետոյ, եթէ յեռանդ չգան կրթութեամբ ։ և այս վարժապետաց պարաքն է, ճնողք չեն խորհիր, միայն կը վշտանան ։ վարժարանին հրամայեալ մարզք և խաղք զայտակիա ի շարժումն և ի խանդ կը բերեն, այնուհետև կը խաղան և ի տան, կը կայտառանան և կ'ողերին :

4. Վարժարանը կը քաղցրանաց տղայոց, քանի հոն կը գտնեն տղայք նաև զղուարձալին ։ Առանց այս միջոցին, ինչպէս փորձերն առաջի կան, վարժարանն դժոհի և ձանձրալի է նոցա, և տարիներ յետոյ, եթէ առլին, թերեւ զգան ուսման քաղցրութիւնը Աւելորդ է բացատրել թէ մեր վարժարանաց սակաւապտղութեան

մէկ պատճառն այսէ, որ ջանք չդործուիր վարժարան և զուսումն անուշել ի ճաշակ մանկաւոյն:

5. Վարժապետն այս միջոցին ի զնին կալով խաղուցն՝ պատեհութիւն կ'ունենայ ի սիրտ և ի բարոյս աշակերտաց թափանցել. խելամուտ լինել նոցա աշխատոյն, հանճարոյն, միտմանց և ընաւորութեան, զորս գիտել մեծապէս պիտոյ է վարժապետին: կրնայ օրինակներ առնուլ այն խաղերէն թէ բարոյական թէ ուսումնական ընտել և գիւրըմբոնելի սկզբանց վրայ ճառելու: կրնայ նաև հասկնալ թէ ո՛վ ՚ի ընէ յո՛ր ուսումն և պաշտօն մէտ է և յարմար:

6. Վարժապետն ևս ինքնին սիրելի և քաղցր կը հանդիսանայ աշակերտաց, վասն զի զախորդելին կը չորհէ նոցա վայելել, և վասն զի խր դիտողութեամբ նոցա խաղը պատուելով, մարդից վերայ խօսելով և երբեմն խաղակից իսկ լինելով, կ'ընտելանայ և դիւրամատոյց քաղցրութիւն մը կ'առնու:

7. Աշակերտաց վարուցն ևս կրթութիւն կրնայ լինել խաղը: Վարժապետն խրատներ և բարոյախօսութիւններ գործադրելի ընելու միջոց կամ կրթութիւն մի կրնայ ընել զմարդս, կանխաւ պատուէր տալով և մանաւանդ հսկելով: Խաղուց մէջ կը սպարդին անդիտութիւն, վրէժ, նենդութիւն, նուաստութիւն, տկարամութիւն և այլն. ասոնք առաքինական որպիսութեանց կրնան փոխուիլ: Ցղայ մի ՚ի խաղս ինչպիսի է, նոյնպիսի պիտի լինել ՚ի կետանս: Ելմէ վարժապետն անդէն հոդ տանի որ մանկան մարդասէր, իրաւասէր, ներողամիտ, վեհանձն, արի, խոնարհ, համբերող, ևայլն, լինի, ցկեանս այնպէս լինելու շաղին մէջ կը դնէ զնոսա:

Այսպիսի օգուտաներ թող համոզեն զմեզ, որ մարմնական մարդից և խաղուց կարեորութիւն տանք հայ վարժարանաց մէջ:

Զ.

ՄԱՐԴԻ ԱԿԱԴԵՄԻ ՄԱՐԴԱՐԱ

Մարդակաղմութիւն այն դիտութիւնն է, որ կը խօսի մարդկային մարմնոց դործարանաց կազմին, նոցա գործողութեանց և առողջապահիկ կանոնաց վերայ:

Որպէս զի կարող լինի մարդ ՚ի քաջողջութիւն խր անձնախնամ լինել պարտի ճանաչել իւր մարմնն. մարդակաղմութիւնը պիտօն այս այս ճանաչումն: Մարդակաղմութիւնը կ'ուսուցանէ թէ ինչ օրինաց տակ են մեր գործարանք, ինչպէս պարտինք վարել զնոսա,

ինչ կը վասոէ մարմնոյն և ինչ կը նողաստէ: Այս գիտութիւնն ըշմեղ իբր բժիշկ կ'ընէ մեր անձանց:

Մարդիկ կրնան լսել կամ կարդալ առողջապահիկ ինչ ինչ կանոններ, սակայն այս եղանակաւ չեն կրնար զիարեսորս գիտնալ ըստ բաւականին: Սակայն այսպիսի ծանօթութիւններ ոչ միայն թերի են և անբաւական, այլև անզօր: Մարդիկ յայնժամ սրտադին կը յարին ՚ի միջոց ինչ, յորժամ անձամբ վերահաս լինին օդտին: ականատես համոզումն զմարդ ՚ի գործ կը մղէ, մինչ ականջալալուրն այնպէս չաղդեր: Պատճառի ծանօթութիւնը շոգի է ՚ի մեղ շարժիչ ՚ի գործ: Անկարելի է որ մարդ լի և, հետեւապէս, յաջող ջանք ՚ի գործ դնէ ո և իցէ բանի համար, որոյ նկատմամբ յերկրայս է, որոյ ճշմարտութեան քաջ խելամուտ չէ:

Ուրեմն ճշմարիտ է թէ այս ուսումն ուսեալ և հետեւապէս զդոյց և խնամուտ աչօք հայիլ պիտի տայ մեղ ՚ի մեր մարմին: Այս ուսումն մեր վարժարանաց մէջ խնամով աւանդուելով՝ պիտի պարապէ զմանկախին այնպիսի կենածախս սովորութիւններէ և մոլութիւններէ, յորոց աղատի գրեթէ անհնարին է միանդամ պարանեալներուն:

Աղդին մէջէն վասսակար սովորութիւններ բառնալու ջանք կը լինի. արդ՝ յաջողդելու համար այս ուսումը տարածել աղդու միջոց է, ամենայն ոք թող ճանաչէ խր մարմին, ոչ ևս պէտք կը մնայ արտաքին խրատոց:

Որդիք Հայկայ, ահաւասիկ աղդասիրական ջանից նիւթ, աշխատեցէք այս ուսումը ճանչցնել և տարածել մեր աղդին մէջ, որոյ բարօրութեան կը բաղձաք:

Այս ուսումն մարմնական դաստիարակութեան խարիսխ նկատելով միայն կատարեալ չերմութեամբ պարտ էինք ընդունել մեր վարժարանաց և աղդին մէջ, սակայն կան ինչ ինչ պատճառներ որ առաւել կը զօրացնեն առաջին պատճառն:

4. Մարդակաղմութեան նկատմամբ տգիտութիւն ամօթալի է: ինչո՞ւ համար կարեւոր կը համարինք ճանաչել զաշխարհ, որոյ մէկ անկիւնը կը բնակինք, և ոչ զայն աշխարհ, որոյ ամբողջին մէջ է մեր բնակութիւնն: Քանի զաշխարհագրութիւն կարեւոր չէ՝ արդեօք այս ուսումն: Աստեղագիտութեան հետ չափակ բաղդատեմ: ինչ ըստ ամօթ լինի չդիտնալն թէ աշխարհի այլեայլ հեռաւորութեանց մէջ ինչ ծովեր, լերինք, լիճք, գետեր, նեղոցներ, քաղաքներ կան, և ոչ մեծագոյն ամօթ՝ անդիտանալ թէ իր բնակած մարմնոյն մէջ ինչ և ինչ գործարաններ կան, ինչ հեղուկներ: Գիտնանք թէ երկիրներ, զորս չենք տեսներ և որոց հետ յարաբերութիւն

չունինք, ինչ օրինօք կը կառավարին . և ինչո՞ւ չսորվինք թէ մեր ներքին գործարանք ինչ օրինօք կը գործեն և կը կառավարին : Մանաւանդ որ այն աշխարհաց օրինաց հետ յարաբերութիւն չունինք, սակայն մեր մարմայն տէրն ու կառավարին ենք մենք, և անոր մէջ գործող կարդաց և կանոնաց տեղեակ լինելով կրնանք օգտակար և կարևոր ներգործութիւններ ազգել՝ ի նոսա, խնամել և արժանաւոր կերպով կառավարել : Վարժարանի ընթացքն աւարտած է սա պատանին, սա երիտասարդն . “Փ . . քաղաքն ո՞ւր է, պարոն .”— . . է.” “—“Փայծազդ ո՞ւր է.” “Փայծազն ի՞նչ է :”

2. Մարդակաղմութիւնը դիւրուսիկ և զբօսալի է : Մեր նպատակն զվարժարանս բժշկական գոլէճներու փոխել չէ . մեր վարժարանաց յարմար դասագիրք մը ոչ աւելիքան վեցամսեայ միջոց կը պահանջէ, և առանց այն գժուարութեանց զոր այլ ուսմունք կ'ընծայեն, քան զթուարանութիւն և քան զաշխարհագրութիւն իսկ դիւրուսիկ է, այնպէս որ թէ առանձին սովորելու և թէ մանաւանդ վարժարանաց դասուց մէջ խառնելու համար ծանրութիւն չունի :

Հոս յարմար է ծանուցանել թէ այս ուսումն ի կրթութիւն մանկական մտաց մեծ յարմարութիւն ունի, և աւանդելի է յառաջքան զայլ ուսմունք : Ճամախատին և մտակործան դրութիւն է ընթերցանութենէ ետքը քերականութեան գժուարին ուսման լուծն անցնել մանկուոյն պարանոյն, և մինչեւ վարժարանէն հրաժարին չարչարել զնոսա : Քերականութիւնը որչափ կարեոր է, այնչափ գժուարին է, և ընդունայն է ջանալ ուսուցանել զայն մանկուոյ, որոյ միտք դեռ գաղափար և մշակութիւն չունի : Սակայն մարդակաղմութիւնը հետ ընթերցանութեան աւանդել շատ աւելի յարմար և օգտակար է, աղայոց միտքը կը զարթուցանէ, ի հետաքըրքութիւն կը շարժէ, անոնց աչքը կը բանայ, կը զբօսինէ, և վարժարանը սիրելի կ'ընէ : Ասկէ ետքը տեղ պատրաստուած կը լինի քերականութեան :

3. Մարդակաղմութիւնը իմացական դաստիարակութեան կը ծառայէ, ինչպէս ՚ի վերոյ յիշեցի : Խորհելու և հետաքրիզութեան առատ նիւթ կ'ընծայէ ուսանողին, ճամբան տեսած ոսկին, և կերած միոն ալ իւր դասուց վերաբերութիւն ունին, անոնց վերայ հետաքնին աչք կը նայի և քան մը կը վնասուէ : Մանաւանդ որ իւր մարմին իւր դասագիրքն, միշտ իւր հետ է, նորա գործողութիւնը անդադար են, հետեւապէս դիտողութիւն ընելու և իմացական կարողութիւններն գործածելու մշտագէպ և ինքնեկ առիթներ կ'ունենայ : Մարդակաղմութեան ուսուցած բաներն ուրիշ ուսմանց պէս

անդործութեամբ կորսուելու վտանգէն աւելի աղատ են : 4. Մարդակաղմութիւնը բարոյական դաստիարակութեան ևս կը ծառայէ : Վասն զի կ'ուսուցանէ մանկան այնպիսի բաններ, զորս անձին պահպանութիւնն ի գործ դնել կը յորդորէ : Մանուկը կ'ուսունի թէ, զորօրինակ, իւր կողերն և ողերն ինչպէս վանդակ մի կը կազմեն և ինչպէս մնասակար է ծուռ կամ շեղ դրիւք նստել և կայնել, ինչ ակարութեանց և ախտից պատճառ կրնայ լինել այն գիրքը, կը սորվի և հասու կը լինի . և սորինետեւ ի բնէ կը միրէ զգօրութիւն և զառողջութիւն, կը ջանայ ուղիղ նստել միշտ : Ասով ոչ միայն դասատուն կ'աղատի աղայը միշտ խրատելէն որ ուղիղ նստին, այլ և աղայն բարոյապէս կ'օգտի քանի մի եղանակաւ : Վարժարանը կը սիրէ, տեսնելով որ ուսումն իրեն օգտակար է : Կը տպաւորի ի միտս նորա թէ, զոր ինչ կ'ուսանի ի վարժարանի, ի գործ դնել պարտի : Այս՝ մարդակաղմութիւնը մեծ օգուտ կը մատուցանէ մանկաւոյն բարոյականին, եթէ օգնէ, ինչպէս որ յարմարութիւն ունի, որ նոքա սովորին գործադրել ինչ որ կը գիտնան թէ օգտակար է : Եւ դարձեալ, մանկաին ինքինքն կառավարելու և հողարտ կը վարժի, ահա ասիկա ալ դաստիարակութեան պարտին է արդէն :

Ուսանողն թէ մանուկ լինի և թէ երիտասարդ, յայտ է թէ մարդակաղմութիւնը զմարմին ճանչնելով՝ զԱրարին ևս ճանչնելու կը ծառայէ : Ամէն բնական գիտութիւնք ևս այս յարմարութիւնն ունին : Այս ուսմամբ աշակերտին խորհուրդները կը վերանան առ չեղինակն, որ զմարմին այնպէս գերազանց ճարտարութեամբ և գերմարդկային խմասութեամբ կազմած, և այնպիսի սքանչելի օրինաց տակ դրած է : Պիտի ճանաչէ նաև իւր տկարութիւնն և տղիտութիւնը, ի զնին կալով անժամկանց անդնդոց, զորս Արարին մարմնոյն մէջ դրեր է :

Վերջապէս այս ուսումն շահասէր սրտից ալ ընդունելութեան արժանաւոր է, այնու զի նիւթական յաջողութեան համար կարեոր պատրաստութիւն մ'է սա . վատառողջն ոչ մարմնական վատակոց կրնայ տանիլ . և ոչ մտաւորականին տոկալ, այս պատճառաւաւ մարդակաղմութիւնն ի յարգի պէտք է լինի, իբրև նպաստաւոր արբանեակ առողջութեան, նաև յաշա նոցա որ զուտումն իբրև միջոց ընչասէր նպատակաց կը խնդրեն : Զարմանալի է որ այսու ամենայնիւ ընդհանրանար այս ուսումն :

Եղբայրներ, արժան չը ուրեմն որ ձեր օրերին ժամեր ընծայէք այս ուսման, որ նիւթական, մտաւորական բարոյական նպաստիք

կը հարստացնէ զմիտս և զմարմին, և ջանաք մուծանել զայն ի չայ վարժարանս, որ այս օդուաներն իրնայ մատուցանել առանց ժամանակի և աշխատութեան մեծ փոխարինութիւն պահանջելու, ո՞հ, այս դիւրագին շահը:

ԳԼՈՒԽ Բ

Ի Մ Ա Յ Ս Կ Ա Ն Զ Օ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Աւելորդ չէ ըսել թէ միտքն կամ հողին երեք կարդ կարողութիւններ ունի, իմացական, գդացական և կամական:

Իմացականութիւն բառին մէջ կը բոլանդակին մտաց այն կարողութիւնք, որովք մարդ գաղափար կը ստանայ և կը խորհի: Այն կարողութիւններն են ըմբռնում, մտադրութիւն, յիշողութիւն, բաղդատութիւն, երևակայութիւն, տրամաբանութիւն, այլովքն հանդերձ:

Այն կրթութիւնք որ իմացական կարողութեանց վերայ կ'աշխատին, կը վերաբերին իմացական դաստիարակութեան:

Հետևապէս այս դաստիարակութիւնն անկատար կը լինի, եթէ իմացական կարողութեանց զոմանս մշակէ և զայլ թողու:

Իմացական դաստիարակութիւնը խեղ գործող երկու մոլորութիւն կայ: Նաև, ոմանք կը կարծէն թէ, և ասոնց մէջ ոչ սակաւ վարժապետներ կան, իմացական դաստիարակութեան նպատակն է միտքը զանազան ծանօթութեամբք խոկել: Ոչ, նպատակն յիշողութիւնն ամբարել չէ. մարդը գիրք պիտի չըինենք, մարդ պիտի չինենք. պարտ է ուշ ունել միշտ որ իմացական կարողութիւնք զարդանան և զօրանան: Զոր օրինակ, թուաբանութեան ուսման մէջ հաշիւներ գիտնալ և ի հարկին և առ ի զբօսանս կատարել չպիտի լինի նպատակ, այլ միանդամայն զօրացնել զմտադրութիւն, զիշողութիւն, զտրամարանութիւն:

Երկրորդ վնասակար մոլորութիւն մ'ալ սա է, որ կը կարծուի թէ ուսմանք կարեոր են զմարդ կարող ընելու յաջողակութեամբ գործել յառա և ի տուրս կամ զանազան պաշտամանց մէջ: Յայտնի է թէ ի՞նչ վտանդաւոր է ասիկա ուղիղ և ճշմարիտ դաստիարակութեան: Այսու արդիւնքը կը տեսնենք մեր վարժարանաց մէջ, մինչև իսկ հոչակեալներէն ումանց մէջ, որ լեզուներ և թուաբանութիւն միայն կը դանուին իրօք և անուամբ ալ: Զգոյշ լինել և ընել պար-

տինք այս սխալէն, ո՛ եղբայրներ. առողջ իմացականութիւն, զօրաւոր և կիրթ իմացականութիւն ստանալն է գլխաւոր նպատակ, մարդկային կատարելութեան կարեոր պայմանաց մին ունենալ, որ քան դհարստութիւն լաւագոյն բարիք է և ոչ միայն հարուստ լինելոց կը յարմարէ զմեղ, այլ և մեր ամէն տեսակ գործոց մէջ յաջողակ և կարողագոյն կ'ընէ զմեղ: Երբ դաստիարակութեան նպատակն զմարդ ոչ թէ կատարեալ մարդ, այլ հարուստ կամ ուրիշ որ և իցէ բան ընել լինի, այնպիսի դաստիարակութիւնն ի հարկէ անկատար և խեղ պիտի լինի, և կրնամ ըսել թէ դաստիարակութիւն չէ այն:

Իմացական դաստիարակութեան մէջ ողիղ ընթացք ունենալու համար պարտ է իմացական կատարելութիւններն ինկատի ունենալ միշտ: Յայտ է թէ իմացական կարողութեանց գրագութեան կատարելութեան պայման մ'է, ուստի, ինչպէս ըսի, պարտ է այս ուշ զնել ուսմանց մէջ:

Երկրորդ, լանտին իմացականութիւն, զայն պարտինք ստանալ: Մէկ երկու գիտութեանց անձնատուր լինել և անոնց ծանծաղ կամ խորին տեղեկութիւնն ունենալ կատարելութիւն չէ, խորհուրդներն անձուկ սահմանի մէջ փակել է: Մեր իմացական տեսութիւնը ներկայէն դուրս անցելոյն ընդարձակութիւնն ունենալու է հորիզոն, (պատմութիւն դիտնալու ենք): Այս երկրին դուրս՝ տիեզերաց ընդադակութեան մէջ ևս թափանցել պարտինք առաւել կամ նուազ (աստեղագիտութիւն): Մեր ներար գանուող հոգեկան աշխարհն ալ կարեոր է յոյժ ճանաչել և դնել (մտաւորական փիլիսոփայութիւն): Բուսական աշխարհը, որ ամէն ուրեք զմեղ կը շրջապատէ և մշտագէպ առիթ կրնայ տալ խորհրդոյ, չճանաչել կամ միայն անոր կեղելն նայիլ և ի ներքս չկարենալ նայիլ, իմացական աչաց մկարութիւն է (բուսաբանութիւն): Պէտք է որ ճանաչենք նաև այն երկրը, որոյ վերայ կը թափառինք և որոյ հետ կը խաղանք, որոյ ծոցէն կ'ընդունինք մեր մնունդն և որոյ գիրին կը հանգչենք. պէտք է նորա ներքին վիճակին ալ նայինք, կարդանք նորա անցելոյն զանազան վիճակներն (երկրաբանութիւն):

Դժբախտաբար այսպիսի կարեոր գիտութեանց մէջ զարդանալու դիւրութիւն չոնի չայ երիտասարդութիւնը: Եթէ վարժարանաց մէջ նոյսա համառօտն ուսմանին, կրնան յետոյ զանձինս կատարելած գործել կամ առաւել հմտանալ ինսովին: Սակայն ոչ վարժարանաց մէջ գեռ այն փոյթը կայ և ոչ արտաքոյ կարեոր նպաստ: Չունինք նոր գիտութեանց գրեան, ոչ կենդանաբանութիւն, ոչ բուսաբա-

Նութիւն, ոչ երկրաբանութիւն, ոչ ալ աստղաբաշխութիւն դրեթէ թողոնք արուեստականներն . թող չունենանք բժշկական և ոչ մէկ հասոր, այսպիսեաց չիքն գեռ ներելի է . սակայն մեր դիտունք, մեր թարգմանիչք, ինչո՞ւ դիտնական դրեանք ի Հայ հեղուլ չեն աշխատիր :

Երրորդ, աշխատիւր կամ պատճառից տեղեակ իմացականութիւն : Իմացական կատարելութենէ հեռի է նա՝ որչափ և շատ բան դիտնայ, եթէ պատճառ չգիտեր, եթէ արդեանց և արտադրիչ պատճառաց մէջ կապակցութիւն չտեսներ կամ չինտուեր, եթէ կանոնին բղխումն ի սկզբանց չտեսներ, եթէ ուսած բաներուն վիլիսովայութիւնը չուսանիր, նա կեղեր կ'ուտէ, և ոչ դիտութեան նուշը . այն իմացականութիւնը իւր ուսածին տէրը չէ, զոր ինչ կուտան՝ կ'ընդունի առանց քննութեան . ստրուկ է այն իմացականութիւն :

Աւելորդ չէ ըսել թէ աղադագիտութեամբ ուսեալն չմոռանար այնպէս գիւրաւ ինչպէս եթէ առանց պատճառաց ուսած լինէր . եւթէ, պատճառաբանութեան մէջ իմացական կարողութիւնք դրժուարութեանց դէմ մաքառելով, իբր թէ կեղեն կոտրելու աշխատութեամբ կը զօրանան :

Ուստի թէ առանձին և թէ վարժապետական աշխատութեանց մէջ աղադագիտութեան մեծ փայթ տանել պէտք է : Ամէն ուսումն և դիտութիւն տեսակ մը պատճառաբանութեան ընդունակ է, ոչ միայն թուաբանութիւնն այլ և աշխարհագրութիւնն ու քերականութիւնն պատճառներ ունին : Առանց պատճառի կամ դիտաւորութեան մարդիկ չեն դրժեր . քերականական զարտուղութիւնք ևս հիմնեալ են դիտանց վերայ, զորս դիտանալ պէտք է իբրեւ պատճառ :

Թուաբանական դասագրոց մէկ երկուքին մէջ պատճառաբանութեան ուշադրութիւն եղած է : Պօղածեան թուաբանութիւնն այս մասին բաւական մօտեցած է կատարելութեան, ուրախ եմք և կը յուսամք թէ մեծարդոյ հեղինակն պիտի ջանայ իւր դրութիւնն կատարելագործել յաջորդ ապագրութեամբ, և այսպէսով մեծ ծառ ույցութիւն մի մատուցած պիտի լինի ազգին : Իսկ քերականութեանց մէջ հաղիւ երբէք պատճառաբանութեան նշոյլ կու դայ ինչմար, և այն յերկու գարադաշեանի :

Գուցէ կարծեն ոմանք թէ այս մեթոսն յապաղկու է և շատ ժամանակ կը պահանջէ : Փորձը պիտի ցուցնէ զհակառակին : Պատճառն ուսանելու համար թէն աւելի ժամանակ պէտք կը լինի, սակայն

նոյն բանն քանի մի անդամ մոռնալու և ուսանելու վատանդն կը բառնայ, զմարդ դիտութեանը տէր կ'ընէ, և 'ի հարկին նոյն կանոններն ի պատճառաց մորքին յօրինելու բաւական կը դործէ :

Չորրորդ, հայուսն և գէստ իմացականութիւն : Իմացականին կատարելութեան պայման է գործունէութիւնը, այսինքն, կանոննաւոր և օգտակար եղանակաւ միշտ զբաղիլ ի խորհուրդս : Խորհիլ ըսելով չհասկնանք մտաց այն վիճակը, ուր և բարբարոսք և անկիրթք կը գտնուին : Խորհիլ ինչ և իցէ իմացական շարժում չէ . արդէն մարդկան իմացականութիւնն առանց գործոյ չկրնար մնալ, մարդ ամէն երկվայրկեան բան մի կը մտածէ : Ուստի կրթութեամբ ստանալու գերազանցութիւն մի չչորթենք այն վիճակին հետ, յորմէ մարդթէկ ուզէ, զկնար ելլել : Խորհիլ այսպիսի վիճակ է, յոր մեծ ճգամք կրնայ բարձրանալ մարդ և կալ մնալ, և գրեթէ անհնարէ որ երբեմն երբեմն ինքինք անկեալ չտեսնէ այն բարձրութենէն : Խորհիլ բառիւ չհասկնանք մարդոց յախուռն թափառիլլը մտածութեանց մէջ, իմացականութեան անուղղեակ նաւու նման տատանիլը կամքին իշխանութենէն և առաջնորդութենէն զուրկ, երթալով ուր որ կը տանին զուգորդութեան օրէնքը, առանց սահմանեալ կէտի մը դիմելու : Մարդուն իմացականութիւնն ընդ զառ ի վայր գլորող քարի պէս է, որ չկայնիր, սակայն խորառութեամբ որոց կը հանգիպին կողմէ կողմը կը միեն զնա և կ'երթայ ուր որ գետինը կը տանի . կամքը պէտք է անոր առջեւէն կառավարի պէս առաջնորդէ և տանի ուր արժան և օգտակար է երթալ : Եթէ կամաց առաջնորդութեամբ չշարժիր իմացականութիւնը, անոր շարժմանցն առաւել յարմար է մտածվութիւն քան մտածութիւն բառը :

Պատճիաբակութեան մէջ պէտք է այսմ ուշ ունել որ իմացականութիւնը ի մշտախոհութիւն կըթուի : Ճշմարիտ է որ հարկը երբեմն կը բռնագատէ զիմացականն ի խորհուրդ որոշ և ուղղընթաց . սակայն ուրիշ ժամանակ անհոգ և ծոյլ կը մնայ, ինչ որ յուշ լինի, զայն կը մտածէ, և արագ արագ յառաջ կ'երթայ նիւթէ ի նիւթ, առանց նորոդ տեսութեան և շահու : Սակայն իմացականին կատարելութեան համար կը պահանջուի որ միտք կըթուին միշտ կարեւոր և օգտակար իրաց վերայ մտածելու . այսպիսի իմացականութիւնն ընդ կառավարութեամբ կամաց է, կը գառնայ զայս ինչ առարկայիւ, կը զննէ զայն, թագուցեալ պատճառին թափանցել կը նրկուի, և տարածամ չխոսորիր անկէ առանց կամքին որոշման : Խորհուրդէ խորհուրդ կը ծնանի . բնական և բարոյական երեսիթներն շուրջ զիւրեւ ինքնին կ'առնու ընտրանօք, զանոնք պատճառնե-

րու կապել կը ջանայ, և անոնցմէ այլեայլ օգուտներ կը քաղէ : կը դիաէ ինքզինք, զիւր անցեալն կանոնաւոր ժամանակի մէջ ի դատ և ի քննութիւն կը կոչէ : Ամէն որ իւր բարձն ու բնաւորութիւնը կը նկատէ . կը ճանաչէ իւր թերութիւններն ու գերազանցութիւններն, իւր միտումներն, իւր փափաքներն և դործոցը բուն կամ թաքոն շարժառիթներն : Մշտախոհ իմացականութիւնն այսպիսի նիւթեր ամէն վայրկեան ունի և կանոնաւոր ընթացինք օդտակար մտածութիւններ և խօսքեր կ'ընէ ամէն ժամանակ : Մեզուի նմանէ, և չնատիր ամէն բանի վերայ որ առջեն կ'ելնէ, այլ ժամանակին և իւր պիտոյիցը յարմար ծաղկանց վերայ ընտրանաւ կը թառի և անկէ անունդ կ'առնու, և յետոյ կ'անցնի :

Մշտախոհ և աչալուրջ իմացականութեան համար ասկէ յառաջ յիշուած հանդամանք պատրաստութիւնն են : Լայնախոհ իմացականութիւնն յարմար է ի մշտախոհութիւնն, ուստի որչափ հնար է, բաղմաթիւ գիտութեանց գէթ սկզբունքն ու հիմնունքն ուսանիլ պէտք է, որով մտածութեան բաղմատեսակ նիւթ կ'ունենանք, և կը պարտինք ու կը կարենանք ինչ որ ուսած ենք ի զարդացումն ածել քննութեամբք դիպաց և երեւութից :

Ուսմանց և դիտութեանց մէջ պատճառներն կամ փիլիսոփայութիւնն սովորիլ պէտք է, որ իմացականութիւնը սիրէ և վարժուի պատճառներ խնդրել և դտնել ամէն բանի մէջ :

Դարրոցաց մէջ աշակերտաց, նաև նորավարժից, ճառ դրելու կամ խօսելու նիւթ տալն բազմազան նպաստներ կը մատուցանէ ի մշակութիւն մտաց, և մասնաւորապէս կը կըթէ զիմացականութիւնն ի խորհուրդ, ի քննութիւնն, ի հարց փորձ: Փոքր մանուկ մ'իսկ կընայ, եթէ յարմար նիւթ յանձնէ նաև վարժապեան, իմացական դործունէութիւն ունենալ, զորօլինակ, քարին, հողին, ջրոյն, հողուն են. օգուտներն մտածել, հարցնել և որոշեալ օրն խօսիլ ի վարժարանի : Այս պարտքը զմանուեկն իսկ մտածող կ'ընէ, աւելորդ է յիշել առաւել յառաջադէմներն :

Գիտութիւն մի կայ որ այս մասին մեծ կարեռութիւն ունի, և ուրիշ այնպիսի օգուտներ, որ իմացական դաստիարակութիւնն չկըր նար լինել թերևս առանց այն գիտութեան : Ըղձալով որ այս դիտութիւնն ճանաչի առ մեղ և յարդի, առանձինն և սակաւ մի ընդարձակօրէն պիտի խօսիմ նորա բազմադիմի օգտից վերայ :

4. ՄՏԱԽՈՐԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

Այս գիտութիւնը մարդկային մտաց վերայ կը ճառէ, մարդակաղմութեան եղբայրն է, սա՝ մարմինը, նա զհոգին կը ճանչցնէ :

Կը ճառէ մտաց կարողութեանց վերայ, թէ ինչ օրինօք կը դործեն, ինչպէս կը զօրանան և որպէս կը տկարանան, իւ կ'ուղղին և իւ կը խանդարին են :

Մարդիկ արտաքին չքեղութենէ կը շլանան, կը յարդեն զայնպիսի որ ոսկի շատունին, փառացի հագուած են, ի ձի կամ ի կառը նստած են. սակայն աչքի չեն երեար նոքա որ արտաքին փառք չունին, թէ և ի ներքուստ ազնիւ սիրտ և հարուստ միտք կրեն: Գիտութիւնը ևս այսպէս են, որոնք որ պատկերաց, փորձերու և թանգարանի չքեղութիւններն ունին, որոնք որ ստակ շահելու կամ արուեստի կը ծառայեն, ի պատուի են, ինչպէս բնական գիտութիւնք, լեզուագիտութիւնն են: Սակայն անդին մտաւորական փիլիսոփայութիւնն կը կենաց, չունի արտաքին փայլ և շողիւն, և ոչ նիւթական շահու բացայացտ խոստում կ'ընէ, ուստի և ոչոք ի խընդիր է նորին: Ըսել չեմ ուզեր թէ մտաց փիլիսոփայութիւնը դործնական կենաց կարեւոր չէ, ընդհակառակն միւներէն առաւել կարեւութիւն ունի, և ամէն մարդու համար, սակայն այս բանը դիտուած չէ առ մեղ :

Գիտնալ պարտինք նախ, թէ այս գիտութիւնը քան զամենայն առաւել դործ ունի դաստիարակութեան, մասնաւանդ իմացականին մէջ: Այս յայտնի է նոյն իսկ անունէն: Որչափ կարեւոր է բժշկին ճանաչել զմարմին կամ գիտնալ մարդակաղմութիւն, նոյնչափ կարեւոր է, արդեօք կը սկսալի՞մ, մտաւորական փիլիսոփայութիւն գիտնալ այնմ, որ քաջ դաստիարակութեան կը բաղձայ: Եթէ իմացական դաստիարակութեան նպատակն է իմացական կարողութիւններն զօրացունել, ահա այս գիտութիւնն է որ այն կարողաւթիւնն է կը ցուցնէ և կը ծանօթացնէ, և կարող կ'ընէ զմեղ խնամ տանել մեր իմացական կարողութեանց, որ չանկանին ի զօրութենէ, և եթէ մեր անխոհեմութեամբ անկեալ են ունանք, դործածել միջոցներ ի զօրութիւն նոցա: Այս գիտութիւնն է որ զմեղ կարող կ'ընէ զուգորդութեան ընթացից վերայ հսկելով մեր խորհուրդներն կառավարելու: Այնու միջոցները կը գիտնանք ստանալու զօրաւոր յիշողութիւն, խորին մտադրութիւն, բեղմնաւոր երեւակայութիւն, նաև ուղիղ դաստումն և տրամաբանութիւն ընելու յարմա-

րութիւն։ Այս գիտութեամբ պիտի կարող լինինք մեր բնութեան մենաշնորհներն չարաչար դործածութեամբ խաթարելէ զգուշանալ, և ի ընէ մեղի բաժին արուած խացական թերութիւններն կրթութեամբ ուղղել։

Այս գիտութիւնը մեծապէս կը նպաստէ մեզ ի մշտախոհութիւն և ի զգաստ մտածութիւն։ վասն զի կարդ մի մշտադէպ երեսոյթներ որ ի մեզ և մեր շուրջը կուգան իյայտ, խացականին քննութեան առարկայ կը լինին։ Մանկան կաթնկերութենէն, լեզուն, ըրածդործերէն սկսեալ անցիր այլ և այլ հասակներէ և գնաց ցնոր ծերութիւն, բոլորն ալ մտաւորական օրինաց ցոյցերն կը կրեն և դիտողութեան նիւթ կը մտաւորական մոտադիտին։ Եւ ոչ միայն այսպէս իրմէ դուրս, այլ և յանձնն կը տեսնէ նոյնափափ մտաւորական երեսոյթներ, և կրնայ ի դնին այնոցիկ պարապիլ երբ ուղէ, և ժամանակ չկորուսաներ։

Զպիտի զանց ընեմ նաև ըսել թէ այս գիտութեան մէջ արմատ ունին այլ գիտութիւնք, և ուսանողն պիտի դանէ հոս քերականութեան, ճարտասանութեան և տրամաբանութեան օրինաց վերաբերեալ ոչ նուազ դադանիք։

Չկոց գիտութիւն մը որ խացական դաստիարակութեան նպաստէ որչափ սա։ Որք միանգամ այս գիտութեան յարդ և ժամանակ ընծայած են, նորա բեղմաւորիչ և զօրացուցիչ հզօր ներդործութիւններն վայելած են։

Այս գիտութիւնը բարոյական դաստիարակութեան ևս մեծապէս կարեւոր է։ Հոն կը սովորինք մարդկային սրտին նկարագիրը, բոլոր հակամիտութիւններն, կիրքն, ախործակներն, բաղծանքն, և ասոնց խանգարմանց պատճառներն։ Հոն կը տեսնենք Արարչին խաստութիւնը որ կը փայլի պայծառ բոլոր մտաւորական օրինաց վերայ։ Հոն կը դիմաւորենք նաև խնդիրներ որոց առջև կ'ստիպի մեր բարձ լսավիղ խացականութիւնը գլխակորիլ ակարութիւնն զդալով։ Հոն մարդ կը տեսնէ ոչ միայն իւր գեղեցիկ կարողութիւններն, որոց համար չնորհ ունիլ պարտի Արարչին, այլ և իւր մտաց աններդաշնակ վիճակն, որոյ գարմանին համար կը կարօսի հզօր իին երկրորդ արարչագործութեանն իւր հոդույն վերայ։ Ասոնք աեսնել բարոյական կրթութեան ինպաստ միթէ փա՞քը բաներ են։

Այս գիտութիւնն դաստիարակութեան դործոյն մէջ այնչափ կարեւութիւն ունի, որ իրաւամբ անկատար համարելի է դաստիարակութիւնն առանց այս գիտութեան։ Մակայն են գեռ նկատումներ, որովք մտաց վիճակայութիւնը առաւել ևս մեծարոյ կը հանդիսանայ։

Այս գիտութիւնը կարեւոր է նոցա որոց պաշտօնը կամ գործը մտաց հետ յարաբերութիւն ունի։ Բժիշկներու կարեւոր է, վասն զի միտքը մարմնոյն վերայ ներդործութիւն անի, և հիւանդութիւնը և տկարութիւնը երբեմն մտաց վիճակէն կը ծագին, և միշտ կը ներգործութիւնը անկէ ։ Երբեմն հիւանդութեան մը դարմանը մտքին միշտ մտաւուցանել պէտք կը լինի, կամ զմիտս մարմնոյն նպասջոցաւ մտաւուցանել պէտք կը լինի, ասոնք ընելու համար մտաց օրէնքն և տաւոր վիճակի մէջ գնել, ասոնք ընելու համար մտաց օրէնքն և ինչպէս ներդործութիւն ճանաչել պէտք է։ Այս նկատմամբ ես լաւ է որ ամէն մարդ ուսանի այս գիտութիւնն յօդուտ առողջութեան։

Վարժապետութեան մէջ կարեւոր է։ Մտաւորական վիճակայութիւնն է որ միտքը կը ծանօթացնէ մեղ, և կ'ուստուցանէ այն օրէնքն ներն, որովք կը մանանը գտնել կերպեր զմիտս կրթելու, իմացական կարողութիւններն զօրացունելու, աշակերտաց ուշը դրաւելու, դասուց ժամանակին և յաջորդութեան կարդը սահմանելու, գիւրացուցիչ և նպաստաւոր եղանակ ուսուցման հնարելու, աշակերտաց մտաւորական մանաւորութեանց կամ զանազան յարմարութեանց հասու լինելով։ Արդեօք որչափ վարժապետներ աշակերտաց այս կամ այն միտման հակառակելով աղնիւ տաղանդներ խեղդած են և ընդհակառակին ինչ շաւեղներէ քալեցնելու յամառած են, ընդ որ քալելու ի բնէ բնաւ օգնական մղում չունի աշակերտն և տարածավառութիւն կը լինի զմիտս կը նմանցունէ բազմազի պարտաց կը չարչարուի։ Հեյվլն զմիտս կը նմանցունէ նուագարանի, և այն վարժապետը որ մտագէտ չէ, կը նմանցունէ նուագարանի, որ իւր երդը միայն գիտէ, առանց ճանաչելու նուագարծութիւն, որ իւր երդը միտմի գիտէ։ Նոյն պատճառաւ զոր ի վերայ յիշեցինք, վասն զի միտքն ի մարմին կը ներդործէ, ուստի մարմնոյ այլեայլ երեսոյթներէն շատ բան կը նայ գուշակել գատերոյն նկատմամբ և դաստիարակին։ Բիհամը ևս տեղ մի կը յիշէ թէ մտաց օրինաց ու այլ եայլ հանգամանաց անգէտ դաստաւորներ երբեմն զմարդ ի բանտ կ'ողարկեն, զոր ի յիմարանց պարտ էին զրկել։ Եւ որովհետեւ վարժապետք ևս դաստաւորութիւն ստէպ ընել կը պարտին աշակերտաց, այս նկատմամբ ևս նոցա կարեւոր է մտաց վիճակայութիւնը։ Եւ քանզի ծնողք ալ զղաւակունս ամէն օր դատելու պէտս կ'ունենան, ուստի ամէն պատճանի և երիտասարդ, արու և էդ, այս գիտութիւնն ուսանելու են, քանզի օր մի ծնող պիտի լինին։

Դատաւորութեան մէջ ևս կարեւոր է։ Նոյն պատճառաւ զոր ի վերայ յիշեցինք, վասն զի միտքն ի մարմին կը ներդործէ, ուստի մարմնոյ այլեայլ երեսոյթներէն շատ բան կը նայ գուշակել գատերոյն նկատմամբ և դաստիարակին։ Բիհամը ևս տեղ մի կը յիշէ թէ մտաց օրինաց ու այլ եայլ հանգամանաց անգէտ դաստաւորներ երբեմն զմարդ ի բանտ կ'ողարկեն, զոր ի յիմարանց պարտ էին զրկել։ Եւ որովհետեւ վարժապետք ևս դաստաւորութիւն ստէպ ընել կը պարտին աշակերտաց, այս նկատմամբ ևս նոցա կարեւոր է մտաց վիճակայութիւնը։ Եւ քանզի ծնողք ալ զղաւակունս ամէն օր դատելու պէտս կ'ունենան, ուստի ամէն պատճանի և երիտասարդ, արու և էդ, այս գիտութիւնն ուսանելու են, քանզի օր մի ծնող պիտի լինին։

Ճարտարախօսութեան և ատենաբանութեան համար կարեռ է այս գիտութիւնը : Քանզի նա է որ մարդկային սիրտը կը մեկնէ մեղ . կ'ուսուցանէ թէ ինչ օրինաց կը հպատակի մարդոյն կամքը , և ինչպէս շարժել պէտք է զայն , թէ կիրք իւ կը յուղին , իւ կը խաղաղին , թէ խօսքին կամ ճառին մասունքն ի՞նչ յաջրդութեամբ առաւել կը յարմարին կամեցեալ աղդեցութիւնն գործելու ի միտո ունկնդրաց , թէ այս ինչ վիճակին մէջ ունկնդրաց ուշն յո՞ր նիւթ գիւրագրաւ է : Այսպէս կարեռ է ամենայն տեսակ առենախօսութեանց մէջ , հետևապէս քարոզութեան մէջ : Եւ որովհետեւ ամէն մարդ մտաց հետ գործ ունի չափով իւիք , իւր առից և արոց մէջ , իւր բարեկամական և ծնողական պարտոց մէջ , և իւր քաղաքական պաշտամանց մէջ , միով բանիւ ամէն ընկերական յարաբերութեանց մէջ , լաւ էր որ ամենայն ոք ուսանէր այս գիտութիւնը նաև այս նկատմամբ , որ կարենար առաւել յարմարութեամբ ի միտո ընկերին ներդորձել այն աղդեցութիւններն , որոց կարօտ կը տեսնէ զնա :

Դեռ խօսք չըրի այս գիտութեան բարձրութեան վերայ : Ասոր առարկայն ոչ հանք է , ոչ քար , ոչ բոյս , ոչ ճճի կամ կենդանի , այլ այն բանն է որով մարդ իշխանութիւն ունի անոնց ամենուն վերայ , այն է միտք : Ի՞նչ են քար ու հող , տունկ և կենդանիք . մարդ Աստուծոյ պատկերն է , և մարդոյն ոչ մարմինն այլ միտքն . ուստի և աշխարհի վերայ գտնուած . և գտնուելու բոլոր գիտութեանց մէջ մտաց փիլիխոփայութիւնն դերաղանց է , բաց այն միակ գիտութենէն , որ մտաց Արարծին վերայ կը խօսի :

Բոլոր գիտութիւնք ասոր առջեւ խոնարհիլ պարտին իրբեւ դաւակունք ծնողաց , քանզի նոյն ինքն միտքն է որ այն գիտութիւններն կը հանէ ի վեր : Հարիւր տարի յառաջ երկրաբանութիւն կա՞ր : Երեք չորս հաղար տարի առաջ այժմու գիտութեանց ո՞րը կային : Անոնք ամէնքն արդիւնք են մտաց հետաղոտութեանց : Եւ ո՞վ է այն ուսումնականն և ուսանող որ գիտութիւններն կը սիրէ , սակայն նոցա մայրն ոչ . ինչպիսի անտարբերութիւնն է , որով մարդիկ կը նային այն հիանալի արդանտին և այն ճարտար գործարանաց , որ կը յղանան , կը մնուցանեն և կը ծնանին զգիտութիւնս , այո՛ , նաև զարուեստ ամենայն : Ո՞վ դու որ փառաւոր և հոյակապ շինուածոց վերայ զարմացմամբ կը նայիս , դարձո՛ աչքդ նոցա ճարտարապետին և յօրինողին վերայ , ծանի՛ր զայն , մեծադոյն պատիւ է քեզ :

Զարմանք , վերջապէս , մեծ զարմանք , որ մարդիկ չանան ճանա-

չել զմետաղս , դրոյս , զանասունս , և ոչ բուն իրենց էութիւնը : Հետաքրքիր են թէ ինչ է օդ , ինչ է ջուր , և չհարցնեն “ի՞նչ եմ ես . ո՞ն է այն գիտութիւնը , որ զիս ինձ ծանօթ ընելու կ'աշխատին , և թէ բանի մի տղիտութիւնն ամօթալի է , անձին տղիտութիւնն ի՞նչ է : Ինչո՞ւ մարդ ջանայ ձգտի անհուն հեռաւորութեամբ բաժանեալ իրեն դիտել և ճանաչել , սակայն այնփոյթ լինի բուն ինքինքն ճանաչելու : Տիեզերաց անհուն մեքենային որպէս դառնախ հասկնալու ջանալ , և ջանալ ոչ տասնապատիկ և ոչ իսկ համազօր ճգամբ ճանաչելու այն հոգեկան տիեզերին որ ի մեղ է , այն օրէնքներն որովք մտաց կարողութիւններն կը գործեն , և այն իշխանը որոյ պաշտօնն է հրամայել անդ համայն զօրութեանց :

Կը մեայ ըսել թէ մտաւորական վիլխառիայութիւնը գործեաց , դիտարանի , ևն ծախտոց պէտա չունի . դիւրագնի է , և մեզի պէս աղգի մի , որ անհոգութիւններն աղքատութեան պատճառանօք կը վերաբէտ , դիւրամատչելի է :

Աւելորդ կը համարիմ յորդոր կարդալ մեր աղնիւ երխտասարդաց , այս գիտութեան ուսմանն մեծահոգ լինել անձանց և վարժարանաց համար :

2. ԲԱՆԱՍՏԵԳԾՈՒԹԻՒՆ

Բանաստեղծական գրեան ևս գործ մ'ունին գաստիարակութեան մէջ . ո՛ և է աղգ , որ իւր մտաւորական վիճակը դարմանել կ'ուզէ , օգուտ կրնայ քաղել ի բանաստեղծութեանց :

Բանաստեղծութիւնք զրոսալի և հետընկալ դասեր կընան աւանդել հասարակ ժողովրդեան : “Բանաստեղծութիւնն , կ'ըսէ Ռուլէն , Համեմէ զիրատս օգտակարս խայծիւ զուարճութեան , և զուարթիերաբանօք , զոր զգեցուցանէ նոցա” : Հօն ամենայն ինչ գեղեցիկ կը նաև ախորժելի է , նաև խրատք : Հօն մեր սիրտ գիւցազն մի կը ճանաչէ , որ նիւթ է գործոյն . կը բարեկամանայ նմա , համակիր կը լինի , և նորա առաւելութեանցը կը ցանկայ . նորա յաղթութիւնը , յաջողութիւնը փափաքելի է մեր սրտին , որ զգացմանց փոթորկօք մըրիկեալ կը տասանի ըստ ուրախառիթ կամ արտմալի վիճակաց , ըրիկեալ կը տասանի ըստ ուրախառիթ կամ արտմալի վիճակաց , յորս կը գտնուի գիւցազն : Հօն ուսումնականն ևս , յետ ընդ երկար մտաւորական վաստակոց , շատ անդամ կրնայ գտնել զհաճոյս և ըղհանգիստ , զհանգիստ քաղցր ի ճաշակ մտացն :

Մեր ուսումնականք աշխատեցան բանաստեղծական գրենոյ երկասիրութեան և մանաւանդ թարգմանութեանց , չնորհակալ ենք ,

ասով աղջին մատենագրական ծառայութիւն մի մատուցին։ Այսկայն զայս ըսելու նպատակաւ կը խօսիմ մատենագրութեան այս ճիւղոյն վերայ, կը թուի թէ բաղդատաբար չափազանց աշխատութիւն եղաւ այս մասին։

Աւելորդ է հոս ի ցուցակ արկանել այն բաղմաթիւ բանաստեղծական հատորներն, որ վերջին ամաց մէջ ունեցանք, ստուար գրբեան ոչ սակաւաթիւ։ Ասիկա դիտելու համար լրագրաց վերջին երբեսներն նայեցէք։

Բանաստեղծութիւնք մանաւանդ զբօսանք են երեակայութեան քան թէ մսաց մնունդ։ Դինի և ոչ հաց, գրգիռ քան թէ զօրութիւն, զարդ քան թէ պիտոյք։ Արդ մեր գրականութեան չափաւոր ճոխութիւնն ինկատի առնլով պիտի դատենք համարձակ թէ զարդը չափազանց է այն աղքատ կացութեան։

Ճշմարիտ է որ դասագիրք մեծագոյն մասն են մեր գրականութեան, սակայն և նոքա դյոյն փոփոխութեամբ կրկնութիւններ են։ Դիրի՞ն դործ, ուրիշ ածական չտամ։ Թուաբանութիւն, աշխարհագրութիւն, և քերականութիւն, հայերէն քերականութիւն և դաշիերէն քերականութիւն։

Յանդդնութիւն, կը լսեմ ինչ կ'ըսէք, եղբայրներ։

Թող յանդուգն դատուիմ, սակայն հաւատացէք, անկեղծ սէլն ու ցաւակցութիւնն է որ զիս այսպէս խօսելու կը շարժէ։

Ինչ կ'ըսէք, պէ՞տք է գրեթէ բոլոր ոյժն տալ դասագրքեր կը րկնաբաննելու և բանաստեղծութիւն թարգմաննելու։ Ասիկա՞ընել կ'ուզէ հայ ուսումնականն։ Աւա՞զ։

Թէկ ունինք կրօնական և գիտական դրեան, սակայն շատը հին և անդործածելի են։ Գիտութիւնք այժմ արագ կը զարդանան իրրե դմանկունս, քանի մի տարուան մէջ բաւական ուղղաւթիւն, փոփոխութիւն և կատարելութիւն կը մանէ ինսոսա, թէ գիտելեաց թէ մեթոսից մէջ, ուստի և անոնց նորանորքն պէտք են, ապա թէ ոչ կէս դար, դար մի, քանի մի դար, ըստ թուականի երկասիրութեանն, առաջ աշխարհ եկած կը լինինք, նորոգ լուսաւորութենէ թափուր։

Բառարան ունի՞նք։ Իրաւ որ հայերէն բառարան ըսելու արժանի քան մի չունինք, բացի չ այսի պեանէն երեց վարդապետաց, որ խակ կատարեալ չէ, մանաւանդ թէ հաղուազիւտ։ Առ ձեռն բառարան անդամ չունինք։

Չունինք ճարտասանութիւն ի պէտս զարգացելոց։

Չունինք Աստեղաբաշխութիւն գրեթէ։ Ոչ երկրաբանութիւն, ոչ էնդանաբարանութիւն, ոչ կենդանաբարանութիւն, ոչ հանքաբանու-

թիւն, ոչ արուեստական գրքեր, ոչ խակ երկրագործութեան վերայ հատոր մը։ Ասոնք այնպիսի գիտութիւններ են, որոց վերաբերեալ հաղարաւոր հատորներ կան առ Եւրոպացիս, մենք մէյմէկ հատոր խակ չունինք։ Եւ ի՞նչ ունինք, չորս տարբեր թարգմանութիւն ունինք Տեղմաքի, երեք տարբեր թարգմանութիւն Պօղ և Վիրդինեաց չդիտեմ։

Թող բանաստեղծութիւնը լինի այն աղը, որով զմանկախն և ըղողովուրդն ուսումնատեաց՝ հրապուրենք ի մարդս և ի մարմանդս ընթերցանութեան, թող հրապուրեալ դան զինի, և ո՞ւր, քանի որ դիտութեանց աղդի աղդի գեղ գալար չծածկեր զարօտ գրականութեան։ Քանի որ ուրեք ուրեք հազիւ կը տեսնուին առողդ, թարմ և մննդարար գալարիք։

Թող բանաստեղծութիւնը լինի գրականութեան սեղանոյն գինին, թող ախորժակ գրգռէ, ի՞նչ օդուա, մինչ պարարտ կերակուրք սակաւ են յցժ։ Ի՞նչ պէտք է այնչափ զինի պատրաստել։

Մինչդեռ աղդն իւր աղքատութենէն կը գանդատի, ի՞նչ իրաւունք հրապուրել զնա ի գինս գինւոյ, մինչդեռ նա սովալլուկ է։

Ի՞նչ կը նշանակէ մտրակել, մինչ մտրակեան չգիտէ յո՞ւ դիմել, սկզբունք չսովորած ժողովուրդ մը ի մորակբանաստեղծութեան գըրգույնէն ինչ օդուա, ո՞ւր պիտի ընթանայ, ի՞նչ պիտի գործէ։

Սնցնինք երկրորդ վնաս մը դիտելու։

Միտք մարդկային այլեայլ կարողութիւններ ունի. յիշողութիւն, դաստողութիւն, տրամաբանութիւն, երեակայութիւն, կամք ևն. ասոնց անձնիւրն ինամոց և մակութեան կարօտ է։ Արդ, բանաստեղծութիւնը յերեակայութենէ կը ծազի և յերեակայութիւն կ'աղդէ։ Ինչո՞ւ վնասակար չդատենք երեակայութեան շատ ոյժ տալ և անունդ, և ուրիշ կարողութիւններն թողուլ անդործ և տկար, չզօրացնել հաւասար։ Ասիկա միտք դաստիարակել չէ, այլ զներդաշնակութիւն խանդարել և վնասել։

Մտաց ուրիշ կարողութիւններն իբր անստես առնել, և երեակայութիւնը մեծաւ ինամով զօրացնել ի՞նչ է. — ի՞նչ է մարմնոյ ուրիշ գործարաններն գրեթէ անդործ և անզօր պահել և երեսներն չափազանց լնուլ պարարտել, որ տղեղ գերութիւն մի առնու այլ անդամ գուլ։

Այս ընթացից հետեւանքն ի՞նչ պիտի լինի։

Մեր պատանիք և երիտասարդք բանաստեղծութիւն շատ պիտի կարդան քան գիտութիւն, հետեւազէս բանաստեղծելու եռանդ պիտի առնուն. ինչ նիւթի վերայ որ գրեն՝ պիտի ձգախն ի ձես բա-

նաստեղծութեան, նիւթն ընդունակ լինի կամ ոչ Այսպիսի գըր-
ուածներ տեսած չէք:

Նոքա չպիտի՝ սկրմն զբանաստեղծութիւն առաւել քան դիե-
տութիւնս, և ասիկա իրենց մասսակար չպիտի՝ լինի: Երևակայել
շատ, դատել և տրամարանել հազիւ երբէք: Զե ճանաչել և բառ,
և ոչ իմաստ և սկզբունք:

Անշուշտ նոցա իմացական կարողութիւնք կը մնասին: 'Ի բանաս-
տեղծութիւնս դեգերեալ միտքը, իբր այնպիսի ոք է որ սովոր է շըր-
ջադայելու ի զբօսալի և ի հեշտագնաց պարտէցս, ապիկար պիտի
լինի ի վերելս դիտութեանց տաճարին, ուր հանող ճանապարհ ա-
ռապար է և դժուարաքայլ:

Ինչ ինչ դիտողութիւններ ևս ունիմ ընել մեր ունեցած բանաս-
տեղծական գրենց համար, ոչ ախորժալուր դիտողութիւններ:

Երրորդ, իմաստիւք ճոխ բանաստեղծութիւն քիչ ունինք, ինչ
պիտի է Տեղեմաքը. կան որ կարծես թէ զբօսյնելու նպատակաւ
գրուած են: կան որ ի զբօս իսկ չեն ծառայեր, այնչափ անհամ
տեղեր ունին: զղճիմ և տաղտուկ նկարագրութիւններ, ոսին և ժա-
մալատին երկարաբանութիւններ չեն բանաստեղծութիւն:

Խարերայ բանաստեղծութիւն, որոց ճակտար կը տեսնես հրա-
պուրիչ դիւթական դուռ մի, ուժգին կը քաշուիս իներքս, կը վա-
զես, կը վազես, ի՞նչ կը յուսաս գտնել, անապատ է այն և ոչ ի-
մաստից տաճար, հազիւ ուրեք պիտի տեսնես ովասիս: Ես այսպիսի
բանաստեղծութեան մի երկրորդ հատորին մէջ կասեցայ, խոնջ յըն-
թացից, անապատին անէին և անդալար երեւութէն յուսահատ: Ու-
նոնք որ յառաջ կ'երթան այսպիսի հատորներու մէջ, երկայնամիտ
են արդեօք թէ ունայնամիտ:

Սեղան, ուր անիւղ և անալի ուտելիք մի կը ներկայանայ, թե-
փոլ իի, փողդ կը փակի, չես կրնար կլանել, սեղանը ի բաց հրել
կ'ստիպիս: կը փափաքէի որ այսպիսի կերակուրներէ ախորժող ճա-
շակ չունենային եղայրներուս ոչ մին:

Չորրորդ, բանաստեղծութեանց մէջ կան շատեր որոց բարոյա-
կանն առաւել կամ նուազ ստգտանելի է: Թատերական զաղիր
տետրակիներ կան, ապականեալ: Փող և Վերդինեայ դիւցազնը աղ-
ջըկորդի է: Մօնթէ Քրիստօ բարձմահատոր բանաստեղծութեան դիւ-
ցազնը վրէժինդիր ոդւով վառեսլ է: Յաշս հեթանոսաց Մօնթէ
Քրիստօ թերես սքանչելի մարդ մ'է, սակայն ոչ յաշս քրիստոնէին:
Լա՞ է որ ընթերցողն չանայ նմանիլ այն դիւցալին, լա՞ է որ թըշ-
նամեայն քինահատոյց լինել կատարեալ և վեհանձն մարդու գործ

համարի, և այնպէս ընել փափաքի: Զեմ պատկառիր հեղինակին
անունէն, թարգմանչին ալ անընտրողութիւնը չեմ կրնար անստգիւա-
համարիլ, ո՛չ ես, այլ երկնաստուր սկզբունք մի կայ, որ կը դասա-
պարտէ զնոսա, այն է «Բարեւան յաղթեա չարին:»

Հինդերորդ, կարեւոր բան մի զանց ըրած կը լինիմ եթէ չիշեմ
այն թերութիւններն ևս որ թարգմանեալ բանաստեղծութեանց, որ-
պիսի են ընդհանրապէս մերքն, մէջ կը դանուին:

Բանաստեղծութեանց նիւթերն եթէ սրբազան են, ամէն ազգի
կը յարմարին: ունինք այնպիսիս, զորօինակ, Մահ Աբելի և կո-
րուստ գրախտին: Սակայն կան այնպիսի քաղաքական և կրօնական
նիւթեր, որ ամէն ազգի նոյն յարմարութիւնը չունին: Եւրոպական
աղդաց համար դրուած բանաստեղծութիւններն չայց մատուցանել
օդտակար չինիր, ոչ թարգմանութեան և ոչ ապագրութեան ծախքը
և ոչ ընթերցանութեան ժամանակը փոխարինելու չափ օդուտ կրնան
ընել: Եւրոպական աղդք իշխան են և աղաս, մեծ և զօրաւոր, քա-
ղաքակիրժ և ուսմանց մէջ զարգացեալ, իսկ մենք հպատակ, տկար,
և քաղաքակիրժութիւն և ի գրականութիւն այն ինչ կը խլոտինք քայ-
լափոխել... պէտք չկայ ամէն հակադիր յատկութիւն ի մէջ բերել:
Արդ, այնպիսեաց համար պատրաստուած բանաստեղծութիւններն
թարգմանել և տալ ի ձեռու այսպիսեաց՝ չնմանիր հակառակ կլիմայի
և պարագայից հիւանդի մի համար շինուած գեղերն մատուցանել
իւր հիւանդին: կամ բարձր դասուց յարմարեալ դասագիրքն տալ
ի ձեռու նորուս և գեռակիրժ աշակերտաց:

Գաղղիացիք կ'ուզէին զիթադաւորութիւն փոխել ի ռամկապետու-
թիւն կամ հասարակապետութիւն, առ այս նպատակ նպաստաւոր
բանաստեղծութիւններ կրնային մատուցանել ժողովրդեան, սակայն
մենք զանոնք կարդալու պէտք չունինք, գոնէ այն աստիճան որ
թարգմանչութեան և գրամական ուժերնիս կիսով մասամբ զոհենք
անոնց: Գաղղիացի ուսումնականք կ'աշխատին մոլեռանդ և բռնա-
ւոր կղերականութեան ոյժը խորտակել կամ չափաւորել, թող աշ-
խատին, թող թշուաներ շարադրեն, սակայն մեք զանոնք կար-
դալու պէտք և ժամանակ չունինք, մեր կղերին և կամողիկ կղերին
մէջ լեռնահանդոյն խտիր կայ, փառք Աստուծոյ: Մեր ժողովուրդն
զանոնք կարդալով եթէ կարդայ, առ հասարակ կրօնական պաշ-
տօնէից գէմ չափաղանց ատելութեամբ պիտի նու, ասիկա օդուտ
չէ: Եւ եթէ դոյզն օդուտ մի կայ, վնասը մեծագոյն է, այն ժամա-
նակն ու ստակը հարիւրապատիկ առաւել օդտակար և իւր վիրացն
յատուկ գրական գեղոց կրնայ տալ:

Վեցերորդ, սա ևս նկատել պարտինք որ Եւրոպական ազգաց քաղաքական կացութիւնն և սավորութիւններն տարրերին ի մերոցս, ուստի թարգմանեալ բանաստեղծութիւնք տեղ տեղ մուժ և անհամ կը լինին ասիաբնակ Հայոց, զորօրինակ, ծառուղի, երկաթուղի, կառք, նախասենեակ, այսպիսի ոչ սակաւ բառեր նշանակութիւն չունին մեղ, կամ անհամ և անզօր են իմաստքն :

Այս գիտողութիւններէն կը տեսնենք թէ

1. Բանաստեղծական զրեան շատ ունինք. գիտական, բարոյական, պատմական և կրօնական ճիշդերուն, որ յոյժ տկար են, ոյժ տալ պարտին մեր ուսումնականք :

2. Թարգմանելու մէջ չափ պահելու է. մեր ազգին մասնաւոր թերութեանց, մոլութեանց, մոլութեանց ի դարման պէտք է աշխատիլ, ուստի մեր բանաստեղծներն իւրագիր երկասիրելու են ի պէտք ազգին :

3. Թարգմանելու մէջ զդուշութիւն ունենալ և հասուն քննութեամբ ընտրել, բնադրին բարոյականին, լեզուին և նիւթոյն քաջ ուշ դնել և զկատարեալն միայն թարգմանել պէտք է :

4. Պատանիք և երիտասարդք պարտին զդոյշ լինել որ չմոլին յընթերցուած բանաստեղծութեանց, եթէ ոչ կը վնասին ճաշակ և ոճ և իմացական կարողութիւնք : Նաև պէտք չէ որ յախուռն ձեռնարկեն յընթերցուած բանաստեղծութեան, քաջ խորհելով և կարգացողէ խորհուրդ հարցնելով պարտին ընտրել արժանընթերցներն ըստ բարոյականին և ըստ ոճոյն ևս, քանզի կան որք վնասակար տպաւորութիւն կ'ընեն յօն ընթերցողին : Եւ ոչ միայն բանաստեղծութեանց ընտիրներն, որ սակաւաթիւ են, կարգալու ենք, այլ և ընդհանրապէս երբ խոնջ են միտք ուսումնական զբաղմամբ, այո՛ առ ի զրոս և ի հանդիստ մտաց :

ԳԼՈՒԽ Գ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԶՈՐՈՒԹԻՒՆ

Բարոյական զօրութիւն ստանալի է ի ձեռն բարոյական դաստիարակութեան, որոյ գործն է մարդուն բարոյական բնութիւնն ուղղել և զարդացնել :

Ի՞նչ է բարոյական բնութիւն մարդոյ :

Մարդկային մտաւորական կարողութիւնք, ինչպէս արդէն յիշեցինք, յերիս ճիւղս կը բաժանին, այսինքն յիմացական, ի զդացական և ի կամական : Մարդուն բարոյական բնութիւնն այս երեք կարդկարողութեանց մէջ կը տեսնուի : Իմացականը կը պարունակէ բարոյական գաղափարներ, զորօրինակ, բարւոյ և չարի, արդարութեան և անիրաւութեան, վարձուց կամ պատժոյ արժանաւորութեան գաղափարներն :

Զգացականը կը պարունակէ հաւանութեան և անհաւանութեան զգացումներ, զոր կ'ունենայ մարդ երբ գործոյ մի արդարութիւնն կամ անիրաւութիւնն ի միտ կ'առնու : Եւ այն մղումը,

զոր կ'զգայ մարդ արդարութիւնը գործելու և անիրաւութենէ համարելու, որ պարտուց զգացումն է : Կամական կարողութիւնն ի սպարարոյական զօրութիւն է, որով մարդու պատ է պարտազգացութեանը անսալու կամ անոր հակառակ գործելու :

Մարդ զլխաւորապէս բարոյական բնութեամբը կը գերազանցէ զանբաններն, քանզի սոքա ևս, թէպէտ բնազգապէս ունին ծնելասիրութիւն, ընկերսիրութիւն, երկիւղ, ցասումն, յիշղութիւն, սակայն չունին արդարութեան վերայ ոչ գաղափար, ոչ հաւանութիւն և ոչ զայն գործելու կամ չգործելու կամք : Այս պատճառաւ գաստիարակութիւնը պէտք է մեծ հոգ ունենայ մարդու բարոյական բնութեան, այսինքն նորա գերապանծ մասին :

Եւ զայն խորհիլ պէտք է թէ մարդկային ազգին երջանկութեան և թշուառութեան աղբերք՝ նորա բարոյական բնութենէն կը ծագին : Մինչեւ անդամ նիւթական չարեաց պատճառն բարոյական ապականութենէ է : Հիւանդութեանց մեծ մասն և մարմնոյ զանազան տկարութիւնք արդիւնք են հեշտափարութեան, փափկասիրութեան, ցասկոսութեան, և այն ճնշող և տառապեցուցիչ հոգերուն, որ յառաջ կու գան յաղահութենէ, ի փառամոլութենէ և ի նախանձուէ : Ողքատութեան գլխաւոր պատճառքն են շուայլութիւն, ծուլութիւն և կեղծ վեհանձնութիւն :

Ինչպէս անհասաք նոյնպէս ազգք ի բարոյական ապականութենէ կը կործանին : Տաճկաստան աղդու և ծանօթ օրինակ է այսմ, նորա տկարութեան պատճառք ի՞նչ են . ոչ պապէն փառամոլութիւն, աղահութիւն, կաշառակիծութիւն, անձնասիրութիւն և շուայլութիւն : Այս բարոյական ախտք էին, որ զջաճկաստան արկին ի զօրութենէ :

Կը թուի թէ արտաքին յարձակունք կը կործանեն զագգու և զաղինս, սակայն ծմարիս է թէ այն յարձակողաց զօրութիւնը յարձակելոց տկարութենէն է : Կան անտառներ ուր բոլոր ծառերն որդիահար կը փտին, սակայն կանգուն և դալար կը կենան, բայց երբ

փոթորիկն ուժգին մռնչելով կը յարձակի , ծառերն իսկոյն յերկիր կը տապալին : Աղդաց մոլութիւնք այն որդերուն նման են , և արտաքին յարձակմունք այն փոթորիկներուն :

Համայն աղդաց անկման պատճառք մի և նոյն տեսակէ են , բարյական են : Պարսիկը տկարացան և անկման այն բարձունքն , ուր յառաջ քան զՄէծն կիւրոս և մանաւանդ առ կիւրոսիւ կը կենային , և ի՞նչ պատճառաւ . — Հպարտութեամբ և հեշտախտութեամբ , պերճանօք և զեղխութեամբ : Թագաւորք և զօրալարք և ողայք տիկնամբ հանդերձ կ'երթային ի պատերազմ , և բազում սպասուք զեղխութեան : Ի հարկէ չեն յաջողիր քաջադործել այնպիսի կնատ , հեշտասէր և զեղխ մարդիկի . այնպիսիք , որ փոխանակ ահարկու զինուց դրդուարկու աւարօք կ'երթան ի պատերազմ : Դարձեալ , Պարսկաց թագաւորք իրենց ծայրայեղ ամբարտաւանութեամբ ժողովուրդն իւրենց գերինկատելով և այնպէս վարուերով ըրին զայն արդարե գերի և տիկար , դժո՞՞ն և եռանդնաթափ , ժողովուրդը ոչ կամք և ոչ սիրտ կամ աշխոյժ ունէր պատերազմ : Պարսկական պետութեան վատթարանալուն և կործանման պատճառքն ահաւասիկ այս բարյական ախտերն են դլխաւորապէս :

Աթենացիք , որ երբեմն դուռացին ընդ Ասփա և բարձրացան , նոյն պէս բարյական ախտիւք տկարացած անկման ընդ լծով Մակեդոնայի ֆիլիսպառուի : Քանզի զառածան ի թատերասիրութիւն , ի դրօսանս և ի խաղս . պատերազմական ծախուց յատկացեալ գանձերն շռայլեցին ի շինութիւն զրօսարանաց և ի ծախս զրօսանաց , զուարձութիւն բանատիրական և հրճիւ երաժշտական կը խնդրէին մոլեղին , ուստի և անբաւական և անյարմար եղան ի տոկ աշխատութեանց և նեղութեանց մարտի :

Մեր աղդին տկարութեան և անկման պատճառներն ալ միտք բերենք : Աղդային պատմութեան տեղեակ ամէն ոք զիտէ թէ ինչ են այն պատճառք : Միջին Տիդրան թերեւ մեր հզօրադոյն թագաւորն համարելի է . ինչո՞ւ յաղթեցաւ ի չուովմացեցոց : Եթէ չհամազդի պատմչաց պարտ է հաւատալ , ինչպէս պարտ է , հպարտութեամբը պարտեցաւնա . քանզի լուկուլսոց ցսիրտ Հայաստանի միեցաւ , և ոչ ոք կը համարձակէր նորա գալրստան աղդ առնել Տիդրանայ , քանզի առաջին անդամ լուր տառողն մահապարտ եղաւ իբրեւ անվստահ ի զօրութիւն Տիդրանայ : Ինչ չարիք հասուցին աղդին վասակներ : Ինձիւեան Հայաստանեաց Հնախօսութեան Բ . Հատորյն վերջերն ընդարձակ կը խօսի այս մեր աղդին մոլութեանց և նոցա արդեանց վերայ , երկառակութեան , նախանձու , քսութեան , մատ-

նութեան և ուրացելոց դաւաճանութեանց վերայ , և կ'ըսէ այս ախտից համար թէ « եղծիչք են հասարակաց խաղաղութեան , պատճառք աղքատութեան և ամենայն աղիտից : »

Ուրեմն բարյական դաստիարակութիւնը՝ դաստիարակութեան գերադայն մասն է , քանզի զմարդ քան զկենդանիս զեր ՚ի վերոյ բարձրացնող որպիսութիւնը , բարյական բնութիւնը , ունի առարկայ : Նաև , դաստիարակութեան այս ճիշդն որչափ բարձր նոյնչափ կարեոր և կենսական է , քանզի աղդաց և անհատից անկման և կանգման , թշուառութեան և երջանկութեան պատճառքն բարյականին յուր կամ լաւ վիճակէն կ'արտադրին :

Ուրեմն կարեոր է ի միտ առնուլ թէ աղդին մարմնական և իմացական զօրութեանը միայն աշխատիլ բաւական չէ , որդիք Հայկայ , կ'այ ուրիշ զօրութիւն մի յորում է անհատին և աղդին կեանքն . բարյական զօրութիւն , բարյական ուղիղ բնութեան մէջ , առանց որոյ ո և է աղդի կանդնումն անկարելի է :

Թէև ստանանք մարմնոյ և իմացականի զօրութիւն , այսինքն գիտութեամբ և ուսմամբ բարդաւաճին մեր իմացական զօրութիւնք , չենք կանգնիր . բարյականին նեցուկը անհրաժեշտ է , մանաւանդ թէ նորա հարուածք մեր մարմնական և իմացական զօրութիւններն կընան կործանել , և , որ չարագոյնն է , զնոսա մեր խորագոյն կործանման պատճառներ ընել :

Արդ , որպէսզի բարյական ախտից դարմանին վերայ խօսիլ կարենանք , նախ պարախինք խորհիլ թէ ի՞նչ աստիճանի ախտաւորութիւն է այն :

Ի բացատրութիւն ասոր՝ մարդկային աղդին վիճակն պիտի առնունքի քնին , ոչ թէ այս կամ այն աղդը , քանզի թէև աղդաց մէջ բարյական ախտաւորութեան այլ և այլ աստիճան եղած է , և գըլխաւորապէս այն աստիճանաց համեմատ մին միւսում յաղթած է , սակայն ամենայն աղդք և աղինք , համօրէն մարդկային սեռն այն ապականութեան մէջ գտնուած են և կը գտնուին ցայսօր , թող որ դարման մի մեղմութիւն և աստիճան մ'ապաքինութիւն գործած է անոնցմէ ոմանց մէջ :

Այս խնդիրն մարդկային աղդին անկման խնդիրն է :

Ամէն աղդ , հետեւապէս Հայն , իբրեւ անդամ մարդկութեան համակործան անկեալ է , և որովհետեւ անկումն նոյն է , բոլոր աղդաց դարմանն ևս նոյն պիտի լինի :

Նպատակ չունիմ այսպիսի համառօտ գործոյ մէջ մարդկային անկման մանրամասն և կատարեալ նկարագրութիւնն ընելու , կ'ուղեմ միայն մէկ երկու գլխաւոր բաներ յիշել :

Զպիտի նկարեմ բարոյական գաղափարաց մասին մարդոց ահեղ խաւարը, և ոչ այն ողբալի շղթաներն, որք գիշամական աղասութիւն մարդոց կը կաշկանդեն և գերի կ'ընեն զայն. պիտի իջնեմ սրտին խորը, և հոն երկու սոսկալի որպիսութիւն պիտի ցուցնեմ: Այսչափը բաւական պիտի լինի այն առականութեան վերայ ուղիղ տեսութիւն ունենալու:

Մարդ երկու որոշիչ տարբերութիւն ունի յանասնոց, խորհելու կարողութիւն և բարոյական բնութիւն: Եթէ մարդ բարոյական բնութիւն չունենար՝ խորհելու կարողութեան անկարօտ կը լինէր. ահա անասունք չունին խորհելու կարողութիւն, վասն զի բարոյականութիւն չունին: Ռւտելու, խմելու, ինքզինք պաշտպանելու և պահպանելու, ապրելու, ծնանելու և զննեալս խնամելու համար խելք պէտք չէ, ահա անասունք բնազդմամբ այն ամէնք կը կատարեն:

Խելքը պէտք է իբրև արբանեակ բարոյականին, քանզի արդարութիւնը և անիրաւութիւնը խորհելով որոշել պէտք է, նիւթական բան չէ որ ճաշակելով կամ հոսոտելով ախորժ կամ անախորժ ըլլալին որոշենք: Խմացականութիւնն իբր քննիչ պաշտօնեայ է կամ քին, արդարութիւնն ու անիրաւութիւնը պիտի քննէ նա, որ սիրան կամ խիզն իւր հաւանութիւնը յայանէ և հոգւոյն թագաւորն այսինքն կամքն ալ վճիռ տայ:

Այս խորհրդածութեամբ կ'ուզէի նախ ցուցնել թէ արդարեւ մարդ բարոյական բնութեամբն է որ խակազէս կը գերազանցէ զանասունս, խմացական կարողութիւնք կ'արբանեկեն բարոյականին. Երկրորդ թէ մարդ խմացական և բարոյական գերազանցութիւններով օժտեալ է ոչ առ այլ ինչ, հապա որ արդարութիւնը ճանաչէ, սիրէ և դորձէ, կամ իւր պարտքերն կատարէ. Եթէ ոչ իւր բարձրութիւնը ոչ միայն պատիւ չինիր, այլ և ըստ այնմ չինցաղելով չարաչար կը նուաստանայ քան զանասունս:

Գիտենք թէ կարդ մի զգացողութիւններ կան բնական անուանեալ, որ ըստ մասին հասարակ են մարդուն և անբանին. բնազդամունք, ախորժակը, հակամիտութիւնք և կիրք: Անասունը կ'ուտէ վասն զի ախորժակ ունի և հեշտանք կամ ախորժ կ'զգայ. Եթէ մարդն ևս նոյնպէս ուտէ կը հաւասարի անամսոյն: Սակայն մարդ բարոյական շարժառիթ մի ունենալու է, որ այն դործողութիւններն ըստ երեսութիւն միայն անասնական լինին, իսկ ըստ նպատակին կամ ներքին բնութեամբ՝ մարդկային լինին: Այսպիսի գործողութիւններ աղնուացնող զգացմանց մին է փափաք մի որ պարտքերը կատարելու կարողութիւն ունենայ: Թէ մարդ ուտելու, խմելու և միւս

ախորժակներն ևս կատարելու մէջ հեշտանքն ունի նպատակ՝ աշխարհի վիճակն ակն յանդիման կը ցուցնէ զայն:

Կերակուրք իրենց կատարեալ պարզութեան մէջ կատարեալ յարմարութիւն ունին զմարդ մնուցանելու և զօրացնելու, ուրեմն պարտքը կատարելու համար կարեոր մնունդ առնուլ չէ նպատակն, երբ մարդ այնչափ հոգ կը տանի կամ տանիլ կու տայ կերակրոց համար, որ լինին որչափ հնար է համեղ, շատ ուտելի, ախորժ գրդոող համար մեմային օժանդակներով և բազմատեսակ:

Եւ ի՞նչ կը նշանակեն մանաւանդ այն ջանքերն, որով մարդիկ աւելրդ ախորժակներ կը յօրինեն իրենց: Զոր օրինակ, յայտնի է թէ ծխախոսոյ ախորժակն բնականչէ, բնութիւնը մեծ դիմադրութիւններէ և գժկամակութիւններէ եւսկ կը բարեկամանայ նմա: Ծխախոտոյ, քթախոսոյ, ափիննի, ոգելից զանազան ըմպելեաց անչափ գործածութիւնք կը նշանակեն մարդուն հեշտասիրութիւնը, հետեւապէս անկումն ի մարդկային բարձրութենէ:

Նոյնպէս անասնական աստիճանի գիտաւորութեամբ կը կատարէ մարդ իւր բարձրագոյն բազմանքն, այսինքն գիտութեան, զօրութեան, սաայտածոց, բարեկամաց, պատուոյ և զաւակաց տէր լինել կը ջանայ և կը ճգնի իւր անձին ի նպաստ, իւր հանգստեան, իւր խոկ երջանկութեան համար. ուրիշին համար բան մի չըներ, եթէ ոչ առ հարկի: Ընտանեաց խնամ կը տանի, քանզի այնաէս կաղմուած է բնութիւնը, որ չկրնար նոցա նեղութիւններն տեսմնելով հանդիսաւ լինել: Ծնողաց և կառավարութեան կը հնազանդի, ոչ զի պարտքը կատարէ, այլ որ չպատժուի կամ չանարդուի: Ընկերական զանազան պարտքերն երբեմն կը կատարէ, սակայն ոչ իւրեւ պարտք, այլ իւր միջոց իւր բարձանաց, կամ վասն զի հարկ ի վերայ կայ, կամ վասն զի պատիւ մի կ'ակնկալէ:

Անձնիւր ոք բարձանքի մի անձնասուր է, զայն կատարել իւր նպատակն է, ինչ որ կ'ընէ իւրեւ միջոց նորին կը գործածէ: Թէպէտ վիտամիլութիւն և հեշտասիրութիւն մարդկային սրտին երկու գրեստաւոր ախտելն են, սակայն կէսք միոյն և այլք միւսոյն հետամնւտ են իւրեւ նախապատիւ բարեաց: Այսպէս որ հեշտասիրն զպատիւ աննկատ կ'ընէ ի հարկին, և փառամնն զէշտ կ'արհամարհէ շատ անդամ:

Այս երկու ախտելն զանազան ձևոց, առարկայից և մինչև իսկ առաքինական կերպարանաց տակ կը մոնեն: Ոմն զարդու է մոլի, ոմն բարձի և համբաւոյ, ոմն խաղուց, այլ ոք նուալեաց, կէսք անարդ և խայտառակ ախորժակաց: Իւրեւ միջոց ո՛ւ և իցէ բարձանք

կատարելու առ հասարակ կը խնդրեն զդրամ, որով վայելեն զոր ինչ երջանկոթեան պայման կը համարին: Այսպէս ամէն ոք կ'աշխատի իշահ, ի հանգիստ և ի փառս անձին. արուեստով կը զբաղի, առ և տուր կ'ընէ, կը վարդապետէ, կը խմբագրէ, կը մատենադրէ, քաղաքավարոթիւն, բարեկամոթիւն կ'ընէ ոչ իշահ և ի բարօրոթիւն ընկերութեան, այլ անձին: Չիսորհիր թէ ընկերական է, և աշխարհ իւր մարդասիրական գործոց և անձնուիրութեան պէտք ունի, ինք զինք կամ զիւրսն կը խորհի: Յընթացս իւր, հետևապէս, կ'ընէ զոր ինչ նպաստաւոր կը վարկանի ինպատակն, կը շողոքորթէ, կը կեղծէ, կը ստէ, կը խարդախէ, կ'ուրանայ, կը բամբասէ, կը զրպարտէ, քանդի մարդկութենէ վերջացեալ է, արդարութիւն չխնդրեր, այլ զհանգիստ և զփառս անձին:

Միթէ մարդուն այս վիճակը անկեալ չէ: Արարին զնա այս ոգւո՞վ ստեղծեց: ինք իր մէջ կծկելո՞ւ և դուրսէն առնլով դուրս չտալո՞ւ ընութեամբ: Աստուծոյ այլ արարածք ի՞նչ կ'ընեն, որո՞ւ համար կը գործեն: Ո՛վ արև, ո՛վ լրտին, ամազ, օդ, որո՞ւ համար կը գործէ: “Բուսոց և կենդանեաց համար,” կը պատասխանեն: Ո՛ բուսելինք, ծաղկունք, թուփք և ծառք, որո՞ւ համար կ'ածիք, կը տերեկիք, կը ծաղկիք, կը բուրեք, կը պտղաբրեք և կը չորնաք: կը պատասխանեն, “կենդանեաց համար:” կենդանիք, որո՞ւ համար են ձեր բեռնակրել, ձեր ուտել խմել, ձեր միս, ձեր մորթ, ձեր կաթըն, ձեր ձու, ձեր դայլայլիք: “Մարդուն համար են,” կ'աղաղակեն միահամուռ համադոչ: Դուք ամէնքդ որ կայք ի բնութեան, դոյութիւնք իւրաքանչիւր, որո՞ւ համար կը գործէք: “Ուրիշներուն համար,” կը պատասխանեն համաձայն աղաղակաւ:

Ի՞նչ կ'ըսէք, մարդն անկեալ է թէ ոչ: Ի՞նչ օգուտ եթէ դուք դանդաղիք ի պատասխանի, քանդի էք համօրէն միաձայն կը գոչեն թէ մարդ անկեալ է, կը վճռեն, կը քարողեն:

Մարդկային շրմունք զինչ և ըսեն, մարդկային սիրտ “Ես”, կ'ըսէ միշտ: Մարդ, ո՞վ է աշխատութեանցդ նպատակն: “Ես:” Մարդ, ո՞յլ են ձեռքբններդ: “Ի՞մ:” Մարդ, ո՞ւմ կը վայէ հաճոյք, շահ և պատիւ: “Ի՞նձ,” կը գոչէ սիրտն: Մինչ բնութեան մէջ ամենայն ինչ, խոտոյ ծիլէն մինչև երկնարերձ ծառն, աննշմարելի որդէն մինչև ամենի կենդանին, կ'աշխատին ուրիշին համար և օգուտ կը գործեն անձնուէր, մարդը, այս տիեղերական օրէնքէն դուրս ելած, իւր համար կը գործէ: մի և նոյն եՍն է որ դոյութեանց այս սոսկալի հրեշին բոլոր գործոց, խորհրդոց, բաղձանաց, վշտաց և ուրախութեանց մէջ կ'երեխ այլ և այլ ձեռով:

Մարդ իւր անձնասիրութեամբն կամ յօդուտ ընկերաց չդործեւ լովն՝ կը նուաստանայ քան զյետին փուշն ու որդ: Բայց վասն զի կը խարէ նաև, կը խարդախէ, կ'ատէ, կը հարստահարէ, կ'արատէ, և կ'սպաննէ, այսու ո՞ւր կ'իջնէ, նուաստութեան անդունդին յատակէն վար ո՞ւր: ի՞նչ է քան զայն ստորնադոյն կայանին անուն, դո՞ւր ըսէք:

Աւաղ որ վախճան չեղաւ նկարագրին, զոր ինչ ցայս վայր ըսինք, բաղդատաբար թեթև էր, անկման խորութիւնը ասկէ ետև պիտի դիտենք: Դեռ անձնասիրութիւնը տեսանք, նոր պիտի տեսնենք անձնապաշտութիւնը: Գեռ եղբայրական պարտուց զանց առնելն նկատեցինք, պիտի նկատենք այժմ՝ որդիականին զանցառութիւնը:

Մարդ արարած է, ուրեմն արարիչ մ'ունի, յօրմէ է իւր գոյութիւնն ու կեանքը: Նա չնորհած է նմա բանական և բարոյական բնութիւն, որով կը գերազանցէ և կը կառավարէ բնական և կենդանական զօրութիւններն աշխարհի: Իւր Արարչէն ընդունած է մարմին սքանչելի և գերազանց, ընդարձակ երկիր մի ի բնակարան՝ աստեղազարդ ձեղուամբ, լայնածաւալ ծովեր պարարտ և համեղ ձկամբք, բեղմնաւորիչ գետեր, քաղցրախովով վտակներ, վճիտ աղբիւրներ, քաղցրաբայր և գեղակիթիթ ծաղիկներ, համեղ պտուղներ, կենսաբեր ճառագայթներ, հեշտաշրմն օդ, օդալաց նուագածուներ, ճարտար և հզօր սպասաւորներ երկոտանի և չըրքոտանի:

Ուրեմն մարդ ինքն և իւրքն Աստուծոյ են: Ինչ որ Արարչէն ունի զամենայն պարտի նմա զոհել, նաև զանձն՝ անհուն երախագիտութեամբ: սակայն ոչ ոք է որ այս փառաւոր պարտքը կատարէ: Մարդ պարտ էր զԱրարիչն ճանաչել իւր վեհապետն ու օրէնսդիլն, սակայն ընդհակառակն կ'ուզէ ինքնիշխան լինել, և, եթէ ձեռնհաս լինի, սրբագրել նորա օրէնքն: Այնչափ ներքին և արտաքին, բնական և բարոյական բարիք ունի Արարչէն, սակայն փոխանակ գոհ սրտիւ և անկեղծ վստահութեամբ ընդունելու նորա տնօրինութիւններն, աներաւ կը համարի զնա, երբ Նա մարդուն բաղձանաց համաձայն չըկարգագրեր բոլոր պարագայքը: Արարչին սիրոյն, կարողութեանն և իմաստութեանը արդեամբքն և փաստիւք լի է ինքն և շրջապատեալ, սակայն փոխանակ վստահութեամբ զԱյն պատուելու, անզդամ և ամբարտաւան հոգւով կը հնարի անձամբ զանձն երանաւէտելու, անկախ յԱրարչէն: զոր ինչ պայման կը համարի իւր երջանկութեան, կը ջանայ բոլոր ուժով ստանալ զնոյն, պահել յամբի, չկարօտիլ ումեք: Եւ քանդի զոր ինչ Արարչին պիտի ընէր իրեն՝ անձամբ կ'ուզէ ընել, Արարիչն ալ, թէև իւր ինսամին ի սպառ չբառ-

նար, սակայն երբեմն այնպիսի բաներ կ'ընէ, որ ապստամբ զաւկին ուսուցանէ թէ ինք իր Աստուածն չկրնար լինել. սակայն մարդ իր ներգութեանց մէջն չուզեր յԱստուածն նայիլ և ընթացքն առ Նա ուղղել: իր շուարմանց մէջ անհուն իմաստնոյն չդիմեր. իւր վտանգաց մէջ անհուն չզօրին չապաւինիր. իւր աղիսից մէջ անհուն Բարւոյն չաղղակեր. ընդհակառակն արարածոց կը դիմէ, մարդու, բարեկամի, կամ ընթերցմանց, կամ խաղուց, կամ զինուց, կամ մահուան: Փոխանակ չզօրին առջեւ ի ծունր գալու, կու գայ նարտի տախտակին. ըմպելեաց շիշին առջեւ կ'երկրպագէ և միմիթար կը հայցէ: Անհուն էն պաշտելէ կը հրաժարի, և խոր սպասաւորաց, փանարի արարածոց ոտքը կ'անկանի. անկումն ողբարի, անկումն յիմարական, անկումն խորին. ո՞հ, անկերալ է մարդ:

Տեսնենք արդ թէ բնութիւնն ի՞նչ վկայութիւն կուտայ այս մասին անկման:

Ամենայն արարածք վախճան ունին յոր կը դիմեն: Գոյութեանց մէջ ազնուութեան կարդ մի կայ, զոր բանականութիւնը սկզբնական թելադրութեամբ կարծես թէ կ'ընդունի: Յաջ բանին սոլունն և թռչուն նոյն պատիւն չունին: Ազնուութեան այս կարգին համեմատ իրարու կը ծառայեն կամ իրարու կը նուիրին: Անկենդան տարերը բուտոց կը ծառայեն. հողը, ջուրը, օդը, արեւ բուսեղինաց ճարակ կը լինին. և բուսեղէնք կենդանեաց կեր կը լինին, կենդանիք ալ մարդոց կը ծառայեն բիւրազդի եղանակօք:

Կան այնպիսի մարմիններ կամ գունդեր, որոց անչափ մեծութիւնն անըմբունելի է մեր մտաց, սակայն ի պատճառս յոյժ հեռաւորութեան չեն երկեր մեր աչաց: Կան ընդհակառակն յոյժ փոքր մարմիններ, որ չեն մեզ նշմարելի ի պատճառս յոյժ փոքրկութեան: Չուկն ինչ ընդարձակութիւն որ կը դմնէ համատարած ովկիանու մէջ, կայ կենդանի գոյակ՝ որ զնոյն կը դմնէ կաթիլ մի ջրոյ մէջ, երթալով երթալով չկրնար այն ովկիանին, այն կաթիլին միւս եւ զերքը համնիլ: Մէկ կաթիլի մէջ անթիւ բաղմութիւն կենդանեաց կայ, ըստ կենդանաբանից, զորս չենք տեսներ և չենք տարակուակիր. և չենք դիտեր բնաւ թէ այնպիսի անծանօթ աշխարհներէ մեզի ծառայութիւն կը մատուցուի: Այսկայն ճշմորիս է թէ նշմարելի կենդանիք զաննշմարելիս ուտելով կը սնանին, և հետզհետէ կարդէ ի կարդ վեր կ'ելլեն անձնութեամբ և մարդուն ծառայութիւն կ'ընեն: Զոր օրինակ, փոքր զեռուններ աննշմարելի ճճներով կը սնանին, հաւերն ու բարերն այն զեռուններն կ'ուտեն, և մարդ զհաւն և զհաւիթ կ'ուտէ:

Կը տեսնենք թէ առանց ծառայութեան և վախճանի բան չկայ, մանաւանդ կը մակարերենք թէ պէտք չէ գտնուի: Գոյութիւնք իշրարու զո՞հ կը լինին, ստորինք գերակայից, և երկրի վերայ ամենայն ինչ անմիջական նպատակ մ'ունի, սակայն ամենուն անդրագոյն վախճանը մարդն է, ամէնն ալ ինա կը մատչին ուղղակի կամ անուղղակի:

Ինչպէս որ լուսինն երկրի շուրջը կը գառնայ, երկիրն լուսնով հանդերձ կը գառնայ արեգակն շուրջը, արեգակն ևս իւր մոլորակներով հանդերձ առաւել մեծ կեդրոնի մի շուրջն, նոյնպէս անշմարելի կենդանին քան զինքն բարձրասահիճան կամ մեծագոյն կենդանագույն կը ծառայէ, որպէս թէ նորա շուրջը կը գառնայ, ստիկա ալ քան զինքն բարձրագունին շուրջը: Այսպէս երկրի համայն գոյութիւնք իրարու շուրջ գառնալով բուսական և կենդանական շրջաններ կը կազմեն, և ամէնը իրենց մանրամանը արբանեկօք կը գառնան իրենց արեւուն այսինքն մարդուն շուրջը: Այսու իրենց պաշտօնը կը կատարեն, իբրև արարած իրենց վախճանին կը ծառայէն:

Մարդը:

Ո՞հեղ ճշմարտութիւն, մարդ իւր շրջանը չկատարեր քան զինքն գերագունին շուրջը: Զնչին որդը, փոշոյ հաստիկը, համօրէն արարածք իրենց շրջանը հաւատարմութեամբ կը կատարեն, սակայն մարդուն իրենց շրջանը հաւատարմութեամբ կը կատարեր. մարդը Աստուծոյ բանակա՞ն արարածը, զիւրն չկատարեր. մարդը տիեզերաց մէջ սոսկալի բացառութիւն մ'է, քան զիոշին ստորին կացութիւն. ո՞հ, ի՞նչ խոր է անկումիդ, ով մարդ:

Ըստ սահմանագրութեան բարերար Արարչին գոյութիւնք երկրի կ'արբանեկեն մարդուն, բոլորը կը ժողովին և կը գառնան նորա շուրջն, սակայն մարդ փոխանակ այն արբանեկօք գառնալու իւր Արարչին կամ Արեւուն շուրջը, զանմնք ամէնը կը կասեցուցանէ իւր շուրջը, որպէս թէ իւր զօրօքն, սատուածատուր զօրօքն կ'ապստամբի տիեզերակալ Արարչին: Չուզեր այն լուսատու և կենսաբաշխ Արեւուն զերակալ թէպէտ նա իւր ճառադայթներն չքաշեր. մարդ շուրջը գառնալ, թէպէտ նա իւր ճառադայթներն չքաշեր. ինքինքն իւր Արեւուն լինել կ'ուզէ. ինքինքն երջանիկ ընել, որ Աստուծոյ միայն է: Ուրեմն մարդ Աստուծած լինել կ'ուզէ: Ասիկա յայտնի է նաև մարդոց հետ ունեցած վարմունքէն:

Յոլոր մարդիկ եղբարը են, հաւասար են, անմահութեան և բանական ու բարյական բնութեան նայելով զուգակիս են, սակայն մարդ կ'ուզէ որ ուրիշներ իրենց հաւասար մեծութեամբ իր շուրջը գառնան, ինքինքն մեծագոյն կը համարի քան զայս: Այս, կ'ուզէ որ մարդիկ զոր ինչ Աստուծոյ կը պարտին՝ իրեն ընեն այն ամէնը:

կը փափաքի որ ամենայն ոք, որ իւր շուրջն է, իւր կամքը կատարէ . ամէն ոք իր կարծիքն յարդէ, ամէն ոք իւր խորհուրդն հարցնէ, ամէն ոք իրմէ կախումն ունենայ, ամէն ոք զինքը գտիէ, իւր վերայ խօսի, և իւր ունէ մէկ գերազանցութեան, գեղցն, հանճարոյն, ճարտարխոսութեանը, զօրութեանը, ճոխութեանը կամ ուրիշ մէկ առաւելութեան վերայ պահանձնայ: Եթէ մարդիկ զնա սիրեն յանշափս, երկրպագութիւն և պաշտօն մատուցանեն, չհրաժարիր. մեծ ուրախութեամբ, յիմար ամբարաւաւանութեամբ կ'ընդունի: Կը փափաքի որ իբրև քան զինքն թեթև մարմիններ մարդիկ յինքն քառին, նոցա զարմանք, ուշադրութիւն, գովեստ, այցելութիւն յինքն ձգուին:

Մարդկային անկման այս նկարագիրն դիզարանութեամբ չէ՝ իւրաքանչիւրի ուշադրութիւն բաւական է հաստատել. մարդոց ներկայն և անցեալն ամէն օր ասիկա կը հաստատէ: Ո՛վ որ պատմութիւններն ուշիւ կարդայ, իւր շուրջը դարձող գործերն լաւ նկատէ, և իւր իսկ փափաքներն ու շարժառիթներն դիտէ, պիտի խոստովանի թէ մարդ անկեալ է: Մարդ ինքինք աստուածացունել ուղելով որչափ որ բարձր ենել ջանացած է, այն համեմատութեամբ նուաստութեան մէջ խորասոյզ անկեալ է: Մինչ կը մտաբերէ աստուծութեան վեհափառ և բարձրաբերձ դահովքը բազմիլ, շղթայակապ ի կրից՝ կայ կը մնայ գերաւթեան բանտին մէջ, ստորերկեայ խաւարչոին բանտին մէջ, և տակաւին այն անդնդախոր փոսէն տիեզերքը կառավարել կ'ուղէ: Հոն իւր յիմար սրտին մշտահունչ սէդայինն է “ԵՍ, ԵՍ, ԵՍ”: դու ի՞նչ, հէ՛ք մարդ: կը պատմուի թէ խենթեր եղած են որ ինքինքնին այս կամ այն թաղաւորին տեղ դրած են. ո՞հ, աշխարհս յիմարանոց մ'է, ամէն մարդինքինք արարածոց թագաւորը կը համարի:

Պէտք է հսս յուշ լինի մեղ թէ մարդկային ազգին աղէտից բուն պատճառն նորա այս անկումն է: Մարդ երջանկութեան կը տենչայ, սակայն անհնար է այլազդ յադել այն պապակը, բայց միայն իը բնութեան պահանջներն կատարելով: Մարդ ունի անսամսական բնութիւն, որով քան զինքն ստորին արարածոց շղթային կը յօդի, և ունի բարյական բնութիւն, որով քան զինքն բարձրագունից և մինչեւ Աստուծոյ հետ կը կապուի: Մարդուն ստորին բնութեան մէջ կան ուտել են, բարյական բնութեան մէջ կան բարույ, արդարութեան, առաքինութեան և սիրոյ գաղտափարներն կամ պահանջներն: Մարդ այնպիսի կաղմութեամբ ստեղծեալ է, որ առանց զԱրարին պաշտելու և ընկերն սիրելու անկարելի է որ երջանիկ լինի: Մարդուն բարյական

բնութեան պահանջներն այս երկու պարտուց մէջ բովանդակեալ են, և զանոնք կատարելով միայն կրնայ յագիլ և հանգչիլ: Մարդուն մարմինն ինիւթոյ է և ի նիւթականութենէ կ'ընդունի մնունդ՝ ուտելով, խմելով, չնչելով են. իսկ հոգին յԱստուծոյ է, և ի Նմանէ միայն իւր մնունդն ու յագուրդ կրնայ դանել, կամաւ զայն վայելելով, Նորա հետ որդեկան, հնաղանդ և սիրալիր յարաբերութիւն ունենալով. և քանդի մարդ ասիկա չըներ, չյագենար ։ Թէև մարմինը կը յագեցնէ, չհանգչիր սիրալը. չափազանց կերպով մարմնական հաճոյք վայելելու կը ջանայ, տակաւին անցագ կը մնայ հոգին. նորանոր ախորժակներ կը յօրինէ, զնոսա ևս կը յագեցնէ ջերմ ծառայութեամբ, դարձեալ անհանգիստ է, և պիտի մնայ այնպէս ինչ որ ալընէ, մինչև որ զչայրն իւր հոգւոյն վայելէ:

Ահա ինքնացայտ կը տեսնուի մարդկային մարմնոյ անկման կամ տկարութեանց և ախտակրութեանց պատճառն ալ: Հոգւոյն առամքը անձնասիրութեան և անձնապաշտութեան ժանաժուտ թունով լի է. կը մերժէ մարդասիրութեան և աստուածպաշտութեան բարձր և ճշմարիտ ուրախութիւններն ։ հոգին դժոհն, անյագ և սովեալ կ'ընկղզմի ստորին վայելից և հետութեանց մէջ. հեշտութեան հոսանքն առատօրէն ներս քաշել կը ջանայ, որով մարմնոյ շինուածն կը խանգարի, չընար տոկալ այնպիսի անբնական և չարաչար դորժածութեան ընդ երկար: Այսպէսով մարմինը կ'անկանի յուժոյ, ի գեղց, ի գունոյ, անկումն ողբալի: Կ'անկանի ի տկարութիւնս և յախտս զանազան, անկումն սոսկալի:

Հոգւոյն թշուառութեան աստիճանը կ'առաւելու դրական պատճառներով: Ոչ միայն զուրկ է իւր կենսատու մնունդէն, կ'ըսեմ, ոչ միայն չսիրեր զընկերն և զընարիչ, այլ և կ'ատէ և կը չարագործէ: Ինչ որ իւր երջանկութիւնը պիտի աճէր, իւր թշուառութիւնը կը յաւելու: Եթէ սիրէր զընկերն, նորա առողջ կամ հարուստ կամ բարձրացեալ վիճակն ուրախութիւն պիտի պատճառէր իրեն, սակայն այս անկեալ և ատող հոգին կը նախանձի, հոգերով կը մնու, չար ցանկութեամբ կը չարչարուի. Եթէ ձեռքէն կու գայ, կը նկրտի ձգել զընկերն ի պատույ, յընչից, յիշանսութենէ են:

Գարձեալ, եթէ մարդ զԱրդառած պաշտէր, զնա իւր միակ բաժինն ու գանձն ընէր, անանց և անկողզապելի բաժին կ'ունենար: Մակայն փոխանակ Արարչին ուրիշ բաներ իբր պայման երանութեան կը խնդրէ և կը պահէ: Արարին ալ ի զդաստութիւն մարդոյ երբեմն այն պայմանը կը բաժնէն մարդէն փոխանակ զմարդ մահուամբ բաժնելու ի սին պայմանէն: Այսպէս աշխարհի վերայ շատ կորուսաներ

և վորփիսութիւններ կը կատարուին նախախնամութեամբ Մարդասիրին . գեղեցկութիւն կը խաթարի , զօրութիւն կը տկարանայ , հաւատութիւն կը կարնչի , իշխանութիւն կ'առնուի , դահ կը կործանի , զաւակ կը մեռանի , յոյս կը դերևի , այլովքն հանդերձ : Այս գէպքեր ո՞րչափ ցաւ և վիշտ կը պատճառեն մարդոց :

Ո՞վ կրնայ ուրանալ մարդկան անկումն , ո՞վ անզգայ է իւր աղետից . եթէ զանկումն ոչ գէթ անկման ցաւերն ու վէրքն կը դդայ : Եթէ մարդուն սրախն խորը կը ծող որդերն , դիշատիչ առիւծներն , անսպորդն վագրերն և հեշտախիտ շուներն չեն տեսնուիր , սակայն նոցա մանչիւնը կը լսենք՝ երբ մարդ կը կատաղի , նոցա հարուած ներն կը գուշակենք՝ երբ մարդ կը հառաջէ , նոցա ճիրանունքն և ժանիք կ'երևութանան՝ երբ մարմոցն վէրքերն կը դիտենք , նոցա արիւնարբու երախներն կ'երևակայենք՝ երբ արեան ցամքին կը գետենք :

Ո՞հ , մարդ ի բարձանց ի խոր վիճ անկեալ է , վիրաւոր և խոցոտ , ջախջախ և ճմիեալ , վտակահոս արտասուք և դեստահետ արիւնը իւր վիրաց արտահոսութիւննըն են :

Աշխարհ արդեօք ի՞նչ դարման պարտի ընել իւր ախտից , ի՞նչ միջոց պարտի դործածել աղատելու համար այն դժնդակ աղէսներէն որ ի դլուխ իւր լեռնացած են :

Եւ նախ տեսնենք թէ ի՞նչ անկատար և անզօր դարմաններ գործածուած են :

1. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

Սոկրատ եղաւ առաջինը որ զիկլիսովիայութիւն ծառայեցնել ուղեց մարդկան բարոյականին : Նա աստեղադիտական դննութիւններն իւր անօգուտ մարդոց օգտին և բարօրութեան թողլով , ողարապեցաւ ի բարոյական վարդապետութիւնս : Նորա հանապազրդեան զբաղումն էր աշակերտաց և ժողովրդեան խօսիլ յուղղութիւն բարուց , նաև ի բարեկարդութիւն վարչական օրինաց : Թէև յառաջքան զնա իմաստամբք ի սպառ զանց չեն ըներ զբարոյական , սակայն այսմ մասնաւոր փութով խնամ տանել ի Սոկրատայ կը սկսի :

Բայց ի՞նչ կը զօրէին փիկլիսովիայից չանք ի դարման մարդկային մահացու ախտից : Մարդ իւր անկումն կանդնելու համար այնպիսի լուաց կարօտ է , որ ոչ միայն տեսնէ զուր և զդիարգն իւր , ոյլ և զօրութիւն առնու որ կանդնի : Թողունք զօրութեան խնդիրն , վիլսովիայից լոյսն թափուր էր ի կենսաւորիչ չերմութենէ , և ոչ կարեսր պայծառութիւնն առնէր : Մարդկային ազգին բարոյականին վե-

րաբերեալ էական ինդրոց վրայ ոչ սակաւ մութ և մռայլ կայր ծաւալեալ անթափանց ի փիկլիսովիայ աչաց :

Այն խնդիրներն , որ ի լցու քրիստոնէութեան անաղօտ պայծառութեամբ փայլեցան , զորս Քրիստոսի վեց կամ եօթն տարուան աշակերտք այսօր պարզ կ'ըմբռնեն և վճռարար կ'արտայայտեն , առիմաստամբքն խնդիր էր գժուարալց : Յիշեցէք միանդամ զոր ինչ ցնորեցին նորա Աստուծոյ վրայ :

Թաղեծս զջուր համարեցաւ իրբ Աստուած . Անաքսիմանդր՝ զաստվերն , երկարակեաց և յամրածին աստուածներ . Անաքսիմէն՝ օդը . Անաքսադոր տիեզերաց կարգն ու շարժումն համարեցաւ արդասիք անսահման մուայ , սակայն ոչ ստեղծումն . Պիւթագոր՝ զշունչ ամենայնի . Քսենոփանէս անսահման և խմացական կը համարի վլստուած , սակայն նաև բնուչ ածականաւ կը ցուցնէ զաշխարհ . Եմպեղոկիլ չորս տարերբը . Պղաստն վարդապետեց թէ աշխարհիս Հայրն անանուաննելի է . . . աշխարհս և երկինք , աստղեր և հոգիք և այն ամենայն , զոր նախնեաց կրօնք աստուածացուցին , ամէնք աստուած է . Արիստոտէլ՝ մերթ զիմացականութիւն , մերթ զաշխարհ , մերթ եթերական հուրը . Քսենոկրատ ութ աստուած կը վարդապետէ , հինդրուսական , մէկ՝ բոլոր անմոլար աստղէրն իրեւ անդամներ Աստուծոյ , եօթներորդ՝ զարեգակին , ութերորդ՝ զլուսին . Թէօվիրաստ մերթ զիմացութիւն , մերթ զերկինս , մերթ զմի մի յաստեղաց . Զենոն՝ եթերական հուրը , հետևապէս աստուածացոյց արեգակը , լուսին , աստղերն , հրանիւթ մարմիններն , նաև օդը , երկիրը , քանզի երկնային հրամի հոգեորեալ են . նաև մեծ մարդիկ , վասն զի աստուածեղէն հուրն աւելի կը նշողէ ի նոսա : Ապաքէն ոմանց գաղափարն այնչափ խղճալի չէ . Պղաստն վարդապետութենէն կը հասկցուի միաստուածութիւն , թէև բազմաստուածութեան կերպարանին տակ : Անտիմթենէս ևս ըսաւ թէ ճշմարիտ Աստուած մէկ է : Սոկրատ լսու ևս կը ճանաչէր Աստուծոյ միութիւնը : Թէպէտ եղան նաև սակաւք , որ Աստուծոյ գոյութիւնը տարակուսելի կամ սուտ համարեցան :

Բարոյականի հիմունքը կրօնն է , և կրօնին հիմք՝ Աստուած . արդ , փիկլիսովիայից բարոյական վարդապետութիւններն ի՞նչ կրնան լինել , մինչդեռ հիման վրայ այնպիսի շիտ , աղօտ և պղաոր գաղափարներ ունին : Փիկլիսովիայութիւնն ի՞նչ կրցաւ ընել հեթանոսական կրօնին . ոչ ինչ : Սոկրատ չհամարձակեցաւ Արիստոգոսի ատենին առջև Աստուծոյ միութիւնն գաւանել , ընդհակառակն՝ երբ ամբաստանեցին թէ աստուածոց հակառակ կը խօսի , խստովանեցաւ և

հաստատեց թէ ինք ի նպաստ դից աշակերտած է զմանկախն։ Փիլիսոփայութիւնը մինչև իսկ չձեռնարկեց զգիս սրբել այն պիող ստորոգելիքէն, զորս դիցաբանութիւնը կ'ընծայէր նոցա, և այն աղաւեղի և զաղիր տօներէն, որ նոցա իբրև պատիւ ախորժելի կը մասուցանէին։

Ենականաց փիլիսոփայութիւնն ծանօթ է ամենուն։ Նոքա ամօթն ու պատկառանքը, որ մոլութեանց կարեոր սանձերն են, վատասրտութիւն կը համարէին, և թէ՝ ամէն ինչ կրնայ մարդ ընել այլոց առջև ընել համարձակ և անպատկառ։ Այն աստիճան խիստ և ծայրայեղ էին առաքինութեան մէջ, որ առաքինութեան անոնք ժողովրդեան ատելի կ'ընէին։

Զարմանալի՛ բան, գթութիւնը անկետ մարդոյն բնութեան մէջ աղնիւ և քաղցր ծաղիկ մ'է, թէև ոչ նախնի պայծառութեամբ միայլեալ. սակայն Ստոյիկեան փիլիսոփայութիւնը նկրտեցաւ ի բաց քերել և զայն իրու արատ ։ “Խօթամտութիւն է”, կ'ըսէ Եենեկա, “լինել կարեկից ընդ աղետս այլոց . . . իսկ խօթամտութիւն յայր իմաստուն ոչ պատկանի”։ Գեղեցիկ կշտամբանօք կ'եպերէ թօլէն. “Սայիկեամնք”, կ'ըսէ, “տապալեցին զկարդ բնութեան, ուղել զայն կարծելով։ Դրօշեալ իմն պղնձի և անդրի քարեղէն արարին զիմաստունն”։

Նուազ ցնորական չեն այն վարդապետութիւններն, զոր երկնեցին ի լուծումն սա ինդրոյն թէ մարդուն ճշմարիտ երջանկութիւնն ինչ բանի մէջ կը կայանայ, կամ մարդ ինչ բանի ի խնդիր պարտի լինել իրու ինպատակ անդրադոյն։ Այս նկատմամբ բոլոր վիլիստիայը գլխաւոր երկու վարդապետութիւն ունին. երկու աղանդ իրարուներհական։ Եպիկուրեանք հեշտութիւնը երջանկութիւն համարեցան, ուտել, խմել, խաղալ, երաժշաել, վաւաշել։ Այս վարդապետութիւնը հաստատելու համար յինչ մոլորութիւնս գլեցան, աւելորդ է պատմել։ Բայտ այսմ Եպիկուրեան փիլիսոփայը են նաև այժմ աշխարհի մեծ մասն. փիլիսոփայութիւն. լի է աշխարհ։

Իսկ Ստոյիկեանք առաքինութեան մէջ կայացուցին երանութիւնը, և պարտաւորեցան ըսել թէ ցաւերն չարիք չեն. և սաստիկ ցաւոց մէջ անոնցմէ մին, Պոսիդոնիոս, կ'աղաղակէր. “Ո՛վ ապիկար ցաւեր, թէև բուռն և սաստիկ լինիք, ոչ երբէք զձեղ չար պիտի կոշեմ” Ուրիշ մը, Դիոնեսիոս, ախտին ցաւերէն բարձրաձայն ճշեց. “Շատ տարիներ զոհեցի յուսումն փիլիսոփայութեան, և չեմ կը նար հանդուրժել ցաւոց, ուրեմն չար են ցաւեր” Սակայն այս ազանդաւորաց մոլորութեանց անհեթեթագոյնն էր այն որ կ'ըսէին թէ

“Ասյ բան, որով իմաստունը ի վեր է քան զԱստուած, քանդի նախը էութենէն ունի աներկեւանութիւնը, իսկ իմաստունն իրմէ,” քանդի կ'ըսէին թէ առաքինութիւնը մարդ իւր ջանիւքը ձեռք կը բերէ, իսկ ուրիշ բարիքներ կ'ընդունի ի դից։

Տեղի և ժամանակ չկայ, և ոչ պէտք, խօսելու Սկեպտիկեան, Հերակլիսեայ, Դեմոկրիտեայ և ուրիշ փիլիսոփայութեանց տկարութեանց վրայ. այաշավը հերիք է ի ցոյց մարդկային, և այն փիլիսոփայական ջանից և հանճարոյ անբաւականութեան. և անցնինք նոցա օրինակին կամ վարուց վերայ վայրիկ մը մտածելու։

Մարդկային ազգն, ինչպէս ի վերոյ բացատրուեցաւ, անկեալ է յանձնապաշտութիւն և յանձնամիջութիւն, որով զանազան մոլութեանց դերի կը լինի իւրաքանչիւր ըստ իւրում պարագայից։ Փիլիսոփայութիւնը թող որ ի կանգնումն աշխարհի չկարաց օգնել, փիլիսոփայը զանձինս իսկ չկարացին բարձրացունել։ Նոքա տղէտ և հասարակ մարդկան նման, և ես առաւել անձնասէր և փառամոլեղան։ Այսր ցուցիչ են ոմանց վարդապետութիւնք, որովք հեշտամիջունը մորդուն երջանկութիւն դրին։ Զանացին փաստարանութեամբ օրինաւոր ընել իրենց մոլութիւններն։

Մեծն Աղեքսանդր, կամ, ինչպէս ըստած է յարժանի, մեծն աւազակ, որ զաշխարհ արիւնը ըրաւ, փիլիսոփայ էր. անդստին յորորոյէ Արիստոտէլի աշակերտ էր. չդիտե՞ր սաշափ թէ անձին փառաց հազարաւոր անմահ էակներ զոհնել օրէն չէր, արդարութիւն չէր, անդգամնութիւն և վայրագութիւն էր, սակայն փառասիրութեան կամ անձնապաշտութեան ուժգին իղձն անդիմադրելի կերպով միլցաւ յառաջ, մինչև այնպիսի աշխարհ, որ ոչինչ յարաբերութիւն ունէր իւր երկրին, որ կինար ըսել “Զի՞ կայ մեր և քո”։

Դիոնեսիոս համբաւեալ բռնաւորն քերթող էր գէթ եթէ փիլիսոփայ չէր, և իւր պալատն լի էր փիլիսոփայիք և գիտուն անձերով։

Փառասիրութիւն և հապարտութիւն այնպիսի առաքինական կերպարանօք կը ծագտին ընդհանրապէս, որ շատեր կը խարուին նոյն ինքն գործողներն իսկ երբեմն ։ գործոյց բարոյական որպիսութիւնը գործին նպատակէն դասելի է. ուստի եթէ որ ի փիլիսոփայից ձրի աշակերտ այնու դիտմամբ թէ իւր իմաստը անզին են, կը մնափառէ, չառաքինանար Եթէ ուրիշ մը աղքատիկ կեանք կ'ընտրէ վասն զի չկրնար մեծատուն լինել, կամաւոր վիճակ չէ այն, ընտրութիւն չէ, չկրնար հարկ, զոր խորամանկութեամբ յառաքինութիւն կը կերպարանէ։

Արիստիպոս փիլիսոփայն, Սոկրատաց աշակերտ էր և կիւրենեան աղանդոյն պետ, փութաց ի Սիրակուսա, լսելով որ Գիոնեստիոսի

խնճոյից պալատը բայց էր գիտնոց և փիլիսոփայից ։ Արիստիպառու հոն իւր հեշտասէր և շուայտով սրախն բոցերն արքունի առաստութեամբ շինուցանել կ'ուղեր ։ Դիտդինէս կը բամբասէր զնա ըսելով թէ չպիտի ջանայր այնպէս հաճելի լինել բռնաւորին, եթէ հացիւ և ջրով գոհ լինել գիտնար ։ Իսկ Արիստիպառու կեպերեր զԴիտդինէս, թէ չպիտի շատանայր հացիւ և ջրով, եթէ թագաւորին հաճոյ լինել գիտնար ։ Այս իրողութիւնք կը ցուցնեն թէ փիլիսոփայք ևս զիրար կ'արհամարհէին և կը խոտէին հպարտութեամբ թէ Եպիկուրեանք հեշտութեան գերիներ էին, և թէ թերեւս Դիոդինեայ նմանիք առ չքաւորութեան բարեխառն էին և ոչ յառաքինութենէ ։

Դիոդինէս այնպէս բարձր կը համարէր զինքն քան զամենայն մարդիկ, որ կարծէր թէ ճշմարիտ մարդ միայն ինքն էր. այն լապտեր, զոր ի ձեռին «Մարդ կը ինդրեմ» կ'ըսէր նա կէս օրին, իւր սրախն ամբարտաւանութեան ցոլացումն էր. այո՛, նորա սէդ սիրտն ի լցու կը բերէր ։

Դիոդինէս այս ոգւովմ անշուշտ կը մնափառէր իբրև յաղթական յաղթականին Աշխարհի, այն պատասխանը տարով Աղեքսանդրի, ցուցնելով թէ ինք անկարօտ է նմա, անկարօտ է այն փառաց և ճուխութեան, զոր աշխարհակալք կը վայելեն. ինքն սակաւուք, այս ինքն կարասիւ, ցնցոտիով և գաւաղանաւ գոհ էր ։ Դիոդինէսինը նոյն մնափառութիւնն էր, որով Աղեքսանդրի սիրտ զեզուն էր, և ինք զինք որդի Արամազդայ կ'անուանէր. Երկուքն ևս յաստուածային բարձրութիւն մերձ կը կարծէին զիրենք ։ Աղեքսանդր տիեզերակալելով, իբր դամենայն ինչ իւր իշխանութեան տակ առնելով. իսկ Դիոդինէս աշխարհ արհամարհէրով, իբր անկարօտ, ինչպէս է Աստուած ։

Պղատոն ըսւ յանդիմանեց զԴիոդինէս, որ շքեղ դորդը կոխուաելով «Պղատոնի հպարտութեան վերայ կը կոխուաեմ» կ'ըսէր, երբ այցելեց Պղատոնի. և սա պատասխանեց «Այո», կը կոխուաես ուրիշ հպարտութեամբ ։

Փիլիսոփայք գուցէ քան զայր առաւել մնապարծ, հպարտ, արհամարհու, հեշտասէր ևն եղան, նաև բռնաւոր և անիրաւ ։ Ո.օէն Հռովմայեցւոց պատմութեան մէջ տեղ մը կ'ըսէ. «Բռնաւորութիւնս ի վար արկեալ յառնէ, որ պահծայր լինել փիլիսոփոս, չէ ինչ պատիւ փիլիսոփայութեան. և Ապափանոս Արիստինի աղադաւ յիշատակէ երեսուն բռնաւորս անուանիս ի պատմութեան Աթենայ, յորոց բազումք եղեն աշակերտք Առլիստայ» Ահա թերահաշիւ մը բռնաւոր փիլիսոփայից բազմութեան, և թէ փիլիսոփայից ջանքն ինչ արդիսնք

ունեցած է յաշակերտա և յաշխարհ ։ Ինձ զարմանք չեն, այնպիսի տեղեկութիւններ զարմանալի են նոցա, որ կը կարծեն թէ մարդ իւր ջանքովն ու խելքովը կարող է կատարեալ լինել, թէ ուսումն ու գիտութիւն աշխարհի բարեկարդութիւնն ու կեանքն են ։

Ուշ դեք, Սենեկա առաւել պարզ կը խօսի, «Այլազգ խօսիս,» ասէ, «և այլազգ կեաս . այդ իսկ, ով խեղաթիւրեալդ մոօք, և Եպիկուրայ և Զենոնայ ի գէմն ածաւ, բայց և նոքա ոչ սրպէս կէինն վարդապետէին, այլ թէ ո՛րպէս պարտ իցէ կեալ:» Ամէն մարդ առաւել կամ նուաղ ճանաչում ունի պարտոց, առաքինութեան շաւիղն առաւել կամ նուաղ որոշակի կը նշմարէ, սակայն չքալեր ընդայն, և չինար . գերի է մոլութեանցը ։ Փիլիսոփայից տարբերութիւնը առաւել յատակութեամբ և, մանաւանդ, պերճութեամբ պարտուց վերայ խօսելուն մէջ է ոչ թէ հորժելու ։

Չկարծուի թէ ժամանակաւ փիլիսոփայութիւնը կ'առնու այն զօրութիւնը, որում աշխարհ կարօտ է ։ Նախնի փիլիսոփայք իմացաւ կան զօրութեանց և նրբամտութեան կողմանէ բնաւ ստորին չինն կան զօրութիւնաց յամբամտութիւն կային: Ճամանակի մասին ևս քան զնորս, թերեւս առաւել հզօններ կային: Ճամանակի մասին ևս բաւական պատեհութիւն եղաւ թաղեսէն (640 ն. ք. դիք. ։) մինչեւ ի Քրիստոս և զինի ևս . այս բազմադարեան միջոցին մէջ աստուածային յայտնութենէն զուրկ մարդկային մեծամեծ հանճարներ աշխատեցան: Հաւանական է որ փիլիսոփայից մէկ քանին Հրէից, իբրև աղգին օրէնսդիրքն ու պատմութիւնն, ձեռք անցուցին Հին կտակարանն և անկէ լցու առին, կամ Հրէից գիտուններուն հետ տեսութիւն ըրին, ինչպէս կը կարծուի Պիւթադորի համար ։ Սակայն մանաւանդ երբ Քրիստոսի կրօնն ու լցու ծագեց յԵւրոպա, մարդկային լցոյն ընկղմեցաւ այն առատ և աստուածառաք լուսոյ մէջ, և այնուհետև անկարելի է մարդկային հանճարոյն բուն արդասիքը ուրացել, քանդի միտքը մեծ լցու և զօրութիւն ընկալաւ Քրիստոնէութենէ:

Ճշմարիտ է թէ փիլիսոփայութիւնը քիչ ժամանակ քրիստոնէութեան աղախնեց, և իւր առանձին ընթացքը վարեց աղատ, սակայն փիլիսոփայք, թէ և ոմանք անհաւատ, ամէնն ալ Աստուծոյ գրքէն փիլիսոփայից, թէ և ոմանք անհաւատ, ամէնն ալ Աստուծոյ գրքէն չաղաքական ի վար արկեալ յառնէ, որ պահծայր լինել փիլիսոփոս, չէ ինչ պատիւ փիլիսոփայութեան. և Ապափանոս Արիստինի աղադաւ յիշատակէ երեսուն բռնաւորս անուանիս ի պատմութեան Աթենայ, յորոց բազումք եղեն աշակերտք Առլիստայ» Ահա թերահաշիւ մը բռնաւոր փիլիսոփայից բազմութեան, և թէ փիլիսոփայից ջանքն ինչ արդիսնք

Փիլիսոփայութիւնը կամ միտքը ծայրայեղութենէ ի ծայրայեղութիւն տատանելով և մեծամեծ յեղափոխութիւններով շահեցաւ մը և սակաւ մի հանդարտեցաւ: Պագոն և Տեքարդ ճշմարտութիւնը ինդրելու լաւագոյն մեթոս վարդապետեցին, կարեսը

և մեծ դործ, սակայն ոչ ոք կրցած է կամ պիտի կրնայ ցուցնել իւր լուսավայր այն ճշմարտութիւններն որոց կարօտ է մարդ անկեսալ վիճակէն բարձրանալու համար: Բարոյական և կրօնական հիմնական խնդրոց նկատմամբ ինչ որ կրնային ըսել նախնեաց պարագլուխներն, ոչինչ տարբեր կրնային ըսել վերջինք, քանզի աղբիւր չկայ: Տարակուսական խօսքեր անկարող են զմարդ ի դործ շարժելու: մարդ պարզ, ստոյգ և հաստատուն ճշմարտութեանց կարօտ է իւր ընթացքը փոխելու համար: Ո՞ր մեծախոհ վիլխատիւցն, ո՞ր նրբամիտ դիտունը կարող է աստղերն զննելով, տարերքը լուծելով, երկրին խաւերն կարդալով դիտնալ կամ դտնել թէ ի՞նչ են Աստուծոյ բնութիւն և կամք քանի մի կարեոր նկատմամբ, ի՞նչ է մարդկան ծագման և անկման պատմութիւնը, ի՞նչ է մարդուն ստեղծման նպատակը որում պարտի դիմել, և ի՞նչ պիտի լինի յետ մահուան վիճակը:

Մինչև անդամ Սոկրատոյ, Պղատոնի, Պիոթագորայ և կիկերոնի պէս հանճարներ այսպիսի խնդրոց վերայ որոշ և հաստատուն գաղափարներ չկարացին ձեւացնել, և իրենց համար խկ անբաւական եղան վստահ շաւիղ ընտրել: Սոկրատ, իւր Պղատոնին վկայութեանը նայելով, թէ և միմիայն Աստուծած կը ճանաչէր, բայց երկչուս էր ի քառողել, կը ծաղրէր դիցաբանութիւնը, սակայն ոչ հրապարակաւ, և ռամպին հետ կ'երկրպակ էր ծաղրած դից ամիտին, և ի շունչ վախճանին, “Արիստոն,” ըստ իւր մտերմին. “աքաղաղ մի ուխտեցի Ասկղեպեայ, կատարէ ուխտս իմ կողմանէ, չմոռնաս:” Պղատոն նոյնպէս կը վեհերէր: Կիկերոն սկեպտիկեան անվստահութեամբ կը խօսի հոգւոյն անմահութեան վերայ: Պիոթագոր հանդերձեալ կենաց մէջ անմահ հոգւոյն զբաղմանց նկատմամբ ինչ ինչ դժուարութիւններ կը փարատէ հոգեփոխութեան վարդապետութեամբ, և իւր մարմնափոխութեան աղդաբանութիւնն անդամ կ'ընէ:

Արտաքէն ծանծաղամտութիւնն այնպիսեաց խոդալի է, որք մարդկութիւն, բանականութիւն ըսելով կը խրոխստան. ահա մեղ օրինակ վսեմախոհ, արի և գերիմաստ մարդկի, որ էական խնդրոց մասին չեն կընար անազօտ և յստակ խորհուրդներ ունենալ, կ'անկանին իմուրութիւնս, կը գլին ի հակասութիւնս, և կը վեհերին կենսական ճշմարտութիւնը որ միոյն Աստուծոյ վերայ ունեցան, հրապարակել համարձակի:

2. ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

Պատառիակութեան խացական մասին կարեոր են ուսմունք և դիտութիւնք: Կատարելութեան պայման մ'է խմացականին զօրանալն

ու զարդանալը սննդեամբ գիտութեանց: ասիկայ մերժելու հակառակութիւնը դործել չէ նպատակս, այլ սա ցուցնել թէ նոյա դործը ուրիշ է, չեն կընար մարդկային աղդը կանգնել:

Իմացական կարողութեանց զօրութեամբ բարոյականիք չեն ուղղուիր: Եթէ դժուարացյած դործողութեանց կնճիռներն լուծէ մասթեմաթիքայն, կրից շղթաներն անլոյծ կը մնան դեռ: Թող բնական դիտութիւնը յանշափս զարդանան, ուսանողք և ուսուցիչք դիտեն յարարածս Արարչին խորին իմաստութիւնն և գերազանց բարութիւնը, այս կերպով իմացականը կ'ընդարձակի և սիրաը կ'զմայի, սակայն չմիրեր: Ո՞ր կը մնայ դիտնական խուզարկութեանց աղդեցութիւն, մինչ մարդ հանապաղօր կը վայելէ Արարչին մեծամեծ երախտիքն, և սիրաը կը մնայ ապերախտ և անդպայ:

Թող աստեղպարաշն զգենու ամենէն հեռատես աշերն, թող գիտունն շարժէ երեւակայութեան թռիչներն. թող տիեզերաց ընդգարձակութեան մէջ ճամբորդեն, թող շրջին անթիւ գաւառներ: Թող դիտեն անհամար աշխարհներ, որ անըմբոնելի արագութեամբ կը սլանան: Թող նկատեն այն անտես բայց անմաշ շղթայն որ այն ահաղին գունդերն իրարու կը կապէ, կամ այն սանձը որ կը զսպէ զնոսա այն ահեղ արշաւանաց մէջ չըլարտուղիլ երրէք յորոշեալ շաւդաց: Թող նկատէ նաև այն ձեռքն, որ կը բռնէ այն սանձը, հզօր ձեռն:

Պատուական դիտութիւն, սակայն, աւազ, պարտաւորեալ են ի խոստովանութիւն դառն, թէ դիտութիւնը անկեալ մարդուն վնասակար կընայ ըլլալ:

Հանդարտ մտածենք: Եթէ մարդ զԱստուած ընդունած լինէր իր պաշտողանը, ո՞րչափ պիտի զօրանայր իւր վստահութիւնն ինա, ճանաչելով նորա հզօր զօրութիւնը: Եթէ մարդ զնա իւր բարերարն ու խմանական ընդունէր, սիրան ինչպիսի խորին պատկառանօք պիտի լիոյր, և պիտի յարմարագոյն լինէր ի պաշտել զԱյն: Եթէ զԱստուած իւր հայրն ընդունէր, դիտելով նորա անսահման տիեզերակարութիւնն ու դանձերն՝ որպիսի ցնձմամբ պիտի զեղցր սիրան և յուսով բազմաց ժառանգ լինելու: Սակայն, բարէ, մարդն այնու ակամբ չայցիր յԱստուած. Նորա օրէնքը զանց կ'ընէ և կ'ապստամբի, վասն որոյ չախորդիր այն զօրութիւնն ու խմանակութիւնը Արարքին վերաբերութեամբ խորհիլ. և եթէ խորհի, կը ճանաչէ այն Տէրը, զորոյ կամքը կ'անարդէ և կը կոտրէ: Աստուած հզօր է քան զկարծ իւր. կը փափաքի որ Աստուած չկենայ, և երբեմն բոլոր ուժով կը պատերազմի ի ցոյց թէ չիք Աստուած: Եւ եթէ ասիկայ ամօթա-

պարտ մոլորութիւն համարուի, իւր ոլաքներն կ'ուզգէ Քրիստոնէութեան, քանզի Սուրբ Գրոց մէջ կը տեսնէ այն Աստուծոյ ահեղ ստորոտելիքը :

Գիտութիւնը այլազդ ևս կը վնասէ բարոյական վիճակին: Ո՞չ ապարէն մարդ ամբարտաւանութեամբ կը բաղձայ կաթոդին և կ'ըղձայ պատուց և փառաց և մինչև Աստուածային ստորոդելեաց. գիտութեամբ կը փորձուի զանձն գերազանց համարելու քան զայլս, և մեծապատիւ մեծարանաց արժանաւոր: կը դիտէ աշխարհներ, յոյժ մեծամեծ և մանր մանր մարմններ, որոց գոյութեանն իսկ անդէտ են այլք. այսու կը հպարտանայ, իբր թէ ամենատեսութեան կարողութիւնն ստացաւ: կը տեսնէ գիտաւոր մի, մոլորակ մի, զոր այլք տեսած չեն, կ'ուռի և կը փքանայ, իբր թէ ինքն ստեղծեց զայն, իբր թէ իւր անմահ կենաց և համբաւոյ գահոյքն ըրաւ զայն, յաւերժական կեանք ստացաւ իւրովի: կը գուշակէ ապագոյ երկոյթներ, ահա ունեցաւ յապագայս թափանցելու կարողութիւն, ամենագիտութիւն:

Առանց չափազանցութեան մեծ է այս վնասն, կասկած չկայ: Այնք որ, առանց գաստիարակութեան կարեւոր մասին, բարոյական մասին, միայն իմացականը կ'ունենան կամ գիտութիւն կ'ուսանին, այսպիսի վնասներ անշուշտ կը կրեն: “Այն մարդը,” կ'ըսէ Սմայլս, “որ միայն իր մոտարական (իմացական) կարողութիւններն մշակելու ետևէ կը լսայ՝ այն մարդը հիւանդ իմացականութիւն մը և թերևս հրէշ մը կը գառնայ:”

Նոյն հեղինակն կ'ըսէ նաև. “Գիտութիւնը կարողութիւն մ'է ըսելը ճշմարիտ և իրաւացի է. բայց բնաւորութեան ազնուութիւնն ալ ուրիշ կարողութիւն մ'է ըսելն ալ տեղի ճշմարիտ է: Միտք առանց սրտի, իմացականութիւն առանց վարմունքի, ճարպիութիւն առանց բարութեան, կարողութիւններ են, որ ինչո՞ւ մասնաւութեան է. և ինչ ծանօթութիւն կամ զբօսանք ալ որ քաղաքանոնցմէ, չենք կրնար զարմանալ ասոնց վերայ, ինչպէս որ գրապահատի մը ձեռաց արագութեան կամ աւազակի մը իր ձին գործածելու ճարպիութեան վերայ չենք կրնար զարմանալ:”

Առանց բարոյական ուղղութեան կամ նպաստակի մաքրութեան մարդ իւր զօրութիւններն բոլոր ի չարն կը ծառայեցնէ: Այսօր ո՞ր չափ գիտուն, ուսեալ, սրամիտ և հանճարեղ մարդիկ կան, որ ի վնաս ընկերութեան կը գործեն դաւեր, նենդութիւններ, խարէութիւններ, վրէմինդրութիւններ և սպանութիւններ, որ չափակի գործուեին այնչափ յաճախ և այնպիսի գիտութեամբ, եթէ գիտութիւնք այն-

չափ դարդացեալ և իմացական կարողութիւնք այս աստիճան մշակեալ չենքին:

Մեր ազգին վերայ փորձը կրնանք տեսնել եթէ ուզենք հայիլ շուրջ: Խրիմեան Հայրիկ ի՞նչ կը վկայէ. “Եթէ մեր ազգային կամ ընտանեկան կեանքին մէջ մտնես ու շրջիս, պիտի տեսնես շատ առաջ կարծուածուի որոշներ. մանաւանդ բիւզանդիոնի և այլ ծովեզերեայ քաղաքներու մէջ, ուր կը կարծենք թէ քաղաքակրթութիւն, դպրոց, ուսումն յաւաջ գնացած են: Այս, այդպէս է, բայց անդասիարակ (առանց բարոյականի) յառաջադիմութիւնը մեր ընտանեկան կեանքը չբարւողեր:

Արուեստք և գիտք ալ, իրեւ ծնունդք գիտութեանց, նոցա մնասակար ազգեցութեանց ձեռն կուտան: Ո՞չ ապարէն մարդ կ'ուզգէ անձամբ զանձն երջանիկ կացուցանել անկախ յԱրարչէն և առանց արդարութեան, ահաւասիկ նալաստներ կը գտնէ այս փորձին կամ փորձութեան մէջ յառաջ երթալու: Ուսմունք իմացական հաճոյք կուտան, նոր գրքեր, զարմանալի պատմութիւններ, ախորժելի բանաստեղծութիւններ կ'զբոսցունեն զմարդ: Յաւել նաև հոյակապ շինուածք և չքեղ պալատներ, չքնաղ արձաններ, կենդանասիալ և ակնպատիր պատկերներ, պերճ զգեստներ, նրբագոյն զարդեր, ամենայն ընծայք արուեստից: Զգայական հաճոյից համար կը գտնէ մարդը ընտրելադոյն կերակուրներ, զանազան ծխելու նիւթեր և ըմպելիներ, քաղցրահոտ և ախնալարար բուրասատներ և պարտէղներ: Եւ ահա կառքեր, երկաթուղիներ, շղենաւներ, թիւնէլ, հեռագիր, օդապարիկ, նուազներ, զբօսարաններ: կը քաջալերի, ընկերական հաճոյինք երջանկանալու յոյսը կ'արծարծի: կը տեսնէ կամ կը լսէ ճարտարագոյն հրացաններ, մահասիխւութնութներ, ծածուկ թոյներ, անթափանց զրահներ, որովք իւր ատելութիւն և փառա միրութիւն գոյն ընելու խրախոյս կ'առնու:

Կը տեսնենք թէ գիտութիւնք և արուեստք և հնարք հանճարոյ չեն ծառայեր մարդկային սեռին կանգման, այլ խորագոյն կործանմանը, քանզի նորա ապականեալ ըղձիցն մարդատեաց նպաստակներուն կ'արբանեկեն, կը հպարտացնեն, կը քաջալերեն առանց Առառուծութիւն և առանց արդարութեան երջանիկ լինելու, ստորին բաղձանաց յաղուրդ առատ մասակարարելով՝ կը յուսագրեն երանելի լինել առանց բարոյական ուրախութեան, զմարդ մոլար ընթացիցն և վնասակար փորձերուն մէջ յերկար ևս թափառել կու տան, նորա սովորանց հոդւոյն մատուցանելով խարուսիկ յոյս և քաղցական մնունդ:

Աղէտալի՛ հիւանդութիւն յոր անկեալ է աղդ մարդկան . այն պիսի բարոյական ախտաւորութիւն , զոր կը զայրացունեն ըստ ինքեան նաև օգտակար և լաւ դեղեր : Դեղեր , որ զմահիճն փարելի կ'ընեն հիւանդին , որ ամէն նոր տեսածին համար “դժոյ” կ'ըսէ դարմանս , “կատարեալ եղաւ” կ'ըսէ , սակայն մինչ շրթունք և սիրտ կը զառանցեն այնպէս , դարմա՞ն կ'աղաղակեն նորա վիլք , դարմա՞ն կը նշանակեն նորա ոհք և ահք , դարմա՞ն կը կունեն ողքք և կոծք աշխարհի , դարմա՞ն կը դուռան ահեղաճայթ հրացանք և ահագնութոտ թնդանօթք , երբ մահն , խոյն ու ցաւը կ'առնուն կը տանին եղբօրէ յեղբայր . դարմա՞ն կը ձայնեն մանկանց լալիւնք , երբ կը զոհուին կամ կը չարչարին ի պատիւ կրուց :

Ո՞հ , եթէ լսելի լինէին այս աղաղակք լուսնթադի մէջ կամ արեգական , և անտի գար իմաստուն մի , վեհագոյնն ի փիլիսոփայից , ցուցնէր դարման , քանի՛ մտադիւր ի լուր կայիր խրատուցն :

Աշխա՛րհ , աւետի՛ս քեզ :

Այցելու մի եկաւ առ քեզ , բժիշկ գերազանց , ոչ արեգակեն , հապա այն աշխարհէն ուր արեգակն սև սպի մի կինայ թուիլ , յերկնից : Ոչ փիլիսոփայ մի , այլ նա , որ արեգակն է զօրութեան և իմաստութեան , որոյ մէկ ճառագայթն է փիլիսոփայից հանճար : Այցելուդ թիսուս է , բժիշկդ նոյն ինքն արարիշդ է :

Ի՞նչ , արհամա՞րհ , կը թուի քեզ թիսուս անունն , անհնչակա՞ն է ձայնն յունին քո : Այո , “կերպարան և վայելչութիւն չունի .” սակայն այն երեսոյթ յընդունելութիւն պէտք է յօժարէ զքեզ և ոչ ի մերժումն : Աշխա՛րհ , դու զերևոյթ կը յարդես , արտաքին փայլ և փողի կը խնդրես , և Յիսուս , արեգակն փառաց , կ'առնու զանձամբ անշուք քօղ մը , որ ուսուցանէ քեզ ներքին արժանիք նկատել , որ վարժէ զքեզ ի խոնարհութիւն յարդելց զարժանիս թէև անշուք երեսոյթի տակ , իւր երեսոյթը պայման մի կ'առաջարկէ . Ո՛վ որ զթիսուս բժիշկ ընարել կ'ուղէ , խոնարհիլ պարտի : Ուրեմն կը ճանաչէ ախտդ , և իւր առաջին հարուածն արմատին կ'ուղիէ . ուրեմն ճըշմարիս բժիշկդ է թիսուս :

Ճշմարիս է . Յիսուս ոչ փիլիսոփայ է և ոչ փիլիսոփայի աշակերտեալ , չունի այն փայլուն անուն : Այս մասին տարբեր է այն օրէնըսդիրներէն որ աշխարհի վերայ հոչակեցան : Սողոն , Աթենացւոց օքէնսդիրն , փիլիսոփայ էր : Զարկիս և քարոնդաս օրէնսդիրք մեծին Յունաստանի , աշակերտեալ էին Պիտթագորայ : Դրակոն , Յունաց առաջին օրէնսդիրն , երևելի մարդ մ'էր , իմաստուն համբաւեալ : Լիդուրիս , Սպարտացւոց օրէնսդիրն , նախ բազմաժամակեայ ու գերութիւն մը ըրաւ ի կրետէ , յԱսիա և յեգիպտոս , որ աղդաց օրէնքն դիմէ և իմաստուու խորհուրդ հարցնէ : Սակայն Յիսուս , Հրէտանի մէջ դեղջուկ կեանք կը վարէ , հասարական արուեստիւ մի կ'զբաղի ընդ երկար , քաղաքակիրթ աշխարհներ չայցելեր , Յունաց փիլիսոփայութենէն թափուր է : Ուրիշ օքէնսդիրք աղդին մեծամեծաց կամ թագաւորաց խնդրանօքն ու հրաւիրանօքն յօրէնսդիրութիւն կը ձեռնարկին , Յիսուսի աղդայնոց մեծամեծքն թշնամի կը լինին և կը դիմասնարտին Յիսուսի :

Սակայն այս անդէտ , աննշան , անպաշտպան արհամարհեալ Յիսուս միայն երեք տարուան մէջ կը սերմանէ սերմն բարեկարգութեան , ոչ Հրէտից համար կամ մասնաւոր ժողովրդեան մը , ինչպէս ուրիշ օրէնսդիրք , այլ բոլոր աղդաց և աղանց համար : Մշանջենաւոր և տիեզերական բարեկարգութեան հիմն կը դնէ որոյ վերայ տասնեւութ դարէ ի վեր աղդք և ժողովուրդք կը հաստատուին : Թաւդւորք և պետք , իշխանք և կրօնական գլուխներ , փիլիսոփայք և գիտունք այս հիմնարկութիւնը բոլոր ուժով չանացին տապալել , կը կարծէին քակել սակայն , զարմանալի՝ բան , կը շինուէր . կը ծալըէին , կործանումն կը գուշակին , ինչպէս ցարդ կը դանուին , սակայն այն շինուած դար քան զդար մեծցաւ և հաստատուեցաւ :

Լիդուրիկեան , Սողոնեան և այլ մարդադիր օրէնք թառամեցան իրբե ծաղիկք դիւրաթարշամ , սակայն Յիսուսի օրինաց և բարեկարգութեան սերմը աշխարհի վերայ կ'ընձիւղէ և կածի անհնդհատ թէպէտ դեռափիթիթ վիճակին մէջ իսկ աշխարհի համայն զօրութիւնք , նկւթական և իմայցական , իրբե փուշք ուղեցին հեղձացոցանել զտունկն աստուածատունկ , սակայն նա հրաշապէս կոտրեց այն յունական փիլիսոփայութեան և հուղմէտական զօրութեան փուշերն , և աճեցաւ . արհամարհէց սպառնալից փոթորիկներն և ահեղ հեղեղներն , որ յարձակեցան ի վերայ , և բարդաւաճեցաւ : Զարդիս իւր ճիւղեր լայնածաւալ կը տարածին ընդ համայն երկիր մինչև ի Հընդիկս , ի ձարսն , յԱվրիկէ , յԱմերիկա :

Յիսուս այսպէս բոլորովին տարօրինակ բարեկարգիչ է ըստ ամենայնի : Իւր կը թութեան , իւր աշակերտաց , իւր սակաւօրեաց անձնական վաստակոց , իւր հզօր հակառակորդաց նայելով : Տարօրինակ յաջողութիւն , որ կը դործուի ոչ հիմթական զօրութեամբ կամ իմացական կարողութեամբ և ճարտարխօսութեամբ , այլ հզօր ճշմարտութեամբ և պատերու խօսող հոգւով մի :

Ուրեմն իրաւամբ կ'ըսէ Նաբօլէօն “Հնդկաց , Չինաց , Հոռմայեցւոց և ուրիշ աղդաց օրէնսդիրք զիս չեն կրնար զարմացնել . . . անոնք

լոկ մարդ էին։ Բայց Յիսուս այնպէս չէ։ Անոր վրայ ամեն բան հիանալի է ըստ իս Անոր միտքը կ'ապշեցնէ զիս, և կամքը կ'ամցնէ։ Զիսուս որ և իցէ ուրիշ մահկանացուի հետ բարդատել անհնար է։ Էս կը ճանչնամ զմարդիկ, և կը վկայեմ թէ Յիսուս ըսկ մարդ չէր։”

Արդ, ժամ է առնուու ի քնին թէ Յիսուս ի՞նչ զօրաւոր միջոցներ կը գործածէ ի դարման մարդկային աղդին։ Ի՞նչ են այն ճշմարտութիւնք և այն սրտաշարժ և հզօրիչ հոգին։

1. ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Փիլիսոփայք բարոյական ճշմարտութիւններ աւանդեցին աշակերտաց։ Սակայն նոյց դրութիւնք, առանց բացառութեան, ամենն ալ ունէին հիմնական թերութիւններ։ առանց ճշմարիտ հիմանց հնարչէր ճշմարիտ բարոյական։

Աստուած նախ քան զգալուստ Քրիստոսի յաշխարհ, տասնաբանեայ օրէնքը տուած էր Հրէից ի ձեռն Մովսէսի այն օրէնք կատարեալ էր, Աստուածային իմաստութեան դրոշմը կը տեսնուի իւրաքանչիւր պատուիրանի վերայ։ Ոչ ոք յօրէնսդրաց կարայ երբէք զնմանն արտադրել։

Յիսուս անձամբ այց ընելով աշխարհի, ինչ ինչ ճշմարտութիւններ պարզեց, և օրէնքը իւր օրինական բացարեց, և հաստատեց դրութիւն մի, որոյ անկեղծ աշակերտաց սրտին վերայ կը դրէ օրէնքը։

Բաղդատմամբ Յիսուսի, բոլոր փիլիսոփայք և օրէնսդիրք անյատակ ստորնութեան մէջ կը մնան։ որք ոչ միայն չարացին կատարել զոր ինչ վարդապետեցին բարի, այլ և ոչ իսկ կարացին դէմ շըրթամբ ըսել և երեւակայութեամբ կազմել գլատարեալ ճշմարտութիւն և զօրինակի։

Յիսուսի ըանից և սկզբանց սքանչելի որպիսութիւններն բացատրել չունիմք, այն ընդարձակ գործոյ է։ “Նայեցէք,” կ'ըսէ Բուսօնիկ, “Փիլիսոփայից դրէնոյն բոլոր իրենց փառօքը, ի՞նչ ստորին են նորա առ այնու (առ Ս. Գրովք)։” Արդարեւ մարդկային վիլիսովայութիւնը Ս. Գրոց քով իբրեւ ճրագ է առ արեգակամբ։

Սակայն զոր ինչ Յիսուս ըրաւ առաւել զարմանալի են քան դոր ինչ խօսեցաւ։ Զոր ինչ Նա կարաց ի տես ածել աշխարհի արդեամբք, մարդկային լեզուն և ոչ կարող է ի բան բերել։ Յիսուս շատ հրաշք գործեց, սակայն սյնավիտ հրաշից տեսարան եղան իւր բարք և վարք, որ բազմապատիկ առաւել սքանչելի են, այո՛, նաև անհասանելի մեր մտաց։ Եւ այս վարքն ու գործք առաւել իմաստալից և լուսաւորիչ

են քան խօսք նորա և ուսուցմունք։

Ի՞նչ են այս հրաշք, ի՞նչ են այս արարք։

Յիսուսի թշնամիք ի խնդիր էին դոյզն ինչ արատոյ, որով զայն ամբաստանել կարենային, սակայն ընդունայն կը հսկէին։ ոչ բանիւ և ոչ իսկ արարիւք երբէք դթեցաւ ի ճշմարտութենէ և յարդարութենէ, և ոչ մազիւ չափ։ Այս անմեղութիւնը անօրինակ հրաշք է։

Թշնամիք կոչեցին զնա հայհոյիչ, դիւաշոնչ, կերող և արքեցող։ համարեցան ևս թէ օրէնքն ուղիղ չհասկնար Այն, որ հեղինակն և տուին էր այն օրինաց չամբերեց։

Կը մատչին դառնագոյն աւուրք ի՞նչ աղէտալի ժամ կ'անցունէ ի գեթսեմանի։ ո՞րչափ արտասուք և քրտունք կը հեղու, և ինչո՞ւ ինչո՞ւ արտասուեն այն աչեր սիրալիր, քաղցրահայեաց և սրբափայլ։ ո՞հ, կ'արտասուեն փոխանակ անզգամ և պիղծ մարդկութեան, իքաւութիւն մարդոյ, որ են աչք դժնեայ, նախանձալից, բծախնձիր, շահաէտ, ցամանալիր և թիւրահայեաց։ ի՞նչ զարմանալի մարդամիութիւն։

Ինչո՞ւ կը հեղուն ոլուն ոլոռն քրտունք, ի՞նչ բեռ ունէր Յիսուս, ի՞նչ խննջութիւն։ Ա՞հ, ունէր մեծ բեռ մի, մարդկային մեղաց լեռներն ստանձնած էր անմեղն և անարատ։ Կը գովինք այն անձն, որ ակար ընկերին բեռն կը տանի, ի՞նչ գովեստ արժանի կրնանք ընծայել Յիսուսի հզօր մարդապիրութեան, որ աշխարհի մի լեռնահանդոյն աղէտներն յանձն կ'առնու։ ի՞նչ մարդապիրութիւն դեր մարդկային։

Կուգան թշնամիք ձեռս յետս կապած կը տանին յատեան։ ինչ զրոյարտութիւն որ ինա կը ջանան հաստատել վար կ'անկանի, ամենուստ հրացայտ հայեացք կը սեեւոն ի հեղն։ Կը կրծտեն զատամունս, ծարաւի են արեամն։ Մերգալից ծառայք կը դատապետեն իրենց ջէրն։ Սա ոչ ինչ կը պատասխանէ, լուիկ մնչիկ կը կենայ։ Սակայն հզօր կը ճարտարախոսէ համբոյը դիմօք, հեղ կերպարանաւ, քաղցր աչօք և անխոնջ համբերութեամբ։ սքանչելի ջատագովութիւն, զոր ոչ ոք ի մահկանացուաց կարայ ընել։ Անհուն արդարութիւնը ծայրացեղ անիրաւութենէ կը դատուի։ սց զիջման խորութեանը ո՞ր կորովամիտ կրնայ թափանցել։ Արդարութեան ովկիանը կաթիլի մի նման կը սեղմի յանձնին, առանց դոյզն ծփանաց և զեղման։ աս ի՞նչ հրաշք է, ի՞նչ զօրութիւն է։ և ի՞նչ օրինակ է մարդատէր զիջման և համբերութեան։

Կը ստիպեն չարամիտ խորհրդով որ ըսէ թէ ինքն ո՛վ է։ Յիսուս դիսէր նոյց միտքը, ըսաւ զոր ինչ արդէն ըսած էր հրապարակաւ,

թէ ինքն Աստուածային անձն է . և ահա կը դատապարտեն զնա : “ի խաչ հան,” կը գոչէ Խրայէլեան ժողովուրդն այն անձին համար , որ իրենց անզուգական բարերարն էր և արդէն մարդասիրութեամբ լցուցած էր զիրենք : Նա իրենց կամ իրենց սիրելեաց աշեր շնորհեր է , ականջներ , լեզուներ . նաև անդամալրյաներուն շարժում , և մեռելոց յարութիւն պարզեած է անօրինակ մարդասիրութեամբ . և իրենք , “ի խաչ հան,” կ’աղաղակեն սոսկալի և պժգալի ապերախտութեամբ . սակայն Յիսուս կը լրէ , ով զարմանալեացս : Որպիսի՞ գերազանց օրինակ ներողամիտ և մեծախոհ երկայնմասութեան :

Տիեզերաց վեհապետին ապտակ կը հանեն ոտիցը փոշիք , ծաղրու ծանակ կ’ընեն զայն , փշապսակ կ’ընեն գլուխը , Նա կը լրէ . Նա , որոյ “Ես եմ” ասացուածն գետին տապալեց անմնք , որ եկած էին զինքը կալանելու : Նա , որոյ մէկ ակնարկ կայծակնացայտ կրնայ զտիեզերս լափել , իւր կատաղի , անօրէն և վատթար շարչարիչներն անպատիժ կը թողու : Դիմագիր շարժում մի չեն ըներ այն բազուկներ , որ տիեզերաց ահագին գունդերն կը շարժեն , կը դիջանին ի կապանս և ի բեեռու : Աս ի՞նչ հրաշք է . լիուլի կարողութիւն , լիուլի անմեղութիւն մէկ կողմ , լիուլի տկարութիւն և լիուլի անիրաւութիւն միւս կողմ անպատիժ :

Ի վերայ խաչին , ահեղ շարչարանաց մէջէն ինչ աչօք կը հայի ի թշնամիա իւր : Զաշխարհ ջրով լեցուցած , բոլոր մարդոց առաւատ և անոյշ ջուր է պարզեած ձրի , սակայն նոքա քացախ կը մատուցանեն Նմա երբ կը պապակի : Այսպիսի անագորյուն թշնամեաց վերայ նոյնժամ կը նայի առանց ցամանն և առանց վրէժինդրութեան ոգւոյ : Մանաւանդ թէ , ով հրաշալեացս , կը նայի ի նոսա հեշտ , ներող և կարեկից աչօք . և կը մաղթէ առ Հայր “Թող սոյա :” Ի փրկութիւն և յերջանիկ կենդանութիւն իւր թշնամեաց կը մեռանի . որպէս զի Արդարութեան վրէժինդիր ձեռքէն աղատէ ապտամիր մարդկութեան կեանքը , զիւրն կու տայ փրկանք : Ո՞ր միտք կրնայ այս սիրոյն բարձրութեանը հասու լինել , այս տիեզերահրաշ սրանչելեաց , թըշնամոյն բարերարելու այս վսեմ օրինակին :

Յիսուս այսպէս կը մեռնի ի խաչին անարդանաց :

Ինչ նախատինք և չարչարանք որ կրեց Յիսուս հանդերձ իւր մահուամբ՝ կ’անուանենք “խաչ Յիսուսի :” Սիրոյ այս փառաւոր և գերապանծ գործն է , որ աշխարհ յիմարութիւն կը կոչ . ի՞նչ ճըշմարտութիւններ կը քարտգէ խաչն , ի՞նչ սէր , իմաստութիւն , զօրութիւն , ևն , կը նշանակէ նա : Այս , խաչն զԱրարիշ կը ցուցնէ մարդկան իւր սիրելի և դրաւիչ ստորոգելեօքն . անհուն սիրով , խոնար-

հովթեամբ , հեղութեամբ , ողորմութեամբ և խմաստութեամբ : Միանդամայն ցուցիչ է թէ հոգին մեծ արժեք ունի յաչս Աստուծոյ , թէ անդր քան զգերեզման կեանք կայ , թէ այն կենաց աղէաք կամ երանութիւնք մեծամեծ են : Ո՞վ կրնայ , ո՞ր գիտուն , ո՞ր իմաստուն , ո՞ր փիլիսոփայ կրնայ գէթ մտածելայսպիսի խմաստուն դարման : Մարդուն անզուամ , անվստահ և անհաւատ միրտն բժշկելու համար անկարելի՛ է գտնել ազդողագոյն դարման :

Չկայ և չկայ մոտածութիւն մը առաւել նպաստաւոր յուղղութիւն մարդուն քան զոր ինչ ըրաւ Յիսուս ի փրկութիւն նորա . այո՛ , նըսպաստաւոր և օժանդակ մտածութիւն դառնալու առ Աստուծ , իւր բոլոր մարմնական , իմայցական և բարոյական ոյժն նուիրելու փրկչին , հաւատով ինդրելու ի Նմանէ ամենայն բարիք և շնորհք , վստահութեամբ հնազանդելու նորա օրինաց , հեղ լինելու , խոնարհելու , դժալու , ներելու , նեղութեանց և անիրաւութեանց տանելու վեհանձն լուսութեամբ և անխոնջ համբերութեամբ :

Ոչ միայն Յիսուսի վարք , այլև նորա աւանդած սկզբանց իւրաքանչիւրը կը փայլի ասասուածային իմաստութեամբ : Ամէն անոնք որ անկեղծ ճշմարտութեամբ կը կարդան Ա . Գիրքը , կը համողուին թէ Յիսուս Քրիստոս աշխարհի լցոյն է , անկեալ մարդկութեան Փրկիչն է : Ինչպէս որ ամէն նիւթ և մետաղ իւր տարբեր ճառագայթն ունի , այնպէս որ գիտունք ցոլացեալ լուսոյ ճառագայթներէն կը գիտնան թէ երկնային մարմինք ինչ նիւթերէ բաղադրեալ են . այնպէս ալ Յիսուսի և Ա . Գրոց գերազանցութիւնքն ուշիւ գիտող ուկից մարդու անհնար է չառնուլ ի միտ թէ նոյցա ծագումն նոյն ինքն ի Հօր Աստուծոյ է :

2 . ԶՕՐՈՒԹԻՒՆ Ի ԲԱՐՁԱՆՅ

Յիսուս ըստ աշակերտացը . “Եստարուք ի քաղաքիս յերտսաղէմ , մինչև զգենուցուք զօրութիւն ի բարձանց :” Յովիաննէս ըստ վասն Յիսուսի . “Նա մլրտեացէ զձեղ ի Հոգին Սուրբ :” Աւետարանաց մէջ բազում ուրեք բացայացտ ցուցուած է Ա . Հոգւոյն անհրաժեշտ կարելութիւնը :

Յիսուս հզօր ճշմարտութիւններ աւանդեց , սակայն նաև սա ճըշմարտութիւնը աւանդեց թէ առանց Աստուծոյ մասնաւոր օգնութեան անհնար է մարդոց կանգնիլ անկմանէն : կ’ուզէ նա որ իւր գիրքը կարդացող աշակերտներն միշտ զգան թէ աստուածային զօրութեան կարօտ են և խոնարհութեամբ ինդրեն զայն հանապա-

զօր իբրև հոգւոյ հաց կենսաւէտ : Եթէ պյապէս չլինէր , մարդիկ նկոթականութեան կը յարէին և միջոցը բաւական համարելով՝ Առաջուծոյ հետ պաղ յարաբերութիւն պիտի ունենային :

Որպէս զի Յիսուսի աշակերտն ոչ միայն խմացականութեամբն այլև սրտիւն ու կամօքը նորոգուի , պարտի Ս . Գիրքը կարդալուն հետ Աստուածաշունչ զօրութիւն ինդրէ ի Յիսուսէ , որ մարդասիրական և աստուածաշտական զդացմամբք սիրտը մաքրուի և կամքն իւր գերութենէն տակաւ առ տակաւ աղատի :

Ըստ երկու գլխաւոր միջոցներուն զոր Յիսուս կը դորձածէ ի դարման մարդոյ , երկու միջոց կայ , զոր պարտի մարդ ի կիր արկանել որպէս զի ընդունի զդարման : Այս երկու միջոցներն են ընթերցումն և ազօթք , երկու երակներ , որոց միջոցաւ հիւանդ մարդը զօրութիւն պիտի ընդունի ի հոդի իւր , և պիտի լինի ինչ որ պարտի :

Ա . ԸՆԹԵՐՑՈՒՄՆ

Արարչին կամքը կարդալ : Արարչին վեհ ու վսեմ ստորոգելիքը կը պատմեն տիեզերք : Ուստի Յիսուսի աշակերտին օգտակար է պարապիւ յուսումն ազգի ազգի գիտութեանց : Սակայն ամէն մարդու պարագայք թոյլու չեն այսմ:

Բայց տիեզերն երկու է : կայ տիեզերք մի , զոր կրնայ մարդ իւր ձեռայ վերայ առնուլ , այնչափ փոքր է . սակայն կայ անոր մէջ անհուն ընդարձակութիւն , որում անհաս է միտք մարդկային : Այս տիեզերի մէջ կը տեմնես խորութիւն և բարձրութիւն անսահման ինչպէս միւսոյն մէջ : Այս , կայ Աստուածաշունչ գրոց մէջ Յիսուսի խոր զիջումը , որոյ չափն չենք կրնար ըմբռնել , ողորմութեան և սիրոյ անսահման ընդարձակութիւն , կատարելութեան անհաս բարձրութիւն : Նիւթական տիեզերին մէջ Աստուծոյ սրբութիւնն ու ողորմութիւնը չեն գար ի նշմար , այլ զօրութիւնը , խմասութիւնը , բարութիւնը և արդարութիւնը , որոց չնորհիւ մարդ ի գոյ եկաւ , իսկ այս զարմանալի տիեզերին մէջ արեգափայլ կը փողփողեն Արարչին սրբութիւն և ողորմութիւնը որոյ չնորհիւ մարդ երկրորդ անդամը կու գայ ի գոյ , կու գայ ի կեանս ճշմարիտ :

Ահա այս քաղցր ստորոգելեաց արդինքը կարդալով Նոր կտակարանի մէջ , մարդ առաւել քան զառաւել Արարչին բարեկամութեանն ու յարաբերութեանը բաղձանք կ'զգայ , իբր թէ այս յանկուցիչ ստորոգելեաց , սիրոյն և ողորմութեան ձգողութենէն քաշուելով հետզետէ յԱրարին և ի Հայր իւր կը մերձի : Կաեւ իւր

սրտին սէրն ու ողորմութիւնը կը սնանին և կը զարդանան այն ստորգելեաց աղղեցութենէն :

Միայն թէ չկարծուի թէ այս ընթերցման երակէն եկող մնունդն սպառելի է . անդամ մի ընթեռնլով կամ քաշելով չառնուիր բոլոր մնունդն , սիսալ է : Ուշադրութեան շրմոնքով հետզետէ որչափ աղէկ բռնէ մարդ Ս . Գրոց կամթին ստինքը , այնչափ առատ գամ աղէկ բռնէ մարդ Ս . Գրոց կամթին ստինքը , այնչափ առատ գամ գամ պդամ կը ծծէ անխարդախ և բանական կաթը , և այնչափ առաւել համ կ'առնու : Մարդ ամէն օր պահիկ մի այս ստեանց պարտի յարիլ , անհուն խմասութեան ստեանց , և մնունդ առնուլ , որ անսպառ միջոցներու և կը հեղու և կը յորդէ որչափ երկարակեաց կենօք զայն վայելէ մէկը : Մանսաւանդ թէ մարդ որչափ և զարդանայ բարցյական զօրութեան մէջ տակաւին կատարելու չինիր , և կարօտ է միշտ այն բութեան : Նարօլէն կ'ըսէ թէ Աւետարանը “կարդալէն չեմ ձանձաննդեան” : Աւորիլէն կ'ըսէ թէ Աւետարանը “կարդալէն չեմ ձանձաննդեան” : Յրիստորանար , ամէն օր և միօրինակ հաճութեամբ կը կարդամ : ”Յրիստոնէկան զդացմունք և Աստուած ճանաչելու տենչն է այն համեմը որ ամենէն աւելի քաղցր կը գործէ զԱ . Գիրա . սակայն գիտնական և բանասիրական դիտմամբ իսկ զանոնք ընթեռնուլ մեծ հաճոյք կրնայ և բանասիրական դիտմամբ իսկ զանոնք ընթեռնուլ մեծ հաճոյք կրնայ և լինել ուսումնականաց . քանզի այս գրոց մէջ ամէն տեսակը կայ . պատմութիւն , բանասառեղծութիւն , խրատ , վարդապետութիւն , աւենախօսութիւն , և այնչափ սքանչելի է իւր լեզուին կրղմանէ շատ տեղ , որ ոչ մէկ մարդաշունչ զիրք կրնայ ի կշիռ դալ ընդ նմա : Այս տիեզերն ըստ ամենայնի կատարելու է :

Բ . Ա.Ղ.ՕԹ.Բ

Մարդ ի պատկեր , ինմանութիւն Աստուծոյ արարչադործեալ է , և օրինաւոր յարաբերութիւն ունենալով կրնայ նորոգիլ ի նմանութիւն նորին , յորմէ անկեալ է : Ս . Գիրք ընթեռնուլ իրու Արարչին խոսքերն , Արարչին հետ յարաբերութիւն ընել է . սակայն պարագն խոսքերն , Արարչին հաճութեան ընմա , խնդրել ի նմանէ է “ստէպ կալ աղօթից” և իւր սիրալ բանալ նմա , խնդրել ի նմանէ զԱ . Հոգին , որով կարենայ մարդ Աստուծոյ հաճոյ լինել իւր բոլոր զԱ . Հոգին , որով կարենայ մարդ Աստուծոյ հաճոյ լինել իւր բոլոր զարժմանց մէջ , և մատուցանէ նմա չնորհակարութիւն , խոստովանի իւր զանցառութիւններն :

Աղօթել , խօսիլ առ ին գերաբուն . ի՞նչ փառաւոր գործ : Աղօթել , փառաբանութիւն մատուցանել իւր և համայն էից Արարչին և ինսահակալին , բովանդակին ամենայն կատարելութեանց . որպիսի կարևոր պարտք : Աղօթել , հոգւոյն վերքերն բանալ ամենակարող բարելոր պարտք : Աղօթել , բուժիչ ներգործութեան առաջի , ի՞նչ կարեոր գործ : Աղօթել ,

տկարութիւններն , դժուարութիւններն և շուարումներն հզօր և իւմաստուն չօր յանձնել . ի՞նչ միսիթարութիւն : Աղօթել , հոգւոյն աղնիւ ցաւերն , աղնիւ ուրախութիւններն , աղնիւ իղձերն զարթուցանել և յուղել . ի՞նչ աղդու միջոց հոգին աղնուադոյն ընելու : Աղօթել , անհուն իմաստութեան նայիլ , անհուն սիրոյ և անսահման բարձրութեան յառիլ . ի՞նչ նպաստաւոր դիրք զանձն ճանաչելոյ և հպարտութիւնը կործանելոյ : Աղօթել վերջապէս , նստիլ կատարելութեան տիպարին առջև . ի՞նչ կարեոր և օդնական դիրք ի կենդանութիւն այն տկարացեալ նմանութեան , որով Արարշին պատկերն է մարդ :

Սակայն որովհետեւ մարդ տկար է , անկեալ , գերի , տղէտ և թերութեամբք վարակեալ , հնարաւո՞ր է որ կարենայ Հզօրին , բարձրելոյն , Աղատին , իմաստոյն և կատարելոյն առջև ենել արժանաւոր խոնարհութեամբ , պատկառանօք , եռանդեամբ և սիրալիր զգացմամբ . ոչ , հնարաւոր չէ : Այսպիսի գործ մի պատժոյ և ցասման Արարշին ոչ թէ չնորհացն է արժանի : Բայց Յիսուս այնպիսի իմաստուն և մարդասէր կարդադրութիւն ըրած է , որ մարդ կարենայ այնչափ ախտարոյժ և սիրամնոյց յարաբերութիւնը վայելել . ցանուն իմ՝ խնդրեցէք ըսած է . իւր աշակերաց աղօթքն , թէն անարժան , սակայն իւր ձեռքովն կը մատուցանէ 'ի դահ չօր . և զլ . Հոդին կ'առաքէ սրտին հետ խօսելու և զայն յարժանաւորն համոզելու և խրախուսելու :

Ահաւասիկ այն իմաստուն եղանակն և հզօր դարմանը , որով Յիսուս , անկեալ մարդկութեան բժիշկն , կը դարմանէ զմարդ : Մարդկային ընկերութեան մէն մի անհատը առանձինն ինամով կը դարմանէ և այսպէս բոլոր աղդերն կը կանդնէ : Անհատը մնադեամբք կը զօրացնէ և ի նմանութիւն Արարշին կը բարդաւաճէ զայն , կատարելութեան և ճշմարիտ մարդկութեան կը տանի օր ըստ օրէ , և այսպիսի անդամներէ բաղկացեալ աղդ մի օր քան զօր զօրութիւն և կեանք կ'առնու :

Յիսուսի դարմանը մարդուն բարոյական ախտաւորութեանը կը վերաբերի , յորմէ կ'աղբերանան աղդաց և անհատից աղէտք . ուստի որչափ բարոյականը բարւոքի , նոյնչափ աղէտք կ'ամոքին : Յիսուսի դարմանը , կ'ըսեմ , թէև անուղղակի , սակայն իբրև առաջին աղդու միջոց , կը բարւոքէ մարդուն նաև նիւթական և իմացական վիճակն : Այս կէտը համառօտիւ պարզենք :

1. ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Արդէն առիթ ունեցած ենք լսելու թէ ախտք և տկարութիւնք մարմնոյ կը պատճառին առաւելապէս ի վատթարութենէ բարոյականի :

Յիսուսի ճշմարիտ աշակերտը կը խորշի և կը գարշի ճնութենէ , որի կորամէտութենէ , անգործութենէ , որ աղբեւր են ախտից : Նա չուղէր այն փառամոլութիւնը որ զմարդ ծանրակիր մտասանչութեամբք կը չարչարէ . ոչ այն արծաթսիրութիւնը որոյ մկմամք քարէ ի քար կը զարնուին ագահք . ոչ այն ցամանուառութիւնը որ կը լսիէ մարմնոյ ոյժը . ոչ այն ողելից ըմպելեաց մոլութիւնը որ զմարմին կը հրդեհէ և կը չարչարէ , որ զախտ և զմահ կը հրաւիրէ . ոչ այն երկիւղն և մարմնածախ կասկածներն որ իբրև որդունք կը կրծեն զմիրտ գողոց , խարդախաց , մասնչաց , սպանչաց ևն :

Ընդհակառակին Յիսուսի հաւատարիմ աշակերտաց հոգին ընդհանրապէս յանդորրու կայ . Խիլճը բարոյական ճշմարիտ ուրախութեանց ինճոյք կը վայերէ . ամենէն հզօր և իմաստուն էակը իւր պաշտպան և չայը ունի . ներկայի , ապագայի և յաւիտենականութեան համար աներկիւղ և անկասկած է . երջանիկ է . և ի հարկէ այսպիսի հոգւոյ արբանեակ մարմինը առողջութիւն և զօրութիւն կը վայերէ . այս բնական է :

Ուրեմն դաստիարակութեան մարմնական ճիւղոյն կեանքն քրիստոնէական ողիէն կը բղիսի , առանց որոյ աղդի մի մարմնական դաստիարակութեան էական պայմանը կը պակսի : Խոկ որ աղդ որ է Յիսուսի աշակերտի եռանդեամբ , այն կ'աղատի այն սովորութիւններէն որ զմարմին կը մաշեն և այն մոլութիւններէն որ զայն կը հաշեն , սեռական կարողութիւններն կը կործանեն , և այլ և այլ ախտից սերմանիքը կը ցանեն յապագայոյ : Մոլութիւնք առաւել կոտորած կ'ընեն աղդի մի մէջ քան բարբարոսաց ասպատակութիւններն . ուստի երբ աղդին անհատք աղատին ի մոլութեանց և անդորր լինի իրենց ներքին կացութիւնը , արագ կ'աճի այն աղդ և կը բարդաւաճի :

2. ՀԱՐՍՈՒԹԻՒՆ

Որովհետեւ քրիստոնէական ողին կեանք է մարմնոյն , հետեւապէս առողջութեամբ կրնայ տոկալ աշխատութեանց , մտաւորական և մարմնական վաստակոց , որով և կը չահի :

Ծուլութիւնն ու դաստարկասիրութիւնը շատերու աղքատութեան

պատճառ է . Յիսուս իւր աշակերտաց կ'ըսէ , “Որ ոչն գործիցէ և կերիցէ մի .” ուստի նոքա աղքատութեան այս պատճառէն ևս աղատ կը մնան աշխատասիրութեամբ և գործունէութեամբ :

Կան բազումք որ ամէն գործոյ և պաշտօնի չեն հաճիր , փոխանակ իրենց սկզբունքը բարձր ընտրելու , գործոյ բարձրութիւն կ'ուզեն , և այս վեհանձնութեամբ գեղերեսեալ հպարտութիւնը աշխարհի վերայ շատերու աղքատութեան պատճառն է : Ումանք յետ անկանելոյ յընչից կամ ի դրամագլանյ՝ չեն զիջանիր ի փոքր գործ , և անկարելի կը լինի նոյցա վերատին բարձրանալ ի նախկին վիճակ : Սակայն Յիսուսի աշակերտաց մեծութիւնն իրենց խոնարհութիւնն է , իրենց ցեառն և վարդապետին հետեւող են . Նա կ'աշխատէր , և հիւմութիւն էր իւր արուեստ :

Աշխարհասիրութիւնն ու ագահութիւն ո՞րչափ շատերու անկում պատճառած է գահավիժ տեղեր մղելով զմարդիկ : Աշխարհի վերայ անհնան օրինակ եղաւ և առաջնորդ մանկան յարդելու և սիրելու . “Թոյլ տուք մանկուոյդ գալ առ իս” ըստ , և օրհնեց զնոսա : Յիսուս կը վարդապետէ ժողովրդեան թէ մանկունք արժանի են նկատողութեան . և պէտք է ամենայն զգուշութեամբ վարուիլ նոյցա հետ և ինամել : Կը վարդապետէ նաև հաւասարութիւն , և իդական սեւը իւր անկումէն կը բարձրացունէ , որով և զնոսա մոռաւորական մշակութեան արժանաւոր և կարօտ կը հանդիսացունէ : Կը յայտնէ մարդկան մեծ վախճանը , մեծ վտանգն , մեծ գործերն , ծանր պատերազմը , որով խորհելու նիւթ և ստիպում կ'ընծայէ մտաց , և խորհելու կարողութեանց խնամ տանելու ծանր և արժանաւոր պատճառներ կը թելադրէ :

Ահա այսպէտակ կը յորդորի Յիսուսի ջերմ աշակերտող ժողովուրդն հոգ տանել դաստիարակութեան ոչ միայն արականաց , այլ և իդականաց . ոչ միայն հարուստներու , այլ և աղքատաց . ոչ միայն ողջ և առողջ եղողներու , այլ և համերց և խլից . ոչ միայն գեռահասից , այլ և չափահասից : Ի հարկէ այսպիսի ժողովուրդող և կորովի խացականութիւն կ'ունենայ :

Ահա Սէնդ Հիերի , գաղիացի պատմին , դիտողութիւնը : “Ես ճամբորդութիւններ ըրած եմ Եւրոպայի թէ հիւսիսային և թէ հարաւային երկիրներուն մէջ , և ամէն տեղ ոս դիտած եմ որ , այն երկիրներուն մէջ , որ Աստուածաշունչը հիմ չէ ընկերութեան և գաստիարակութեան և վարուց , աղայոց և ամէն աստիճանի մարդոց համար յատուկ գրքեր չկան : Այսպէս է Սպանիոյ , Խառլիոյ , և նոյն իսկ գաղիաց , միով բանիւ այն երկիրներուն մէջ ուր Ս . Գիրքը չը-

կարդացուիր : Գերմանիոյ և Անդղիոյ մէջ , ընդհակառակին , տղայոց և ամէն աստիճանի մարդոց համար առատ դրքեր կան : ”

Ս . Գիրք կարդացող ժողովրդեան անուս անհատներն ալ իրենց միտքը գործածելու առօրեայ առիթ ունին : Յիսուսի աշակերտաց իւր միտքը գործածելու առօրեայ առիթ ունին : Յիսուսի աշակերտաց իւր միտքը գործածելու առօրեայ առիթ ունին : Յիսուսի աշակերտաց իւր միտքը գործածելու առօրեայ առիթ ունին : Յիսուսի աշակերտաց իւր միտքը գործածելու առօրեայ առիթ ունին : Յիսուսի աշակերտաց իւր միտքը գործածելու առօրեայ առիթ ունին : Յիսուսի աշակերտաց իւր միտքը գործածելու առօրեայ առիթ ունին :

Յիսուսի աշակերտող ժողովուրդն իւր առից և տրոց բոլոր գործոց մէջ ուրիշ պատճառներ ևս ունի իմացական կրթութեան : Նա ծլինար գործարակութեան յաղթելու համար սուտ , երդում , խարդաչլինար գործարակութեան յաղթելու համար սուտ , երդում :

Դարձեալ Ս . Գիրք այնպիսի սկզբունք կու առ վարուց , որ ընդհանուր և համատարած են բոլոր գործոց վերայ . զոր օրինակ ընդհանուր և համատարած են բոլոր գործոց վերայ . կամ “ի վառս Սույնչ որ ընէք , յանուն ցեառն Յիսուսի ըրէք” կամ “ի վառս Սույնչուծուցոյ” :

Արդ Աւետարանի աշակերտը ամէն օր տրամաբանութեամբ պիտի զբաղի իւր գործոց մէջ . մասնաւոր գործեր ու պարագաներ ընդդանուր սկզբանէ մի հետեւական կամ ոչ հետեւական լինեն որոշեանուր համար , պիտի իւր սովորութիւններն ևս քննէ տեսնէ թէ սկզբանն համանձայն են թէ ոչ :

Ուրեմն յիրածի ըստած է Հայոյ Հիասէնթ գաղիացին թէ “Ս . Գիրքը կարդացող ժողովուրդ մը հանճարեղ և խոհական կ'ըլլայ : ” Կը տեսնենք թէ քրիստոնէական դաստիարակութիւնը հաստատուն նեցուկ է մարմնական դաստիարակութեան , և հզօր զօրավիւրակութիւնը անզօր և ապիկար , նաև զնասակար կը լինի , եթէ Աւետարանը հիմ զաստիարակութեան : Նաև մեր ազգը իւր հիւսիսական գաղիացին և հէք կացութենէն որպէս զի աղասի , անհրաժեշտ պէտունի որ Աւետարանի ոգին ստանայ : “Աստուածապաշատիւն առ ամենայն ինչ օգտակար է . և զաւետիս կենաց ունի գարդիս և զանդերձելոցն” կ'ըսէ Յիսուս ի ձեռն Պօղոսի :

Ըստ այսմ է և բան Մօնթէսքիէսի ի գիրսն Ոգի օրինաց . “Քրիստոնէական հաւատոքն , որ կարծես թէ միայն հանդերձեալ կենաց

Երջանկութեանը պատճառ պիտի լինէր, նաև այս աշխարհիս մէջ մեր երջանկութեանը պատճառ է:

Յիսուսի չնորհաց օրէնեալ և երկնատուր կրօնքը ամենայն բարեաց պայման է: Այն մարդը, այն ժողովուրդը որ անձնատուր է Յիսուսի, այն չգօր Արքային, կ'ընդունի ի նմանէ իւր ուղղութիւնը, իւր զօրութիւնը, իւր կեանքն, նաև քաղաքակրթութիւնը, որ դիւրածին և ապահով պտուղ է Քրիստոնէութեան: Ճշմարիտ է թէ աշխարհի արդի լուսաւորութեան կամ քաղաքակրթութեան աղբիւրը Քրիստոնէական կրօնն է: «Ղառավարութեան մէջ քաղաքական իրաւունք մի, պատերազմի մէջ ալ ազգաց իրաւունք մի եւթէ կայ, պատճառը քրիստոնէութիւնն է:» Կիզօ ևս կ'ըսէ. «Ոչոք կրնայ ուրանալ թէ Քրիստոնէութիւնը լուսաւորութեան առաջնորդեղաւ . . . քանդի մարդոց զդացմունքը փոխեց, և նոցա միտքն ու բարոյականութիւնը դաեց:»

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Աը թուի ինձ թէ որ ինչ ցայտվայր ըսուեցան՝ բաւական են սա հետեւթեան վերայ դկայ առնելու հաստատապէս թէ մեր ազդին վերականգնումը, կամ, ֆիզիդական, խմայական և բարյական կեանքը ճշմարիտ քրիստոնէութեան մէջ է. և ուստի ոլ որ ազգասէր է, ով որ ի վրկութիւն աղդին բան մը ընել կ'ուզէ, կը պարտի ջանալ որ աղդին մէջ Սւետարանը և Քրիստոնէական ողին տարածուին:

Հոս ինչ միջոցներ պիտի ցուցնեմ ի նպաստ այս գործոյն:

1. Ա.ՇԽԱԲ.ԲԱՐ Ա. ԳԻՐՔ

Աշխարհի և աղդաց վերականգնումն այս գիրքը, հիւանդութեան այս գեղագիրը արդեօք է՞ր մինչև ցարդ աշխարհաբար հայերենի չժարդմանեց մեր աղդը:

Ումանք կ'ըսեն թէ չայ կղերը հաւանիր այսմ, առ ահի մի գուցէ ժողովուրդը լուսաւորի: Ես կ'ըսեմ, պատճառն այն է, որ գեռ եւ կեղեցականք և ոչ-եկեղեցականք զդացած չեն թէ այս գիրքը ժողովրդեան մարմարոյն, խելքին և սրտին կենսաւորիչ հացն է:

Կիսոց պատճառանքն ալ գրաբարի սէրն է, կ'ըսուի: Կը խիթան թէ գրաբարն ի սպառ կը խափանի և կը թաղուի, եթէ եկեղեցւոյ

պաշտամնց մէջն ենէ, իրու իւր վերջին ապաստանաբանէն: Իբրև թէ դրաբարն վաղ կամ յապազ աղդին լեզուն ընելու համար՝ պէտք է որ եկեղեցեաց մէջ լսելի լինի:

Արդեօք այս սիսալ խորհուրդն ունեցող շատե՞ր կան:

Այն չէ այժմ խնդիր թէ գրաբարն ժողովրդական կարելի՛ է ընել թէ ոչ, պէտք է ընել թէ ոչ, կամ ինչ աստիճանաւ և փոփոխմանը լաւ է ընել: Խնդիրն աս է թէ Ա. Գրոց աշխարհաբար թարգմանութիւնը ձեռագույն արդելք չէ այնպիսի նպատակի:

Վասն զի գրաբարն միայն Ա. Գրոց մէջ չգտնուեիր, մեր ոսկի դարուն մատենագրութիւնը, զոր Հայը միշտ պիտի մեծարդէ ի սրտէ, ըրուն մատենագրութիւնը, զոր Հայը միշտ իրաւունք մի եւթէ կայ, պատճառը քրիստոնէութիւնն է:» Կիզօ ևս կ'ըսէ. «Ոչոք կրնայ ուրանալ թէ Քրիստոնէութիւնը լուսաւորութեան առաջնորդեղաւ . . . քանդի մարդոց զդացմունքը փոխեց, և նոցա միտքն ու բարոյականութիւնը դաեց:»

Միթէ նոր մատենագրութիւնը պատուականագոյն մասամբ գրաբարի գրկաց մէջ չէ: Միխիթարեան Հարք, մեր մատենագրութեան այն վերկենցաղյն պատճառք, գրաբարը չգործածեցի՞ն ընդհանարակէ: Հ. Բագրատունի, Հ. Հիւրմիւլ ևն քաջ մատենագիրը գըրապարին այնպիսի կենդանութիւն մի տուին, յայն բարձրութիւն վերացուցին զայն, որ ոչ ոք կարող է ուշիւ գիտել զայն առանց ըզմայլման:

Թող Աստուածաշունչը աշխարհաբար թարգմանուի, և եկեղեցւոյ մէջ աշխարհաբարը կարդացուի, որ ժողովուրդը շինութիւն առնու. յայնժամ գրաբարին կեանքը չվերջանար: Գրաբարը թաղելու որոշում խիստ գժուար է, օդուա, փառք, աղդակրտութիւն և կատարեալ լեզուի մի կարևորութեան զդացումն համագոչ կը ջանապահն զդացուին. վախ չկայ կորստեան:

Ա. Գրոց աշխարհաբարն ոչ միայն գրաբարին մահաբեր չէ, այլև, ընդհակառակն ինձ կը թուի թէ, նորա վերականգնման այնչափ նպաստաւոր է որչափ կարևոր է աղդին կանգնմանը:

Ա. Վասն զի չկայ գիրք մի, որ աղդի մէջ լեզու տարածելու այն որամագրութիւնն ունենայ, զոր ունին Ա. Գիրք. քանզի անիկայ կարդ մի մարդոց գիրքը չէ, ինչպէս ուրիշ գրքեր են, այլ անհայն կարէ: Փիլիսոփայն և ումիկն, ուսեալն և ոչն, ընչեղն և անինչն, առքէ: Իշխանութիւն և ասաւած աղդին կանգնմանը, իշխանն և իշխեցեան, մանուկն և ծեր, արուն և տէրն ու գերին, իշխանն և իշխեցեան, մանուկն և ծեր, արուն էդ առ հասարակ զայն ընթեռնոց պէտս ունին, և պիտի կարդան վաղին, եթէ այսօր ոչ: Ուրեմն Ա. Գիրքն, այնու զի իւրաքանչիւրի

սերտ և յատուկ վերաբերութիւն ունի, յարմար է ամէն դասու մէջ լեզուի մասին ընդհանուր օրինակ լինելու, և ազգեցութիւն տարածելու:

Աստուածաշունչն այնպիսի դիրք է, զոր ոչ միայն ամէն ոք պիտի ընթեռնու, այլ և յաճախ պէտք ընթեռնու, այնու զի նորա խորհուրդը անսպառ են, իմաստք նորանոր կը բխն, քաղցրութիւնն աճեցուն է, և մարդ ցկեանս կարօտ է զայն կարդալու: Շատ յարմար է ուրեմն լեզուի բարեկարդութիւն դործելու ազգի մէջ՝ սրտի բարեկարդութեան հետ:

Ս. Գրոց խորհուրդը և խնդիրը այնպիսի են, որոց վերայ ժողովուրդն առեղ պէտք բահանգէ: Շատ հետաքրքրական և ջերմ վիճաբանութեանց առիթ կուտան Ս. Գիրք, նաև մեծամեծ պատճառներ կ'ընծայեն լուրջ խորհրդակցութեանց այն ծանր խնդրոց վերայ՝ որ մարդկան աստի և անտի կենաց որպիսութեանը կը վերաբերին: Այն խնդրոց վերայ պիտի խօսի երբ եկեղեցւոյ մէջ դաս առնու, երբ բարեկամաց հետ խօսակցի, երբ ընտանեաց մէջ աշխատի ի բարոյական շինութիւն նոցա: Եւ քանզի այս խօսակցութեանց նիւթերն Ս. Գրոց պատճութիւնք, վարդապետութիւնք և մկրունքն են, բնական է որ նոյն Գրքին բառերն և ձևերն դործածեն, որով Ս. Գրոց քերականական ոճն ու լեզուն կը լինին ժողովրդական:

Երանի՛ թէ անյապաղ աշխարհաբարի թարգմանուէին Աստուածաշունչ Գիրք. Երանի՛ թէ Ս. Պատրիարք Հայրն և կրօնական ժողով այս խնդրոյն ուշ ընծայեն: Երանի՛ թէ Հայ երիտասարդուք, քաջեր, բողոքէին եթէ անհոգութիւնը դեռ շարունակէր:

2. ՍՈՒԲԲ ԳԻՐՔՆ ՀԻՄՆ ԼԻՆԻ ԴԱՍՏԻՄԱԿՈՒԹԵԱՆ

Զիք դաստիարակութիւն առանց Ս. Գրոց: Համարձակ կ'աղաղակեմ յունին ամենայն Հայոց, բարձրածայն կը դոչեմ ասիկայ աղդիս երիտասարդաց, վարժապետաց, խմբադիրներուն, վարժարանից տեսչութեանց և հոգաբարձուաց:

Առանց Աւետարանի ողին ի սիրոս ուսանողաց մուծանելու ջանից թերի են ամենայն ջանք. առանց Աստուածաշունչը ուսուցանելու աշակերտաց անհիմն են ամենայն ուսմունք, վասակար և կործանիչ խիլ են: Քրիստոնէական ողին է կեանք մարմար, իմացականութեան և կամաց. ապա առանց Քրիստոսի Գրքին ճշմարտութիւններն իրեւ աղ, իրեւ համ, իրեւ սնունդ խառնելու մարմ-

նական և իմացական դիտութեանց հետ, նոքա ամենայն թափուր կը մնան ի զօրութենէ և ի մննդենէ, նոցա զօրութիւնը թունաւոր կը լինի Հայ կեանքին:

Այս ճշմարտութիւններն դառն թէ քաղցր, ինչպէս ալ թուին, ճշմարտութիւն են, ցուցինք ասիկայ: Վերատին հաստատելու պէտք չկայ:

Ս. Գիրքը բոլոր Հայ վարժարանաց մէջ անհրաժեշտ դասագիրք պէտք է լինի: այո՛, նոյն իսկ Ս. Գիրքը, թէ և ուրիշ կրօնական գրեան գտնուին: կրօնական կամ բարյական դաստիարակութեան բուն աղբիւրը Ս. Գիրքն է, զայն աշակերտաց ուսուցանել պարտ է հանապազորեայ և կանոնաւոր դասատառութեամբ, և այն ոչ իրը վերացեալ գիտութիւն, այլ իրեւ գործնական առաւել քան զայլ ուսմունքն ստունս:

Սուրբ Գրքէն դաս պատրաստել պարտին աշակերտք, դասատուն հարցաքննէ, բացատրութիւնն ընէ, յորդոր կարդայ, վարուց սկզբունքն պարզէ, տայ ի միտ առնուլ, և երբեմն ճառի նիւթ տայ Ս. Գրքէն, որ առիթ լինի Ս. Գիրք քննելու: Դասատուք պարտին յասուկ խնամով տպաւորել ի միտս աշակերտաց Ս. Գրոց հիմնական վարդապետատառութիւններն և սկզբունքներն, թէ մարդ անկերալ է, թէ նորա կանդնումն ինչ զօրութեանց կարօտ է, թէ այն զօրութիւններն սասանալու ինչ միջոցներ կան, թէ ո՞վ է մարդկային աղդին բարեկարն և փրկիչ, ո՞վ է մարդկային կատարելութեան տիպար և օրինակ գերազանց, որում պարտին հետեւիլ:

Երբ, ո՞վ անկերալ հայութիւն, քո գտաերք և ուստերք Աստուածաշունչ ճշմարտութեամբք և ողովով պարաբերալ ելանեն վարժարանի գրկէն, այն նախակըրթարանէն, և մոնեն կը թութեան բուն հրապարակն ու դպրոցը, յաշխարհ, դիացիք որ նոքա ճշմարտ մարդկարարակի ու պիտի գիմեն անդադար, և պիտի փառք լինին ազգին և կութեան պիտի գիմեն անդադար, գիտութեան աշխարհի աշխարհի: Գիտութեան որ նոքա պիտի կարենան աշխատիլ աշխարհի աշխարհի համար, օգնել ընկերաց, սիրել զիրար, բարեկարել աղբարուցն զամանակ, գոհել ժիր գործունէութեամբ: Նոքա պիտի կարող լինին համաշունչ և համակիր լինել յարաւել յաշխատութիւնս, յաղթել դժուարութեանց, տոկալ նեղութեանց, առանել աղիտից ի սէր բարեկին, զոհել զժամ, զդրամ և զկեանս յօդուա ազգի և աշխարհներին, կամաց կը հետեւին, Յիսուս, որում կը նային, սիրալիր և անձնանուէր էր, կատարեալ էր:

Բարէ, ո՞ւ էր որ մեր վարժապետք երկնէին վարժարանաց ուսուցիչներն ծնանել առողջ, կորովամիտ և մանաւանդ Քրիստոնէայ Հայէ:

3. ԿԻՐԱԿԻՆՈՐԵՍ. ՎԱՐԺԱՐԱՆՔ

Կիրակնօրեայ վարժարանք ևս գլխաւոր միջոց են Քրիստոնէական ուսմունքն և ողին աղդին մէջ տարածելու : Սակայն մի՛ լիցի կարծել այն կիրակնօրեայ վարժարաններն , ուր թուաբանութիւն , Քերականութիւն , Տրամաբանութիւն և նման դասեր կը տրուին : Կիրակնօրեայ վարժարանի նպատակն պիտի լինի Աստուածաշունչ ուսուցանել :

Այս ուսումն պիտի աւանդուի նախ Եկեղեցւոյ մէջ Եկեղեցին ոչ միայն միասնական փառաբանութեան տեղի է , այլև կրօնի ճշմարտութեանց սեղան մի հօն պէտք է գանէ ժողովուրդն , որ անկէ վայելերվանունդ ընդունի : Ուստի կիրակնօրեայ պաշտաման մէկ մասն պէտք է լինի : Եկեղեցականք Աստուածաշունչին կանոնաւոր դաս տալու են :

Նաև ցերեկը գեռահասից համար դաս լինի նոյնպէս Աստուածաշունչին , և դասաստոք լինին դպրոցաց վարժարաններն կամ Եկեղեցականք :

Եւրոպական աղդաց ոմանց և Միացեալ Նահանգաց մէջ կիրակնօրեայ վարժարանաց մեծ կարեւորութիւն կը տրուի . քանի՛ մեծադադանձ վաճառականք և նշանաւոր դիտունք այսպիսի վարժարանաց մէջ կը դասատրեն մեծ եռանդեամբ : Եւ կիրակի օրեր ամէն քաղքի մէջ հաղարաւորք կը փութան ի լուր կիրակնօրեայ դասուց :

Ճշմարիս է որ յոյժ սակաւաթիւ են Հայ Եկեղեցականք որ կարող լինին օդտակար կերպով ժողովրդեան դաս տալ յեկեղեցւոշ . սակայն կան վարժապետներ , որ կրնան կիրակնօրեայ վարժարան հաստատել և դասատրել . Երանի՛ թէ դոնէ այս վերջինք վութային ի դործ :

4. ՋԱՌԱՆԳԱԿՈՐՅ. ՎԱՐԺԱՐԱՆՔ

Ինչ թանձր խաւար կը ծածկէ Հայ կղերն , հաղուադիւտ բացառութեամբ : Ժողովուրդը Եկեղեցւոյ մէջ ուրիշ բանէ ոչ , այլ միայն պաշտօնէից քարոզէն և դասէն կրնայ օդտիւլ . վասն զի երդոց և ազոթից լեզուն գրաբար է , և շատ տեղ գրաբարէն անդին բան մի , զոր ժողովուրդն չէ կարող հասկնալ . և ոչ յոյս կայ որ ժամանակ մի յետոյ հասկնայ : Ի վորձոյ դիտեմ զայս . ոչ սակաւ տարիներ քերականութիւն ուսած և դրականութեան մէջ բաւական յառաջական ծագած պատանեաց խօսքեր հարցած եմ շարականներէ , չեն կազադիմած պատանեաց խօսքեր հարցած եմ շարականներէ , չեն կա-

րացած թարգմանել . քանի մի ժամ խորհելով : Քանի՛ քահանայ կը ընանք գտնել որ կարենայ այն խրթին համարներն թարգմանել : Ո՞ւրիշ մնայ հասարակ ժողովուրդը , որ ոչ ուսած է , ոչ ժամանակ ունի կը մասնակի վերայ մուածելու , և ոչ խակ յստակ լսել եղանակին պատճառաւ :

Ուրեմն քարոզութենէ շինութիւն պիտի ընդունի ժողովուրդը , քարոզիչք սակաւաթիւ են , և օրինաւոր քարոզիչք ըուլոր աղդին մէջ քանի մի հատ : Կուտան վարդապետներ և քահանայք ու մանք քարոզ , սակայն զնոյն կը յեղյեղեն ամ ըստ ամէ . լսելիք կը խոնջին , խակ սիրաք և միտք անդգայ և անպատուղ կը մնան :

Այս պատճառաւ ժառանգաւորաց լաւ վարժարաններ պէտք են աղդին , որպէսզի Եկեղեցական օրինաւոր պաշտօնեաններ պատրաստուին , կարենան քարոզել և դասեր տալ Եկեղեցեաց մէջ օդտակար Եղանակաւ :

5. ԾՆՈՂ. ԻՐԵՆՅ ՔԱՀԱՆԱՑԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԸ ԿԱՏԱՐԵՆ ԸՆՏԱՆԵԱՅ ՄԷջ ԾՆՈՂ. ԻՐԵՆՅ ՔԱՀԱՆԱՑԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԸ ԿԱՏԱՐԵՆ ԸՆՏԱՆԵԱՅ ՄԷՋ

Քանի՛ սակաւաթիւ են այն հայրեր , որ իրենց պարտուց ընդարձակ սահմանք կը ճանաչեն : Հարք , ընդհանրապէս , այնպէս կ'ընարձակ սահմանք կը ճանաչեն : Հարք , ընդհանրապէս , այնպէս կ'ընարձակ սահմանք կը ճանաչեն : Հարք , ընդհանրապէս , այնպէս կ'ընարձակ սահմանք կը ճանաչեն : Հարք , ընդհանրապէս , այնպէս կ'ընարձակ սահմանք կը ճանաչեն : Հարք , ընդհանրապէս , այնպէս կ'ընարձակ սահմանք կը ճանաչեն : Հարք , ընդհանրապէս , այնպէս կ'ընարձակ սահմանք կը ճանաչեն : Հարք , ընդհանրապէս , այնպէս կ'ընարձակ սահմանք կը ճանաչեն : Հարք , ընդհանրապէս , այնպէս կ'ընարձակ սահմանք կը ճանաչեն : Հարք , ընդհանրապէս , այնպէս կ'ընարձակ սահմանք կը ճանաչեն : Հարք , ընդհանրապէս , այնպէս կ'ընարձակ սահմանք կը ճանաչեն : Հարք , ընդհանրապէս , այնպէս կ'ընարձակ սահմանք կը ճանաչեն : Հարք , ընդհանրապէս , այնպէս կ'ընարձակ սահմանք կը ճանաչեն :

Ուշափ կարեւոր է որ ճանաչեն ճնողք թէ ընտանեկան կաղմակերպութիւնն առաւել բարձր ու վեհ նպատակ ունի , թէ ընտանիք կերպութիւնն առաւել բարձր ու վեհ նպատակ ունի , թէ ընտանիք որովայն է ուր աշխարհի ապագայն ի յզութիւն , ի ծնունդ և ի զարգացումն կու դայ . թէ ճնողաց վարուց աղդեցութիւն զաւակաց միզագումն կու դայ . թէ ճնողաց վարուց աղդեցութիւն զաւակաց միզագումն կու դայ . թէ ճնողաց վարուց աղդեցութիւն զաւակաց միզագումն կու դայ . թէ ճնողաց վարուց աղդեցութիւն զաւակաց միզագումն կու դայ . թէ ճնողաց վարուց աղդեցութիւն զաւակաց միզագումն կու դայ . թէ ճնողաց վարուց աղդեցութիւն զաւակաց միզագումն կու դայ . թէ ճնողաց վարուց աղդեցութիւն զաւակաց միզագումն կու դայ . թէ ճնողաց վարուց աղդեցութիւն զաւակաց միզագումն կու դայ :

Զէ ինչ գժուարին նկատել թէ աղդի մը առողջութեան կամ ֆիղիդական շինուածոյն , հարստութեան , աճման , ևն , վիճակը ընտանեկանէն կախեալ է : Ծնտանեկան աճմարդութիւնը , աճրաբերան նկատութիւնը , վաղակատար ամուսնութիւնը , նորասիրութիւնը , խառնութիւնը , վատթար ընտանեվարութիւնը , գժուարին ընդհանրապէս , ահա այսպիսի են պատճառաւ :

վատառողջութեան և աղքատութեան . ընտանեաց ծոյին մէջ են այս պատճառներ, ոչ թէ կառավարութեան մէջ. ուրեմն ընտանեան կան կացութիւնը բարւոքել պէտք է: Ամէն մարդ իւր բնաւորութեան հաստագոյն գծերն ընտանեկան յարաբերութեանց մէջ կ'ընդունի ի տղայ տիս, վարժարանի ազդեցութիւնը երկրորդ է:

Արդ, ճշմարիտ ընտանիք կազմելու համար Աւետարանի դաստիարակութիւնը հիմն գնել պէտք է, ուրիշ միջոց չկայ : Քան զիւետարան, ուր Յիսուս կը հրամացէ ձրի և առատ հայի նշխարներն ժողովիլ որ չկորնչին, ի՞նչ կայ ազդուագոյն ի դարման շոայութեան : Ի՞նչ լաւագոյն գեղ պճնասիրութեան և ճոխաճանութեան ընտանեաց քան ճանաչել տանուտէր իրենց զթիսուս, որ չոնէր սեպիական տեղ ուր դնէր իւր գլուխ: Ո՞ր այր այնպէս եռանդագին և անճնուրաց սիրով կընայ սիրել զիին, ինչպէս եթէ օրինակ իւր սիրոյն ունենայ զթիսուսին, որ դրաւ զանձն ի փրկութիւն աշխարհի : Ո՞ր կին այնպէս կընայ հնազանդիլ, որպէս այն որ կը չանայ օրինակ առնել ինքեան եկեղեցւոյն առ Քրիստոս հնազանդութիւնը : Արդարե ընտանիք մի, որ Աւետարանի լցուը կը վայելէ և զայն իւր օրինագիրքն ըրած է, երիցս երջանիկ և դրախտի ընտանիք է :

Եւ ո՞վ է այն, որ զընտանիս պիտի հովուէ Ս. Աւետարանի մարդաց և մարմանդից վերայ: Ծնողք, և մանաւանդ հայրը: Ծնողք ո՞րչափ մեծ և կարեւոր դործ կը դործեն յօգուտ զաւակաց, եթէ նոցա միտքը կանուխ պարարեն Աւետարանի սկզբամբք: Եթէ կըթեն զնոսա յազօթս և շարժիլ ի ներկայութեան երկնաւոր Հօր:

“Ծնողական դաստիարակութեան մէջ,” կ'ըսէ Խրիմեան Հայրիկ, “առաջին մեծ դաս և առաջին մեծ դիտութիւնը կրօն և Աստուածաշունչն մատեանը:” Պէտք է որ հայրն իւր ընտանիք հաւաքէ իւր շորջ կարդայ Աստուածաշունչն մաս մի, խօսի և խօսակցի ընտանեաց հետ, հարցանէ մանկուոյն, բացարէ, և ի դիմաց ընտանեաց ազոթիւք չնորհակալութիւն, խօսուվանութիւն և խնդիրք մատուցանէ Աստուծոյ: Կըթէ նաև զմանկախն ի թոթովիլ ազօթս առ Հայրն երկնաւոր: Այս է հօր քահանայական պաշտօն: Որպիսի՛ օրհնութիւն պիտի լինի այս թէ՛ ընտանեաց և թէ՛ ազգին:

“Ես” կ'ըսէ, Հայր Հիսունթ անուանի գաղիսացի քարողիչը, “Երկու անդամ Անդղիա գտնուած լինելով, այս եղբակացութեան եւ կած եմ թէ այն երկին զօրութիւնն Աստուածաշունչն է: Հոն տեղած եմ թէ աղճէստաւոր և վաճառական մարդուցէ շատերն, երբ

իրենց դործերէն կամ առուտուրէն տուն կը դառնան, իրենց կանայք ու զաւակունքն առնլով կրակարանին դլուխը կը նստին և անոնց Ա. Գիրք կը կարդան, և անկէ իրենց պարտականութիւններն կ'ուսանին: Ես այնպէս կը հաւատամ թէ այն ազդին և ուրիշ Բողոքական ազգաց զօրութիւնն ըստ մեծի մասին այս բանէն է: Գիշտէք, ինչու համար բրուսիացիք յաղթող կը լինին ի պատերազմի: ոչ վասն զի նոցա զէնք լաւագոյն են, այլ այնու զի նոցա դաստիարակութիւն լաւագոյն է քան զհակառակորդացն: Նոցա կրօնական կըթութիւնն ալ գերազանց է քան զմիւմներունը: Վասն զի ամէն բրուսիացի զինուոր իւր ծոցը Ա. Գիրք մը ունի և կը կարդայ:” Ուրեմն ոչ միայն բանը այլև փորձը կը հաստատէ թէ Աւետարանի դաստիարակութիւնը զօրութիւն է ընտանեաց և ժողովրդոց: ուստի մեր ազգը պարտի այս միջոցն ալ ձեռք առնուլ ի զօրութիւն և ի կենացանութիւն իւր, և ի դարման ընտանեկան զեղծմանց:

“Ծնուանեաց հիւանդութեան գեղը կը փնտուէ՞ք,” կ'ըսէ դարձեալ չ. Հիսուսինթ, “կանգնեցէք նորա սեղանը, սկսեցէք ձեր քահանայութիւնը, զօրացէք ի հաւատու, կըթեցէք, սեղանին շուրջը ժողվեցէք ձեր զաւակունքն և կինը և ազօթեցէք որ ձեր այդ տան գըլուխ լինելն յայտնուի երկնից և երկրի:”

ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

“Գրեցի Զեզ, Երիտոսսորդք, Զի Էֆ Դնիր ՀԶՕՐԱՅԵԱԼՔ:”

Աղմխ եղբայրներ,

կը յուսամ թէ ձենէ իւրաքանչիւրն նկատեց անձին մասնաւոր վերաբերութիւնը ճառսի բոլոր ընթացից մէջ: Եթէ կային դիտութիւններ որ դպրոցական ուսմանց և կարդաց վերաբերելով վարժանեւաց անկ թուեցան, և ձեղ անկ են նոքա, զի և դուք կամ վարժապետ եք, կամ վարժապետի բարեկամ, կամ դպրոցաց հոգաբարտածու, կամ հոն ձեր եղբայրներ կ'ուսանին: Եթէ ծնողական պարտք ցուցի, և դուք ծնող պիտի լինիք կամ էք. և ծնողաց բան հասկցնել կարող էք: Եթէ ուրիշ միջոցներ ցուցի բարեկարդութեան որ միաբանութեամբ կամ պաշտօնապէս դործուելու բաներ են, այն 40

մասին կրնաք առանձինն և հրապարակաւ խօսիլ, համոզել, պահանջել:

Եթէ կը համոզուիք թէ ի բարեկենդանութիւն աղղին այս կամ այն միջոցն անհրաժեշտ կամ նպաստաւոր է, ժրութեամբ և եռանդեամբ աշխատեցէք. զգօնութեամբ խորհեցէք. անհոգ լինել վտանդաւոր է: թէ և ընկեր չգտնեք, կրնաք իւրաքանչիւր գործել առանձինն ի սկզբան. յիշեցէք աշխարհի պատմութիւններն. Քէ մարդ ինչեր կը մայ ընել, և անձնիւր ոք ի ձէնջ հարու է մեծամեծս գործել:

Սակայն սկզբունք ըրէք ձեղ յանձնէ՛ սկսանիլ բարեկարգութիւնը. մի մոռնաք դուք զձեղ: Զեր համոզումն նախ ի ձեղ իւր պըտուղներն արտադրէ: Նախ դուք խմեցէք այն աղբիւրէն, ուստի ըմպել կը հրաւիրէք զայլս: Նախ ձեր վիրաց վերաց դրէք այն սպեզանին, զոր գնել կը պատուիրէք ձեր եղբարց. յայնժամ պիտի հաւատ ընծայեն ձեր բանից և պիտի հետևին: Այս, եղբայրներ, բացէք, կ'ըսեմ, Սուրբ Գիրքը. ձեր քսանեչորս ժամուն մին չեմ ըսեր, այլ մէկ քառորդ ժամը գոնէ տուէք այն վսեմ գրքին, այն մեծառքանչ տիեզերն զննելու, այն աստուածային խմաստութեան գեղափայլ ճառագայթիւք ձեր միտքը լուսազարդելու. այն աստուածային կենսաբուղիս ստեանց կաթը ծծելու: Եւ բացէք ձեր ձեռքերն, բացէք ձեր սրտերն, ձեր ասրակոյսներն ու հոգերն, ձեր իղձերն ու մոլութիւններն, թափեցէք հզօր և բազմագութ չօր առջեւ, և պարեցէք նորա օրհնութեամբ ձեր հոգին և ձեր մարմին:

Եթէ այսպէս պատրաստուիք հանապաղորդ կը թութեամբ, եթէ վերին ճշմարտութեամբ զինեալ վերին զօրութեամբ զրահիք, ձեր պիտի լինի յաղթութիւն, եղբայրներ, ձեր պիտի լինի յաղթութիւն, չայ զինուորներ:



ՑԱՆԿ


| | ԵՐԵՎ | 5 |
|--|------|----|
| ՊԼ. Ա. Մարմնական զօրութիւն | " | 8 |
| 1. Մարմնամարդութիւն | " | 12 |
| 2. Մարդակաղմութիւն. | " | 44 |
| ՊԼ. Բ. հմացական զօրութիւն | " | 18 |
| 1. Մասւորական փիլիսոփայութիւն. | " | 23 |
| 2. Բանաստեղծութիւն. | " | 27 |
| ՊԼ. Գ. Բարոյական զօրութիւն. | " | 32 |
| Դարմանք ախալից | " | 44 |
| Նախ, անզօր դարմանք | " | " |
| 1. Փիլիսոփայութիւն | " | " |
| 2. Ուսմունք եւ զիտութիւնք | " | 50 |
| Երկրորդ, լիազօր դարմանք ախալից | " | 56 |
| 1. Ճշմարտութիւն | " | " |
| 2. Զօրութիւն ի բարձանց | " | 39 |
| Ա. Ընթերցումն | " | 60 |
| Բ. Աղօթք | " | 61 |
| Ցիսուսի դարմանին արդիւնք | " | 62 |
| 4. Առողջութիւն | " | 63 |
| 2. Հարստութիւն | " | " |
| Եղբակացութիւն երից գլխոց | " | 66 |
| Միջոցք ժամանելոց առ վախճանն | " | " |
| 4. Աշխարհաբար Ա. Գիրք | " | " |
| 2. Ա. Գիրք հիմն լինել գաստիարակութեան | " | 68 |
| 3. Կիրակնօրեայ վարժարանք | " | 70 |
| 4. Ժառանգաւորաց վարժարանք | " | " |
| 5. Ծնողք իրենց քահանայական պաշտօնը կատարեն ընտեաց մէջ. | " | 71 |
| Վերջաբանութիւն | " | 73 |

11/18 Fair Day by ~~Frigg~~
30^s for 2nd day off & surgeon
for 30^s day on sick \$ 85-
Dumb off for 2d day by ~~long~~
\$ 85 Robt W.

For Ward, Prof. Long my 1st and 2nd &
3rd prof. temporary expenses of
Prof. Prof. Long & my self
if Prof. Prof. Long & my self
if am my self in Prof. Long's
Long my 1st and 2nd & 3rd
of myself & money of Long
in my office & my own &

Leng wy a gift of Pipp w-y
[804.]

L



Lil
748